



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾ

ՇՄԱՌԳ հաշվետվություն

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարան
Պատվեր՝ N ՀՀԿՄԼՀ-ԳՀԱՇՁԲ-21/9-1

ՏՆՕՐԵՆ՝

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

Երևան 2022

ԳԻՐՔ 1	
ՏԵՔՍԱՅԻՆ ՄԱՍ	
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.....	7
Հայեցակարգային դրույթներ	7
Գլուխ I.....	11
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	11
1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ.....	11
1.1.1. Տնտեսությունը:.....	13
1.1.2. Պատմական տվյալներ.....	14
1.1.3. Լեռնանիստի բնակչության փոփոխությունը	16
1.2. Բնական պայմանները և ռեսուրսները:.....	16
1.2.1. Ջրագրություն	17
1.2.2. Կլիմայական պայմաններ.....	17
1.2.3. Երկրաբանական կառուցվածք, հիդրոերկրաբանական պայմաններ և օգտակար հանածոներ.....	19
1.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	20
1.3.1. <u>Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ.....</u>	<u>21</u>
1.4. Կենսաբազմազանությունը /4, 5, 6/.....	23
1.4.1. Բուսական աշխարհ.....	24
1.4.2. Կենդանական աշխարհ.....	30
1.4.3. Բուսական աշխարհի պահպանություն	34
1.4.4. Կենդանական աշխարհի պահպանություն	35
1.5. Զբոսաշրջության զարգացման նախադրյալներ.....	36
1.5.1. Զբոսաշրջային ռեսուրսներ	36
1.5.1.1. Բնակլիմայական պայմաններ.....	36
1.5.1.2. Պատմամշակութային հուշարձաններ.....	36
1.5.1.3. Բնության հուշարձաններ	42
1.6. Հողային ռեսուրսներ	43

1.7. Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատակագծային սահմանափակումների համակարգը	45
1.8. Տարածքի տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարները	45
1.8.1. Ակնկալվող արդյունքներ	46
1.9. ԼԵՌՆԱՆԻՍ ՊՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ	46
1.9.1. Մթնոլորտային օդի պահպանություն	46
Մեթոդակարգային մոտեցումներ	46
1.9.2. Ֆոնային աղտոտվածություն	47
1.9.3. Մթնոլորտի աղտոտման աղբյուրները	47
1.9.4. Տարածքի համալիր գնահատականը	49
1.9.5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն	49
1.9.6. Գյուղի ջրամատակարարման և կոյուղու ներկա իրավիճակը և ջրամբարների աղտոտվածության ցուցանիշները	49
2.0. Թափոնների կառավարում	50
2.1. Աղբավայրեր	50
2.2. Արդյունաբերական թափոններ	50
2.3. Գերեզմանատներ	50
2.4. Հողերի պահպանություն	50
2.5. Աղմուկի մակարդակի գնահատում /12,13/	51
2.6. Էլեկտրամագնիսական ճառագայթում	52
2.7. Կանաչապատման համակարգ	52
2.8. Բնակչության կենսակերպի բժշկա-աշխարհագրական վերլուծությունը	52
2.9. Հողերի ռեկուլտիվացիա	53
ԳԼՈՒԽ 2 ԼԵՌՆԱՆԻՍ ՊՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	54
2.1. Հեռանկարային տնտեսական և տարածքային զարգացման հայեցակարգ	54
2.1.1. Բնակավայրի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները	55
2.1.2. Բացեր, կարիքներ և Լեռնանիստ բնակավայրի զարգացման մասով առաջարկություններ	55
2.2. Հեռանկարային հատակագծային կառուցվածք	59

2.3.	Գյուղի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	71
2.4.	Արդյունաբերական զարգացման հեռանկարները.....	72
2.5.	Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հնարավորությունները.....	73
2.6.	Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային զարգացումը.....	74
2.6.1.	Հեռանկարային զարգացման հայեցակարգ.....	74
2.7.	Աճի բևեռներ	77
2.8.	Նախատեսվող համալիր զարգացման միջոցառումներ.....	79
2.9.	Հասարակական սպասարկման և սոցիալական ոլորտ	80
2.10.	Բնակչություն.....	82
2.11.	Ճանապահային ցանց	83
2.12.	Հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխությունը և կառուցապատման հերթականություն	84
2.13.	Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքներ	88
2.13.1.	Ջրամատակարարում.....	88
2.13.2.	Ջրահեռացում.....	91
2.13.3.	Էներգամատակարարում.....	95
2.13.3.1.	Էլեկտրամատակարարում	95
2.13.3.2.	Գազամատակարարում	97
2.13.3.3.	Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ	99
2.13.4.	Հեռահաղորդակցություն.....	100
	ԳԼՈՒԽ 3 ԼԵՌՆԱՆԻՍԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	100
3.0.	Մթնոլորտային օդի պահպանություն.....	101
3.1.	Մթնոլորտային օդի աղտոտվածության կանխատեսվող.....	102
	մակարդակները	102
3.2.	Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ	103
3.3.	Տարածքի համալիր գնահատականը.....	103

3.4.	Մակերևութային ջրերի պահպանություն.....	103
3.5.	Ջրային պաշարների պահպանական միջոցառումների վերաբերյալ հիմնական որոշումները 104	
3.6.	Թափոնների կառավարում.....	104
3.6.1.	Աղբավայրեր.....	104
3.6.2.	Կենցաղային թափոններ	105
3.7.	Հողերի պահպանություն	106
3.8.	Աղմուկի մակարդակի գնահատում	106
3.9.	Կանաչապատում.....	106
	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	108
3.10.	Գերեզմանատներ	109
3.11.	<u>Նախագծի այլընտրանքը</u>	109
3.12.	<u>Շրջակա միջավայրի մշտադիտարկումների պլան</u>	109
	ԳԼՈՒԽ 4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	111
	Ներածություն.....	111
4.1.	Ընդհանուր բնութագիրը.....	112
4.2.	Բնական վտանգավոր երևույթները.....	112
4.3.	Տեխնածին վտանգներ	112
4.4.	Նախագծի հիմնական դրույթները	113
4.5.	Համայնքի հակաճառագայթային թաքստոցները և ապաստարանները	114
4.6.	Բնակչության ազդարարումը և իրազեկումը	115
4.7.	Համայնքի բնակչության պատասպարումը.....	115
4.8.	Բնակչության տարահանումը.....	117
	ԳԼՈՒԽ 5.....	121
	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ	121
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	121

5.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ	121
5.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը.....	121
5.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը.....	121
5.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր.....	122
5.5. Գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները.....	122
5.6. Գոտևորման նախագծի կազմը.....	122
5.7. Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ.....	123
5.8. Գոտիներում թույլատրելի օգտագործման ձևերի ամփոփ աղյուսակ.....	137
5.9. Գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչները	149
5.10. Լրացուցիչ պահանջներ	153
5.11. Կառուցապատման կանոններ.....	153
5.12. Տերմիններ և սահմանումներ	157
Հավելված 1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ	159
Օգտագործված գրականության ցանկ.....	159
Հավելված 2 Տեխնիկական բնութագիր-առաջադրանք	161
Հավելված 3 ՀՀ Կոտայքի մարզի Լեռանիստ համայնքի տարածքի ինժեներատրվագրաբանական պայմանները	164
Հավելված 4 Աղետների ռիսկերի կառավարում	166
Հավելված 5 Պատմության և մշակույթի հուշարձանների պայմանակարգեր	167
Հավելված 6 Ատտառային հողերի փոխադրվող հողամասերի հատակագծեր.....	180
Հավելված 7 Սպանդանոցներին ներկայացվող պահանջներ	182
.....	196

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն, և փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի (Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղի) պարզեցված գլխավոր հատակագծի նախագիծը մշակվել է համայնքի ավագանու որոշմամբ¹, (ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք (Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղ), Հասցե՝ գ.Լեռնանիստ, 1-ին փողոց 52 շենք, էլ. փոստ lernanist.kotayq@mta.gov.am):

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ՝ Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

Հայեցակարգային դրույթներ

Հիմնադրությային փաստաթղթի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

¹ Տեխնիկական բնութագիր-առաջադրանքը տրված է Հավելված 2-ում

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլված են համայնքի տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումների վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և պետական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- ՀՀ ջրային օրենսգիրքը:
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 1059-Ա որոշումը (25 սեպտեմբերի 2014 թվականի) Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին:
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 781-Ն որոշումը ((31 հուլիսի 2014 թվականի) Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին:
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-Ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ):
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):

• ՀՀ կառավարություն 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն որոշում ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին:

• ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Լեռնանիստին վերաբերող ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

• ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

• «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

• Տնտեսության կայուն զարգացում՝

- Արդյունաբերություն,
- Գիտատար արդյունաբերական արտադրություն,
- Ագրոարտադրական համալիր,
- Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
- Փոքր և միջին բիզնես,
- Բնապահպանական միջոցառումներ:

• Քաղաքաշինության կայուն զարգացում՝

- Բնակելի շինարարություն,
- Բնակելի-կոմունալ շինարարություն,
- Լանդշաֆտի ուսցիոնալ օգտագործում,
- Բնապահպանական միջոցառումներ:

• Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝

- Տրանսպորտ,
- Ջրամատակարարում, ջրահեռացում, կեղտաջրերի մաքրում,
- Էներգամատակարարում,
- Թափոնների օգտահանում,
- Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

- 1) Համայնքի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 3) Արդյունաբերության զարգացում
- 4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
- 6) Համայնքի բնապահպանական իրավիճակի բարելավում

- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
- 11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Գլուխ I

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախագծի շրջանակում համայնքի տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող հատակագծային միավորների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի և համայնքի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Տարբեր նպատակային նշանակության հողօգտագործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրի սահմանում,
- Ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը և դրանց իրականացման գործընթացի վերլուծություն:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

Ընդհանուր տվյալներ

Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց, մանկապարտեզ

Մշակութային հաստատություններ - մշակույթի տուն

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնաբուծություն, դաշտավարություն

Կոտայքի մարզ, մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր Հայաստանում: Միակ մարզն է, որը միջպետական սահման չունի Հայաստանի հարևան որևէ պետության հետ: Կոտայքը միաժամանակ նաև այն չորս մարզերից մեկն է, որոնք անմիջապես հարում են մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզն իր մեջ ընդգրկում է Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական շրջանները: Վարչատարածքային միավորը զբաղեցնում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Կոտայք, Մազազ, Նիգ, Վարաժնունիք, Արագածոտն գավառների մի մասը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում նրա մոտավոր սահմաններն են եղել Գեղամա և Ծաղկունյաց լեռներից մինչև Արարատյան դաշտն ընկած սահմանները: Տեղական ժամանակով նույնիսկ ներկայիս քաղաքամայր Երևանը մտել է Կոտայքի վարչատարածքային միավորի մեջ: Պատմամշակութային և հնագիտական արժեքները հիմք են տալիս հետևյալ եզրահանգմանը՝ Կոտայքի ներկայիս մարզի տարածքը մարդկային քաղաքակրթության զարգացման օրրաններից մեկն է: Ըստ որոշ վարկածների՝ Կոտայք անվանումն առաջացել է Խոսրով Կոտակի անունից, իսկ շատ ավելի հեղինակավոր մասնագետներ ու պատմագրական աղբյուրներ Կոտայք անվանը վերագրում են էթնիկական ծագում: Ըստ ուրարտական արձանագրությունների՝ մարզի տարածքն ընդգրկվում էր Էթիունի (Էթիունե) խոշոր ցեղային միության տիրապետության մեջ: Արշակունիների ժամանակ մարզի հիմնական տարածքը հանդիսացել է արքայական ոստան: Իսկ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Կոտայքի Արամոնս գյուղը եղել է կաթողիկոսական կալված: Բագրատունիների ժամանակ մարզի տարածքի մի մասը շնորհվել է Պահլավունիներին: Հետո այն պատկանել է Իվանե Զաքարյանին և նրան ենթակա հայ իշխաններին: 591թ. բաժանմամբ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև է բաժանվել նաև Կոտայքի գավառը: 7-րդ դարի երկրորդ կեսից այն եղել է Գրիգոր Մամիկոնյան իշխանի իրավասության տակ: Սելջուկ-թուրքերի տիրապետությունից հետո, 12-րդ դարի վերջից 13-րդ դարի 30-ական թվականները, այն եղել է Զաքարյանների գերիշխանության ներքո: 13-րդ դարից մինչև 15-

որ դարի սկիզբը այստեղ տիրել են Պոռոշյան-Խաղբակյան իշխանները, իսկ որոշ տարածքներ պատկանել են Օրբելյան ընտանիքին, մասնավորապես Էլարի շրջանը: Այնուհետև Կոտայքում տիրել են թուրքմենական ադ-կոյունլու, կարա-կոյունլու ցեղերը, որից հետո այն եղել է Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ: 1604թ. Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ հազարավոր ընտանիքներ են տեղահանվել նաև Կոտայքի տարածքից: Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, մինչ ՀԽՍՀ Վարչատարածքային բաժանումը, (1930թ.) մարզի տարածքը մտնում էր Նոր Բայազետի, Էջմիածնի և Երևանի գավառների մեջ: Կոտայքի մարզը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Հայկական հեյլենիստական ճարտարապետության անկրկնելի մարգարիտն է արեւի աստված Միհրի պատվին կառուցված Գառնիի տաճարը (1-ին դար): Հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող է Այրիվանք-Գեղարդը: Բազիլիկ և ուշ շրջանի քրիստոնեական գեղեցիկ տաճարներ կան Ողջաբերդում, Եղվարդում, Արամուսում, Պտղնիում, Ծաղկաձորում, Բջնիում և Մեղրաձորում: Մարզի մի շարք տեղանուններ կապված են հայկական հնագույն ազգային պատմությունների հետ:

Մարզի տարածքն ընդգրկում է Կոտայքի սարավանդը, Մարմարիկ գետի ավազանը, Հրազդան գետի ավազանի վերին ու միջին հատվածը, ինչպես նաև Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերը: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Կոտայքի մարզի վարչական կենտրոնը Հրազդանն է: Ամենամեծ քաղաքն Հրազդանն է: Կոտայքի մարզը զբաղեցնում է 2,092.23 կմ² տարածք (8-րդը Հայաստանի մարզերի շարքում): Ըստ 2011 թվականի տվյալների՝ մարզի բնակչությունը կազմում է 254 397 մարդ:

Կոտայքի արևմտյան մասը նախկինում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք, իսկ արևելյանը՝ Մազազ գավառների մեջ: Ներկայիս վարչատարածքային միավորը ձևավորվել է Հայկական ԽՍՀ-ի մաս կազմող Աբովյանի, Հրազդանի և Նաիրիի շրջանների միավորման հետևանքով: Կոտայքի մարզը խորհրդային տարիներին ունեցել է զարգացած մեքենաշինական, հաստոցաշինական արդյունաբերություն, որն այժմ գրեթե վերացել է:

Կոտայքի մարզը բնակչության թվով և միջին խտությամբ Հայաստանի Հանրապետությունում երրորդն է (զիջում է Արմավիրի և Արարատի մարզերին), իսկ ուրբանիզացման մակարդակով (54%) չորրորդն է (զիջում է Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերին):

Մարզի ներկայիս բնակչության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել բնակչության մեխանիկական աճը: Բազմաթիվ հայ ընտանիքներ վերաբնակվել են այստեղ դեռևս 1830-ական թվականներին՝ Պարսկահայքից և Արևմտյան Հայաստանից:

Առավել մեծ ներհոսք եղել է 20-րդ դարի 50-ական թվականներից հետո, երբ բուռն զարգացում է ապրել արդյունաբերությունը, և աշխատող ուժի մեծ կարիք է զգացվել: Եկել են ինչպես Վրաստանի ու Ադրբեջանի հայաբնակ վայրերից, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններից:

Մարզի հատկապես քաղաքային բնակավայրերում բնակեցված են նաև հայրենադարձներ: Այդ ամենի շնորհիվ խորհրդային տարիներին արագորեն աճել են Հրազդան (41170 մարդ (2016 թ.)), Աբովյան (44417 մարդ (2016 թ.)), Չարենցավան (20490 մարդ (2016 թ.)), Եղվարդ (11880 մարդ (2016 թ.)), Նոր Հաճն (9352 մարդ (2016 թ.)), Բյուրեղավան (9348 մարդ (2016 թ.)) քաղաքները: Ծաղկաձորը, թեև բնակչության թվով ամենափոքր քաղաքն է (1214 մարդ (2016 թ.)), սակայն որպես հանգստի և զբոսաշրջության կենտրոն առանձնահատուկ տեղ է գրավում մարզում և ՀՀ քաղաքների շարքում:

Մարզի բնակչության տարաբնակեցմանը բնորոշն այն է, որ բնակավայրերը մոտ են ընկած Հրազդան գետին և դրան զգահեռ անցնող երկաթգծին ու ավտոճանապարհին: Միայն մարզի ծայր

հարավում՝ Եղվարդի ու Կոտայքի սարավանդներում է, որ բնակավայրերը հեռանում են Հրազդան գետից և տարածվում դեպի աջ ու ձախ:

Մարզի գյուղերը մարդաշատ են. 62 գյուղերից 11-ն ունի ավելի քան 3000 բնակիչ: Առավել խոշոր և հայտնի են՝ Գառնի (7734 մարդ (2016 թ.)) Նոր Գեղի (6303 մարդ (2016 թ.)), Քասախ (6095 մարդ (2016 թ.)), Զովունի (5919 մարդ (2016 թ.)) գյուղերը:

Մարզի ամենախոշոր քաղաքը Հրազդանն է՝ մարզկենտրոնը: Այն կառուցվել է Ներքին Ախտայի և նրա հարևան մի քանի գյուղերի տեղում:

Հրազդանն աչքի ընկնող քաղաք է դարձել առաջին հերթին ջրային ու ջերմային էլեկտրակայանների և արդյունաբերական մի քանի հսկաների շնորհիվ: Մարզի երկրորդ քաղաքը Աբովյանն է, որը ձևավորվել է նախկին Էլառ գյուղի տեղում:

Այն ստեղծվել է որպես Երևանի արբանյակ քաղաք և Հայաստանի արդյունաբերական բուռն զարգացման տարիներին դեպի իրեն է ձգել նոր կառուցվող գործարաններ ու դրանով իսկ դանդաղեցրել Երևանի անհարկի աճը:

Ստեղծվել են աշխատատար ճշգրիտ մեքենաշինության, հատկապես էլեկտրոնային սարքաշինության հզոր ձեռնարկություններ, որոնք, սակայն, ներկայումս չեն աշխատում: Չարենցավանը հայտնի է որպես մեքենաշինության, Արզնին՝ հանքային ջրերի արտադրության ու առողջարանային, Նոր Հաճնը՝ սարքաշինության ու թանկարժեք քարերի մշակման, Եղվարդը՝ թեթև և սննդի արդյունաբերության, Բյուրեղավանը՝ ապակե տարաների և հախճապակու արտադրության, Ծաղկաձորը՝ հանգստի կազմակերպման կենտրոն:

1.1.1. Տնտեսությունը:

Կոտայքի մարզը Հանրապետության տնտեսական խոշորագույն կենտրոններից է:

Կոտայքը Հայաստանի առավել զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է, որտեղ արդյունաբերության արտադրանքը ծավալով երկու անգամ գերազանցում է գյուղատնտեսությանը: Արդյունաբերական արտադրանքի ծավալով երկրորդն է (Սյունիքի մարզից հետո):

Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էլեկտրաէներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Սևան-Հրազդան կասկադի վեց կայաններից երեքը և Հրազդանի՝ հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակայանը:

Այստեղից են սկսվում հանրապետության բարձր լարման գլխավոր էլեկտրահաղորդման գծերը և էլեկտրաէներգիան փոխանցվում է հանրապետության տարածքով մեկ:

Կոտայքի մարզն աչքի ընկնող դեր է կատարում նաև հանրապետության մեքենաշինության, շինանյութերի (ցեմենտի) արտադրության և սննդի արդյունաբերության մեջ:

Մարզի գյուղատնտեսության մասնագիտացումն ընդհանուր առմամբ ունի մերձքաղաքային բնույթ: Ինչո՞վ է դա պայմանավորված: Մի կողմից՝ Երևան քաղաքի մոտիկայինը, մյուս կողմից՝ քաղաքային բնակչության բարձր տոկոսը մարզի ներսում, իսկ ամռան ամիսներին՝ նաև բուժվողների հանգստացողների մեծ հոսքն ավելացնում է թարմ մթերքների պահանջարկը: Այդ պահանջարկն էլ գյուղատնտեսությանը հաղորդում է կաթնամսատու անասնապահական, իսկ ցածրադիր շրջաններում՝ նաև պտղաբուծական ուղղություն:

Մարզը հանրապետությունում առաջինն է ձվի արտադրությամբ, երկրորդը՝ խոզերի գլխաքանակով: Կոտայքն առանձնանում է նաև իր ռեկրեացիոն ռեսուրսներով, որոնց օգտագործման շնորհիվ զարգանում է բնակչության հանգստի կազմակերպման ճյուղը:

Այստեղ են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ հանգստի առողջարանական բազմաթիվ ճամբարներով:

Այստեղ է նաև Ծաղկաձորի մարզական օլիմպիական համալիրը, որտեղ թե՛ ծմռանը և թե՛ ամռանը հանգստանում կամ իրենց սպորտային վարպետությունն են բարձրացնում մեծաթիվ այցելուներ Հայաստանի տարբեր մարզերից ու արտասահմանից:

Մարզի կենտրոնական բարենպաստ դիրքը, ջրային և ռեկրեացիոն ռեսուրսներով ապահովվածությունը, ազատ աշխատժի առկայությունը, էներգետիկ հզորություններն ու առկա տնտեսական ներուժը և Երևանի մոտիկությունը բարենպաստ նախադրյալներ են մարզի հեռանկարային զարգացման համար:

Հրազդանում մինչ օրս գործում է ջերմաէլեկտրակայան և ջրաէլեկտրակայան, որոնք բավարարում են Հայաստանի էներգետիկ պահանջների մի մասը: Մարմարիկ գետի ձախ ափին գտնվող Մեղրաձոր գյուղում պահվում են երկրի ոսկու պաշարների մեծ մասը: Ծաղկաձոր քաղաքը Հայաստանի լեռնադահուկային սպորտի կենտրոնն է, որն ունի կարևոր զբոսաշրջային նշանակություն: Մարզի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Դրանց մարգարիտը Գառնու հեթանոսական տաճարն է, որը կառուցվել է 1-ին դարում և համարվում է մինչ օրս պահպանված նախաքրիստոնեական հայկական արվեստի եզակի նմուշներից մեկը: Նշանավոր են նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից կառուցված Բջնի բերդը, ինչպես նաև միջնադարյան Կեչառիսի վանքային համալիրը և Գեղարդավանքը՝ ուր և պահվում էր հայտնի գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցել է Քրիստոսի կողը:

1.1.2. Պատմական տվյալներ

Լեռնանիստ գյուղը հիմնադրվել է **1828թ-ին**: Նախկինում կոչվել է Վերին Ախտա, 1978 թվականին վերանվանվել է Լեռնանիստ:

Այն Հրազդանի տարածաշրջանի ամենամեծ գյուղական բնակավայրն է, բնակչության թվաքանակը՝ **3218 մարդ**: Համայնքն ունի **663 տնտեսություն**: Գտնվում է Երևանից **45 կմ**, իսկ Հրազդանից՝ **7 կմ** հեռավորության վրա:

Բնակչության նախնիների մի մասը 1829 թթ. գաղթել է Խոյի, Մակուի ու Սալմաստի գյուղերից:

Զբաղվածության հիմնական ճյուղը հացահատիկի /գարի, ցորեն, հաճար/ մշակությունն է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ և արագնա աշխատանքով:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2000 բարձրության վրա, այդ իսկ պատճառով ՀՀ Կառավարության որոշմամբ ճանաչվել է որպես բարձր լեռնային:

Բնակավայրում բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը ոռոգելի չեն և բերքատվությունը կախվածություն ունի տարվա տեղումների քանակից:

Զմեռը ցուցտ է, բքաշունչ: Ամառը զով է, երբեմն էլ՝ շոգ ու երաշտ: Գարունն ուշ է բացվում, աշունը՝ շուտ վերջանում:

Զնաձածկույթը Լեռնանիստ բնակավայրի տարածքում տևական է լինում, ուղեկցվում բքի վերածվող ուժեղ քամիներով, որի պատճառով փակվում են ճանապարհները, դադարում երթևեկությունը, սակայն հաճախակի կատավող ձյունաձածկ ճանապահների մաքրման աշխատանքների շնորհիվ հավտոմեքենաների շարժը չի դադարում:

Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ, կարկուտ, երբեմն կարկուտի պատճառով գյուղացին կորցնում է բերքի մի մասը:



1828-

մետր

մեծ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Գործազրկության բարձր մակարդակ	Ներդրումների խթանում, աշխատատեղերի ստեղծում
Թույլ զարգացաց գյուղատնտեսություն	Ոռոգելի հողերի ավելացում, պայքար տարերային աղետների դեմ, արոտների ջրարբիացում, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակող ձեռնարկությունների

	հիմնում, գյուղատնտեսական հողերի խոշորացում կուպերատիվների հիմնում, ժամանակակից գյուղտնտեսական ձեռքբերում
Խմելու և ոռոգման ջրի խնդիր	ՕԿՋ-երի նորոգում-նախատեսում, ցածրադիր հատվածներից ջրամատակարարման կազմակերպում
Մաշված՝ տեղ տեղ քայքայված համայնքային ենթակառուցվածքների առկայություն	Առկա ենթակառուցվածքների պահպանում և նորերի ստեղծում

1.1.3. Լեռնանիստի բնակչության փոփոխությունը

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1989	2000	2004	2018
Բնակիչ	349	1624	2442	3028	748	2300	2447	2920	3168	2877

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

Բնակչության 49 %-ը կազմում են տղամարդիկ և 51 % կանայք:

Գյուղը գրեթե լիովին գազաֆիկացված է՝ մոտ 90 %-ով: Առաջիկայում նախատեսվում է գազաֆիկացնել նաև մնացած հատվածը և/կամ էներգամատակարարումն ապահովել այլընտրանքային էներգիայի աղբյուրներից:

1.2. Բնական պայմանները և ռեսուրսները:

Կոտայքն աչքի է ընկնում բնական պայմանների և հարստությունների մեծ բազմազանությամբ: Դա արդյունք է, մի կողմից, բնական համալիրի վերընթաց գոտիականության, մյուս կողմից՝ բարդ ռելիեֆի:

Այստեղ համեմատաբար սահմանափակ տարածքի վրա հանդիպում են և՛ բարձրաբերձ լեռնագագաթներ խոր կիրճեր, և՛ լայնարձակ գետահովիտներ ու մեղմաթեք սարավանդներ:

Տարածքի արևելյան մասում, որտեղ Գեղամա լեռներն են, լայն տարածում ունեն ռելիեֆի հրաբխային ձևերը՝ հրաբխային կոները, քարացրոնները, լավային ընդարձակ ծածկույթներն ու հոսքերը: Հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում:

Հռչակված են Քառասունակնի, Արզնու և Գառնու աղբյուրները, որոնց սառնորակ ջրերը հատուկ խողովակներով հասցվում են նաև քաղաքամայր Երևանին:

Մարզի կենտրոնական հատվածում՝ Հրազդանի երկու ափերին, տարածվում են Եղվարդի և Կոտայքի թույլ մասնատված լավային սարավանդները: Այստեղ հայտնի են Արայի, Գուֆանասար և Հատիս լեռնագագաթները: Մարզի հյուսիս-արևմուտքում գտնվում են Ծաղկունյաց լեռնաշղթան և Մարմարիկի ավազանը, որտեղ գերակշռում են անտառային լանդշաֆտները, իսկ լեռների բարձրադիր մասերում՝ մարգագետինները:

Խայտաբղետ է նաև մարզի հողաբուսական ծածկույթը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չորտափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնատափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ ու դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ են լեռնամարգագետնային լանդշաֆտները:

Գետակների ակունքներին փոխված են երեքհազարամյա կենդանակերպ քարե հսկաները՝ «վիշապները»: Կոտայքի ընդերքը հարուստ է բազմապիսի օգտակար հանածոներով: Հայտնի են նեֆելինային սիենիտների (Թեժ լեռ), երկաթի (Աբովյան, Հրազդան), ոսկու (Մեղրաձոր) և ոչ մետաղային հանածոների (մարմար, պեղիտ և այլն) հանքավայրերը, հանքային աղբյուրները (Բջնի, Արզնի, Հանքավան):

Մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով: Կոտայքի կենտրոնով հոսող Հրազդանը և մնացած գետերն ունեն էներգետիկ և ոռոգիչ նշանակություն:

1.2.1. Զրագրություն

Աղբյուրակի ջրամբար

Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ: Գետերից Հրազդանը, Գետառը, Ազատը ունեն ոռոգիչ նշանակություն: Ակնա լճի (բարձրությունը՝ 3032 մետր) ջրերով ջրարմիացվում են ամառային արոտավայրերը: Հրաբխային ապարների մեծ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հայտնի են Քառասունակնի, Գառնիի և Արզնու աղբյուրները, որոնց ջրերը հասնում են Երևանին և օգտագործվում կենցաղային և արդյունագործական նկատառումներով:

Մարմարիկի ջրամբարը

Կոտայքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքներում կան տասնյակ լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Կոտայքի մարզի լճերը տնտեսական նշանակություն գրեթե չունեն: Դրանք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով և ունեն տեղական նշանակություն: Մարզի ջրամբարներն օգտագործվում են ոռոգման, էներգետիկայի, ձկնաբուծական և բուժական նկատառումներով: Հայտնի են Մարմարիկի և Աղբյուրակի ջրամբարները: Կոտայքի մարզի ստորգետնյա ջրերի պաշարները բաշխված են անհամաչափ: Ստորգետնյա ջրերը մեծ նշանակություն ունեն ջրային հավասարակշռության մեջ: Կոտայքի մարզում կան նաև մի քանի ջրառատ ջրվեժներ: Դրանցից ամենաջրառատն ու բարձրադիրը Գողթ գյուղում գտնվող Խոսրովի ջրվեժն է, որն ունի 8 մետր բարձրություն: Զրվեժն ունի զբոսաշրջային կարևոր նշանակություն: Ճահիճների թիվը բավականին քիչ է: Տարեց տարի դրանց քանակն էլ ավելի է կրճատվում:

1.2.2. Կլիմայական պայմաններ

Հայաստանի աշխարհագրական դիրքը, ծովի մակերևույթից բավականին բարձր և ջրային մակերևույթներից հեռու գտնվելը, տեղանքի բարդ, խիստ մասնատված ռելիեֆը և այլ առանձնահատկություններ պայմանավորում են հանրապետության բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությունը, որոնք շինարարության վրա ազդող գլխավոր գործոններն են:

Նշված գործոնները.

- 1) պայմանավորում են բնակավայրերի կլիմայական պայմանները և մեծ քաղաքների միկրոկլիման,
- 2) ազդում են շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմաստիճանային և խոնավության ռեժիմի և շենքերի միկրոկլիմայի վրա,
- 3) պայմանավորում են կոնստրուկցիաների և շինվածքների տարրերի վրա ֆիզիկական բեռնվածությունները,
- 4) առաջացնում են շինարարական նյութերի և շինվածքների կոռոզիա և ծերացում,
- 5) դժվարացնում են շինարարական աշխատանքների կազմակերպումը՝ մարդու օրգանիզմի, շինարարական մեխանիզմների, մեքենաների և նյութերի վրա օդերևութաբանական պայմանների բացասական ազդեցության դեպքում:

Սույն բաժնում տրված կլիմայական ցուցանիշները պետք է ընդունել որպես պաշտոնական ելակետային տվյալներ, որոնք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության այլ շինարարական նորմերի բաժինների համապատասխան նորմատիվային պահանջների մշակման ժամանակ:

Աղյուսակ 1.4. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհող մուտքի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագության արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	823,2	հունվար	2,3	5,2	11,0	4,1	19,9	39,2	18,2	2,7	27	1,9	2,1	18	19	22	24
		ապրիլ	4,2	14,7	19,2	6,1	13,9	21,2	20,3	15	2,1						
		հուլիս	8,3	45,2	35,0	2,1	2,9	3,4	1,1	7	2,8						
		հոկտեմբեր	3,2	12,7	23,0	6,1	11,9	20,2	22,3	26	1,7						
		միջին	2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՋԱՓԵՐԸ

Աղյուսակ 2.1. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
	ամենացուրտ օրվա, ապահովվածությունը, %	ամենացուրտ հնգօրյակի, ապահովվածությունը, %	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր			միջին ամսական, 15-ին	միջին ամսական, ժամը	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունները առավելագույն ըստ ուղղությունների, մ/վ		
						Միջին ջերմաստիճանի միջին օրական ջերմաստիճանով ոչ բարձր, °C										
						0	8	10								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	-24	-22	-21	-19	-8,0	-32	8,9	128	201	225	81	69	266	92	Արմ	2,4

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը — միջին ամսական օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տատանողական բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310

1102/17.01.2011

Հրազդան համայնքը գտնվում է «ցուրտ» կլիմայական շրջանում:

Ձմեռը երկարատև է, խորը և կայուն ձյան շերտով: Ձմեռը սկսվում է նոյեմբերի երրորդ տասնօրյակից և ավարտվում է ապրիլի առաջին կեսին: Ձմեռային եղանակները փոփոխական են, գերակշռում են 'չափավոր սառնամանիքային' և 'ձնհալքային' եղանակները:

Գարունը երկարատև է, զով և խոնավ: Գարնանային ցրտահարություններն ավարտվում են ապրիլի երրորդ տասնօրյակում:

Ամառը չափավոր տաք է, համեմատաբար խոնավ, երկրորդ կեսն ավելի չոր է, ամպամած եղանակները շատ փոքր տոկոս են կազմում:

1.2.3. Երկրաբանական կառուցվածք, հիդրոերկրաբանական պայմաններ և օգտակար հանածոներ

ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրում հաշվառվում են Լանջաղբյուրի բազալտի հանքավայրը՝ արևմտյան հատվածի շուրջ 13.0 հա մակերեսով տարածքը, և Վերին Ախտայի կավի երևակումը՝ շուրջ 130.0 հա մակերես տարածքով:

Լանջաղբյուրի բազալտի հանքավայրը գտնվում է Հրազդան ե/գ կայարանից 10կմ դեպի հարավ-արևելք և զբաղեցնում է 1.8 կմ² մակերես: Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի կողմից 21.03.1969թ. թիվ 184 արձանագրությամբ: Հանքավայրի պաշարները հաստատվել են որպես շինարարական քար պիտանի բլոկների 39% ելքով:

Վերին Ախթայի կավի երևակումը գտնվում է Հրազդանի լեռնաքիմիական գործարանից 6.0 կմ դեպի հարավ-հարավ-արևելք և զբաղեցնում է 4.0 կմ² մակերես:

Համայնքի վարչական տարածքում հաշվառվում են քաղցրահամ ջրի 3 աղբյուրներ.

1. Կբլոյի աղբյուր, 1.2լ/վրկ ջրի ծախսով,
2. Ավազանի աղբյուր, 1.6լ/վրկ ջրի ծախսով,
3. Գառի աղբյուր, 0.3լ/վրկ ջրի ծախսով:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող աղբյուրները մշտական բնույթի վարընթաց տիպի աղբյուրներ են, կապված են անդեզիտաբազալտների հետ, դուրս են գալիս դրանց ճեղքերից: Աղբյուրներն ամրակապված են երկաթ-բետոնե կառույցով, օգտագործվում են գյուղի ջրամատակարարման համար:

Լեռնանիստ համայնքի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոզոյի, կավճի, էոցենի, միոցենի և չորրորդական առաջացումները: Շրջանի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ կերպ /ներքևից վերև/:

Քենթրի-մինչքենթրի – ներկայացված են հիմնականում քվարց-սերիցիտային, նոնաքարային, քվարց-սփաթային, հազվադեպ գրաֆիտային թերթաքարերով, որոնց հզորությունը 200-250մ է:

Քենթրի – հայտնի է Թեղենիսի շերտախումբով և ներկայացված է շուրջ 200մ հզորության քլորիտային, քվարց-փայլարային, էպիդոտային թերթաքարերով:

Պալեոզոյ – ներկայացված է 200մ հզորության մետամորֆիզացված ապարների, պլագոկլազային և էպիդոտային թերթաքարերի շերտախմբով:

Դևոն – հանդես է գալիս Աղվերանի շերտախմբով, որը ներկայացված է քվարց-փայլարային թերթաքարերով, մետամորֆիզացված մանրահատիկ տուֆաավազաքարերով, մարմարացված կրաքարերով և մարմարներով: շերտախմբի հզորությունը 550-600մ է:

Վերին կավճ – հանդես է գալիս տուրոն-կոնյակի հարկերով, ներկայացված է 400-500մ հզորության տուֆակոնգլոմերատների, տուֆաավազաքարերի, ավազաքարերի շերտախմբով և

կամպան-մասստրիխտի 250մ հորության մերգելանման կրաքարերով, խիտ մերգելներով և կրաքար-սիլիցիտներով:

Պալեոգեն –ներկայացված են ստորին, ստորին-միջին, ստորին-վերին և միջին էոգենի հրաբխանստվածքային և նստվածքային մինչև 1600մ հզորության ֆացիաներով, որոնք անկյունային աններդաշնակությամբ ծածկում են վերին կավճի նստվածքներին:

Նեոգեն – տարածված են միոպլիոցենի նստվածքները, որոնք ներկայացված են ծովային, լճային ու հրաբխածին նստվածքներով և ունեն հետևյալ կտրվածքը.

1. Սարմատ-մեոտիս – ներկայացված է կավերով, կրային ավազաքարերով, պեմզային ավազաքարերով: Շերտախմբի հզորությունը 180մ է:

2. Մեոտիս-պոնտ – ներկայացված է ավազաքարերով, պեմզային ավազաքարերով, կավերով, կավային ավազաքարերով, լիպարիտներով, օբսիդիաններով: Շերտախմբի հզորությունը 150մ է:

3. Ստորին-միջին պլիոցեն- ներկայացված է 500-550մ հզորության տուֆաբրեկչիաների, բրեկչիաների, լիպարիտների, դացիտների, օբսիդիանների, պեմզային ավազաքարերի շերտախմբով:

4. Վերին պլիոցեն – ներկայացված է շուրջ 25մ հզորության անդեզիտներով, անդեզիտաբազալտներով:

Չորրորդական առաջացումներ – Շրջանի զգալի մասը ծածկված է մինչև 200մ հզորության միջին և վերին չորրորդական հասակի լավային հոսքերով, որոնք ներկայացված են մուգ մոխրագույն, գրեթե սև գույնի բազալտներով և անդեզիտաբազալտներով: Լավայի ժայթքման կենտրոնում դրանց հզորությունը հասնում է մինչև 400մ:

Չորրորդական հասակի այլովիալ-դեյուվիալ – էյուվիալ առաջացումները վերագրվում են Հրազդան գետի և դրա վտակների հուներին ու ողողատներին, ներկայացված են տարբեր ճլաքարերով, գլաքարերով, մեծաբերորներով:

Ժամանակակից առաջացումներ – ներկայացված են ավազակավերով, խճազաքարերով, կավավազներով և լայն տարածում ունեն թե շրջանում և համայնքի վարչական տարածքի սահմաններում:

Տարածքի հիմնական գետն է Հրազդանը, սկիզբ է առնում Սևանա լճից և մինչև Ջրառատ գյուղը հոսում է լայն, հարթ հովտով, Վարսեր և Ջրառատ գյուղերի միջև առաջացնում է փոքր շառավղով գալարումներ, գետի ողողահունը լավ է արտահայտված, որն աջափնյա մասում ջրի մակարդակից բարձր է 0.5 մ:

Կոտայքի մարզը, ինչպես և ամբողջ Հայաստանը, գտնվում է Գրինվիչի զուգահեռականից արևելք՝ չորրորդ ժամային գոտում: Մինչև 2011 թվականը Հայաստանն անցնում էր ամառային և ձմեռային ժամային հերթափոխի. մարտի վերջին կիրակի օրը ժամացույցի սլաքները մեկ ժամ առաջ էին տրվում, իսկ հոկտեմբերի վերջին կիրակի օրը ձմեռային ժամանակը վերականգնվում էր՝ ժամացույցի սլաքները մեկ ժամ հետ տալով: 2012 թվականից ժամանակը դարձել է անփոփոխ՝ Հայաստանի համապատասխան օրենքի փոփոխությամբ:

1.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

Բնական և անտրոպոգեն ներգործության պատճառով ներկայումս առավել կամ պակաս չափով պահպանության կարիք ունեն Հայաստանի ֆլորայի տեսակների համարյա կեսը: ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված են 386 տեսակներ կամ ֆլորայի 12%-ը: Նշված տեսակներից 61-ը ընդգրկված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: 35 արժեքավոր բուսատեսակ իսպառ անհետացել են Հայաստանի տարածքից, և այժմ անհետացման եզրին են գտնվում մի շարք բուսատեսակներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Ներկայումս Հայաստանում հանդիպող 17000 անողնաշարավոր և 493 տեսակի ողնաշարավոր կենդանիներից մոտ 300-ը համարվում են անհետացող կամ

հազվադեպ հանդիպող տեսակներ: Անողնաշարավորների ֆաունայի 48 ներկայացուցիչներ գրանցված էին նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում, իսկ ողնաշարավոր կենդանիներից 99-ը՝ ենթակա էին գրանցման հանրապետության, 39-ը գրանցված են ԽՍՀՄ-ի, 6-ը՝ միջազգային Կարմիր գրքերում: Այժմ անհրաժեշտություն է առաջացել հանրապետության հաստատվելիք Կարմիր գրքում գրանցելու ողնաշարավոր կենդանիների 97 նոր տեսակ²:

Կենսաբազմազանության վրա երկարամյա այդ բացասական ներգործությունների արդյունքում հանրապետությունում տեղի ունեցած կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ոլորտներում առաջ են եկել մի շարք հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Անցած տարիների ընթացքում պետության կողմից իրականացվել են բնագավառի օրենսդրության կատարելագործման, գիտակիրառական և կազմակերպչական տարբեր միջոցառումներ /վարչական և քրեական օրենսգրքերում համապատասխան հոդվածների ներառում, առանձին պահպանվող տարածքների կազմակերպում և այլն/ նշված բացասական ներգործությունների մեղմացման կամ կանխարգելման համար: Սակայն, այդ մասնակի քայլերի միջոցով վերջնական լուծում չեն տրվել այդ ոլորտում առկա հիմնախնդիրներին:

Այդ հիմնախնդիրների լուծման առաջնահերթ ուղղությունները տրված են ՀՀ կենսաբազմազանության հազմավարության և գործողությունների ծրագրում /1999թ./, որտեղ հատկապես կարևորվում է բնության հատուկ պահպանվող տարածքների օպտիմիզացիայի դերը կենսաբազմազանության պահպանության ապահովման գործում: Ռազմավարության մեջ ամրագրված է, որ հազարամյակների ընթացքում տարածքների համար, ինչպիսին Հայաստանն է, բնության և նրա բաղադրիչների պահպանության ֆինանսական, վարչարարական, իրավական և այլ մեխանիզմների հետ մեկտեղ կայուն երաշխիք են հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ), որոնց միջոցով ապահովվում է.

- կենսաբազմազանության, հատկապես հազվագյուտ և անհետացող տեսակների in-situ պահպանություն,

- էկոհամակարգերի և տեսակների մոնիտորինգ,

- էկոհամակարգերի և տեսակների վերականգնման և վերարտադրության համար բարենպաստ նախադրյալներ,

- բնական կենսապաշարների կանոնակարգված և նորմավորված օգտագործում:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներով, ԲՀՊՏ-երի կանոնադրություններով և ոլորտին առնչվող իրավական ակտերով:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներն ըստ բնապահպանական կարգավիճակի դասակարգվում են պետական արգելոցների, պետական արգելավայրերի, ազգային պարկերի և բնության հուշարձանների:

ԲՀՊՏ-երում պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60%-ը, որոնց թվում հազվագյուտ, անհետացման վտանգված և էնդեմ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գենետիկ ռեսուրսներ³:

1.3.1. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բնության հատուկ պահպանվող տարածք կարող են լինել մակերեսային և ստորերկրյա ջրավազները, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի առանձնացված տեղամասերը:

² <http://www.irtek.am/views/act.aspx?aid=21781>

³ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 54 արձանագրային որոշման հավելված

Հայաստանում կա բնության հատուկ պահպանության 4 տեսակ՝

- պետական արգելոցներ
- ազգային պարկեր
- պետական արգելավայրեր
- բնության հուշարձաններ:

Ըստ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով (2006)՝ կարգավորվում են բնության հատուկ պահպանվող տարածքները՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են՝

ա) ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների.

բ) ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

ՀՀ-ում գործում են 4 ազգային պարկ (Սևան, Դիլիջան)՝ 178102 հա, Արփի լճի ազգային պարկ, Արևիկ ազգային պարկ, 26 արգելավայր՝ 89442 հա, 3 արգելոց (Խոսրովի անտառ, Շիկահողի, Էրեբունի)՝ մոտ 380 հազար հա ընդհանուր տարածքով:

Մարզի տարածքում է գտնվում են բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքները.

Արզական-Մեղրածորի արգելավայր. բնության հատուկ պահպանվող տարածք: Կազմավորվել է 1971 թվականին: Ունի 13532 հա տարածք և համարվում է ՀՀ մեծ տարածք ունեցող 27 արգելավայրերից մեկը: Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում՝ Դալար և Մարմարիկ գետերի ավազանում՝ ծովի մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա, Ծաղկունյաց լեռների արևելյան լանջերին: Ստեղծվել է անտառային կենդանիների՝ այծյամ, ուսուրական բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլ կենդանիների պահպանության նպատակով: Արզականի արգելավայրի անտառներում հանդիպում են չափազանց հազվագյուտ ռելիկտային կենդանատեսակներ, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

Բանքսի սոճու արգելավայր.

արգելավայր Հայաստանի Կոտայքի մարզում, Մարմարիկի լեռների հյուսիսային լանջերին, Մարմարիկ գետի աջափնյակում, Ծաղկածոր քաղաքի արևմտյան մասում, 1800-2000 մ բարձրություններում: Հիմնավորվել է 1959 թ., տարածքը՝ 4 հա: Ստեղծվել է Բանքսի սոճու տնկարկային տեսակի պուրակի պահպանության նպատակով:



«Բանքսի սոճու»

Հիմնադրման տարեթիվը - 29.01.1959 թ. (ՀՍՍՀ Մինիստրների սովետի

Տարածքը - 4 հա
Գերատեսչական ենթակայությունը - ՀՀ կազմակերպությունը - Սեղադիրքը - ՀՀ Կոտայքի մարզ, Մարմարիկ գետի ավազան, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջեր,

N 20 որոշում) հա նախարարություն ՊՈԱԿ «Հայանտառ»

ծովի մակարդակից 1800-2000 մ բարձրության վրա Պահպանության օբյեկտը - Բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակ:

Հանքավանի ջրաբանական արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Կոտայքի մարզում Մարմարիկ գետի վերին ավազանում՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին՝ ծովի մակարդակից 2000-2800 մ բարձրություններում: Կազմավորվել է 1981 թվականին, ունի 9350 հա տարածք: Ստեղծվել է՝ հանքային աղբյուրների («Հանքավան» հանքային ջուր և այլ ջրային պաշարների) սնման ավազանների պահպանության նպատակով: Հայաստանի 26 արգելավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է 102 212.93 հա, որը Հայաստանի տարածքի 3.44%-ն է:

Արզական-Մեղրածորի արգելավայր		Կոտայքի մարզ	135.32 քկմ	1971
Բանքսի սոճու պուրակ արգելավայր		Կոտայքի մարզ	0.4 քկմ	1959
<u>Հանքավանի ջրաբանական արգելավայր</u>		Կոտայքի մարզ	51.6904 քկմ	1981

1.4. Կենսաբազմազանությունը /4, 5, 6/

Բուսական և կենդանական աշխարհ

Մարդը բուսաշխարհի տեսականու շատ չնչին մասն է ուսումնասիրել և բացահայտել Ֆլորայի գաղտնիքները և մարդու համար օգտակար տեսակները: Ներկայումս մարդը օգտագործում է առկա բուսատեսակների միայն մեկ տոկոսը: Ծանոթ չլինելով, չիմանալով երկրի ֆլորայի ողջ էությանը, մարդը իր գործունեությամբ լուրջ վնասներ է պատճառել բուսաշխարհին: Հազարամյակների ընթացքում բնության կողմից ստեղծված բուսատեսակների զգալի մասը՝ մարդու անխոհեմ գործունեության հետևանքով, ոչնչանում, անհետանում են երկրի երեսից:

2010 թ. լույս տեսած « Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք⁴»-ը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ, ներառնվել են 452 տեսակի բույսերի և 40 տեսակի սնկերի նկարագրություն: Բացի դրանից, Կարմիր գրքում ներկայացվել է ևս 223 բուսատեսակների մասին տեղեկատվություն, որոնց վիճակը մտահոգիչ է: Այսինքն, Հայաստանի Հանրապետությունում ոչնչացել կամ ոչնչացման եզրին են հայտնվել առկա բուսատեսակների շուրջ 19-ը տոկոսը, որը երկու անգամ բարձր ցուցանիշ է՝ համեմատած ամբողջ երկրագնդի փաստացի իրավիճակի հետ: Բերված տվյալները վկայում են, որ մեր հանրապետությունում բուսաշխարհի տեսակների պահպանման 4 համար առավել վատ ու վտանգավոր պայմաններ կան: Այս փաստը պետք է բոլորիս մտահոգի, այն կարևոր հիմնախնդիր է, որը անհապաղ լուծում է պահանջում: Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված 675 բուսատեսակների տրվել է՝ հետևյալ կատեգորիաները.

141 տեսակը գնահատվել է «Կրիտիկական վիճակում գտնվող»,

⁴ <http://env.am/storage/files/pt61-10bujser.pdf>

248-ը՝ Վտանգված տեսակ,
63-ը՝ Խոցելի տեսակ,
21-ը՝ Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ,
96-ը՝ Տվյալների անբավարարություն և
106-ը՝ Քիչ մտահոգող կատեգորիային:

Հայաստանի Հանրապետության բույսերի տեսակների առկա վիճակը գնահատվել է համաձայն Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված սանդղակի ('Կարմիր ցուցակի կատեգորիաներ և չափորոշիչներ' IUCN, 2001, տարբերակ 3.1), որին համապատասխան տեսակները գնահատվել են ըստ անհրաժեշտ չափանիշների՝ դրանց թվաքանակի, աշխարհագրական տարածվածության, որակական մի շարք ցուցանիշների, բազմացման առանձնահատկությունների և այլ: Դրա հիման վրա տեսակներին տրվել են հետևյալ կատեգորիաներ:

1.Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR): Տաքսոնը համարվում է 'Կրիտիկական վիճակում գտնվող', երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է 'Կրիտիկական վիճակում գտնվող' կատեգորիայի որևէ չափանիշով (A-E և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

2.Վտանգված տեսակ (EN): Տաքսոնը համարվում է 'Վտանգված տեսակ', երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է 'Վտանգված տեսակ' կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման շատ բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

3.Խոցելի տեսակ (VU): Տաքսոնը համարվում է 'Խոցելի տեսակ', երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է 'Խոցելի տեսակ' կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

1.4.1. Բուսական աշխարհ

Կոտայքի մարզը սակավ անտառածածկ վարչատարածքային միավոր է, իսկ բուսական աշխարհը նման է Հայաստանի մյուս շրջաններին: Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ:

Այստեղ աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Կոտայքը Հայաստանի այն երկու մարզերից մեկն է, որտեղ հայտնաբերվել են բրածո բույսեր (բրածո բույսեր են հայտաբերվել նաև Տավուշի մարզում): Դրանց համալիրներն աչքի են ընկնում իրենց հազվագյուտ տեսակային կազմի բազմազանությամբ և առատությամբ: Հայաստանում մինչ այժմ հայտնի բրածո ֆլորաներից ամենաերիտասարդը նուռնուսինն է, որը աճում է միայն Կոտայքի մարզում:

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային չոր տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են վաղամեռ /էֆեմեր/ ճիւղ առաջացնող հացազգիները, մասնավորապես անապատասեզը, ցորնուկը, այծակնը, դաշտավուկը: Այստեղ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ շագանակագույն հողերի և ոռոգովի հանդամասերի վրա կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել գարնան վերջերին

փարթամ բուսածածկ առաջացնող էֆեմերներից առնասպարը, ճոճուկը, եղջրագլխիկը, ճարճատուկը, կակաչը, սագասոխուկը, պապլորը, աստղաշուշանը և այլն: Ամռան շոգերի հետ այս բույսերը չոռոզվող հանդակներում ամբողջովին խանձվում են: Տիրապետող բույս է մնում հոտավետ օշինդրը, որը սպիտակաթաղիք ցողուններով, չորասեր, կամֆորայի դուրեկան հոտով կիսաթուփ է: Սակայն օշինդրային բուսածածկույթը հիմնականում վերածվել են մշակովի դաշտերի և այգիների: Տարածված բուսատեսակներից է նաև կապարը, կոխիան, նոնեան, լերդախոտը, բորբոսատեսուկը, դաշտավլուկը, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ:

Շրջակա բնակչության համար առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում վայրի ուտելի բույսերը՝ սիբեխ, թրթնջուկ, կապար, եղինջ, խատուտիկ, դանդուռ և այլն: Տարածաշրջանում կան նաև դեղաբույսեր՝ կուսածաղիկ, անթառամ, առյուծագի, լոշտակ, հազարտերևուկ, սրոհունդ, սպանդ և այլն: Կան նաև ներկատու, եթերայուղատու և համեմունքային բույսեր /ուրց և այլն/:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց /հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, մելլորացիա, ոռոգում և այլն/ որպես կանոն կրճատվում է վայրի բնության ներկայացուցիչների կենսագործունեության միջավայրը, կրճատվում է կենսաբազմազանությունը: Մասնագետների կարծիքով այսօր պահպանության կարիք ունի բուսական աշխարհի ներկայացուցիչների մոտ 50 տոկոսը:

Բնակավայրի տարածքի մերձակա տարածքներում և մրազում աճում են նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված մի շարք բուսատեսակներ՝ ներկայացված գրքի հետևյալ համարներով 1, 27, 118, 121, 261⁵:

ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքը և դրա մերձավոր շրջանների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. lessingiana* Trin.et Rupr., *S. tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski *Galium verum* L. տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*:

Ամենուրեք հանդիպող դեղաբույսերն են՝ եղինջ երկտուն (*Urtica dioica*), կատվալեզու եռաբաժան (*Bidens tripartita*), ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), մասրենի շնային (*Rosa canina*):

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնորոշ հանդիպող դեղաբույսերն են՝

Առյուծագի սրտային (*Leonurus cardiaca*), դժնիկ լուծողական (*rhamnus cathartica*), կաթնեղախոտ մեծ (*chelidonium majus*), կղմուխ բարձր (*inula helenium*):

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնորոշ բուսականության էնդեմիկ տեսակն է՝

ակքանազգիներ – *dipsacaceae*, ջիվան հայկական – *cephalaria armeniaca*:

⁵ <http://env.am/storage/files/pt61-10bujser.pdf>

EN B 1 ab(iii) + 2 ab(iii)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
 © Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA
 Аветисян В. Е. Род *Eunomia*. Флора Армении, 5: 2453. Ереван.

Կազմող՝ Ն. Խանճյան
 Compiler N. Khandjyan

Կարևորիա: Վտանգված տեսակ է: Կովկասի և Գեղնիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բևոնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Նկարագրություն: Բազմամյա գետնատարած բույս՝ 3–15 սմ բարձրության: Տերևները՝ հակադիր, կոշտավուն, հակածված կամ կլորավուն, ամբողջանոց, նստադիր, 6–20 մմ երկարությամբ: Ճաղիկները՝ խմբված գագաթնային, կարճացած, հովանոցանման ողկույցներում: Բաժակաթերթերը՝ կարճավուն: Պսակաթերթերը՝ վարդագույն, 8–10 մմ երկարությամբ: Պատիճակները՝ մոտ 8 մմ երկարության, 3–4 մմ լայնության, ձվաձև-երկարավուն, թերևակի զոգավոր: Սունակը՝ պտղի ժամանակ մոտ 1 մմ երկարության:

Տարածում: Հայաստանում հանդիպում է Ապարանի (լեռնագագաթ Գյորոզի) և Գեղամի (Սպիտակ սար, Ալնասար, Շոարմեր, Ակնա լիճ) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 200 քառ. կմ, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտները՝ 2: Ընդհանուր արևայր ընդգրկում է Մձ և Փոքր Կովկասյան լեռնաշղթաները:

Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Աճում է ալպյան գոտում ծ. մ. 2950–3400 մ բարձրությունների վրա, բարձր լեռների գագաթները քարաբալկվածքներին, քարքարոտ լանջերին: Ճաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

Մասնանավակող գործոններ: Աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հատկապես կլիմայի գլոբալ փոփոխության հետ:

Պահպանության միջոցառումներ: Մեկ պոպուլյացիան գտնվում է «Ռեյիկտային կրկես Գյորոզի լեռան մոտ» բնության հուշարձանի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորիզ:

Category. Endangered species. Endemic of the Caucasus. The extent of occurrence and the area of occupancy are less than 500 km². The species faces decline of the extent of occurrence and the area of occupancy caused by global climate change.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

Description. Perennial prostrate herb 3–15 cm. Leaves opposite, rigidiusculous, obovate to rotundate, integerrime, sessile, 6–20 cm long. Flowers in shortened terminal umbel-shaped inflorescence. Sepals reddish. Petals pink, 8–10 mm long. Silicle 8 x 3–4 mm, elongate-ovate, slightly sinuate. Style at fruit about 1 mm long.

Distribution. In Armenia it occurs in Aparan (Qyroroghly mountain peak) and Gegham (Spitak Sar, Aknasar, Eratmber, Lake Akna) floristic regions. EOO is 80 km², AOO is 16 km², the number of locations is 2. The general area of distribution includes the Caucasus mountains.

Ecological, biological and phytocoenological peculiarities. Grows in alpine belt, at the altitudes of 2950–3400 meters above sea level, on screes and stony slopes. Flowering in July, fruiting in August.

Limiting factors. Loss/degradation of habitats as a result of global climate change.

Conservation actions. One of the populations is found in “Relic Circus at Qyroroghly mountain” nature monument. Necessary: monitoring of the population state.

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև

որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր պահպանության կարիք ունի
Ֆլորայի տեսակների կեսը: Այստեղ աճում
է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Կոտայքի մարզում հատկապես
առատ են մշակաբույսերի վայրի
ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ,
կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

27. *Eryngium wanaturii* Woronow – Երեզնակ Վանապուրի – Синеголовник Ванатура

EN B 1 ab(ii,iii,iv,v) + 2 ab(ii,iii,iv,v)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA
Мацденова И. П. 1973. Род *Eryngium*. Флора Армении, 6: 264–271. Ереван.
Мещицкий Ю. Л. 1991. Конспект видов семейства *Ariaceae* (*Umbelliferae*) флоры Кавказа. Бот. журн. (Ленинград), 76, 12: 1749–1764.
Красная книга Армянской ССР. 1989: 55–56. Ереван.
Гроссгейм А. А. 1967. Род *Eryngium*. Флора Кавказа, 7: 18–22. Ленинград.
Davis P. H. 1972. *Eryngium*. Flora of Turkey, 4: 292–304. Edinburgh.
Pimenov M. G., Tamamschian S. G. 1987. *Eryngium*. Flora Iranica, 162: 45–60. Graz.
Վազմոյ՝ Ա. Ա. Ներսիսյան
Compiler A. A. Nersesyan

Վարկերգրիչ: Վտանգված տեսակ է: Աճում է 3 ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Արևայր մասնատված է: Առկա է տեսակի տարածման և բնակության շրջանների կրճատման սպառնալիք՝ կապված գյուղատնտեսական նպատակներով հողերի յուրացման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր I կարգավիճակով՝ պնշագման սպառնալիքի ենթակա տեսակ:

CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Նկարագրություն: Բազմամյա խառնարյու է՝ 30–50 սմ բարձրությամբ: Տերևները՝ ամբողջական, գծային–նշտարած, կաշնման: Մտղկարայրը՝ 2–5 գլխիկներից: Մտկոցի թերթերը՝ 7–9, գծային–նշտարած:

Տարածում: Հայաստանում աճում է Ապարանի (Արայի լեռ, գյուղ Ֆանտան), Գեղամի (գյուղ Արբիզ) և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում (գյուղ Կարմրաշեն): EOO 660 քառ. կմ է, AOO՝ 16 քառ. կմ, յվալիստեռները՝ 4: Հայաստանից բացի աճում է Հյուսիսարևելյան Անատոլիայում և Արևմտյան Իրանում:

Վնասարանական, Արտոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ: Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտում, ծ. մ. 1800–2450 մ բարձրությունների վրա, քարքարոտ լանջերին, տափաստանում, մարգագետիններում: Մտղկում է հուլիս ամսին, սրտաբերում՝ օգոստոսին:

Սահմանափակող գործոններ: Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, արևալի մասնատվածությունը, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, ինտենսիվ արածեցման հետ:

Պահպանության միջոցառումներ: Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել սրտալոցիայի վիճակի մոնիթորինգ:

Category. Endangered species. It grows in 3 floristic regions. The extent of occurrence is less than 5000 km², the area of occupancy is less than 500 km². The area of distribution is fragmented consisting of 4 locations. The species faces decline of the extent of occurrence and the area of occupancy as a result of expansion of arable lands.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category I: Endangered species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

Description. Perennial herb, 30–50 cm. Leaves entire, linear-lanceolate, coriaceous. Inflorescence of 2–5 capitula. Bracts 7–9, linear-lanceolate.

Distribution. In Armenia it grows in Aparan (Arayi mountain, village Fantan), Gegham (village Artiz) and Darelegis (village Karmrashen) floristic regions. EOO is 660 km², AOO is 16 km², the number of locations is 4. Besides Armenia it grows in North–East Turkey and West Iran.

Ecological, biological and phytocoenological peculiarities. Grows in upper and sub–alpine belts, at the altitudes of 1800–2450 meters above sea level, on stony slopes, in the steppes and meadows. Flowering in July, fruiting in August.

Limiting factors. Restricted extent of occurrence and area of occupancy, area fragmentation, loss/degradation of habitats caused by land development for arable purposes, intensive grazing.

Conservation actions. No conservation actions. Necessary: monitoring of the population state.

I. *Acanthus dioscoridis* L. — Ավանթ դիոսկորանման — Акант диоскорейный

CRB 1 ab(iii) + 2 ab(iii)



© Փարզի Ֆայվշ
© Georgi Fayvush

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր
Herbarium materials of the Institute of botany of NAS RA
Гроссгейм А. 1934. Семейство Аcanthaceae. Флора Кавказа, 1, 4: 15–16. Баку.
Hossain E. 1982. Acanthus.
Flora of Turkey, 7: 23–25. Edinburgh.
Габриэлян Э. Ц., Тахтаджян А. Л. 1989. О находке *Acanthus dioscoridis* (Acanthaceae) в Армении. Бот. журн. (Ленинград), 74, 3: 417–418.
Վազմով Գ. Մ. Ֆայվշ
Compiler G. M. Fayvush

Կարևորիա: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է ընդամենը մեկ, ոչ մեծ ստորախոյան, որի տարածման և բնակարանի շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից էլ փոքր է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների կախվածներում:

Նկարագրություն: Բազմամյա խոտաբույս է՝ ուղիղ կանգնած ցողունով, 30–40 սմ բարձրության: Տերևները ամբողջական են: Պսակը՝ միաշաղթ, ծիրանի–վարդագույն: Ծաղկաբույլը՝ խիտ, երկարավուն: Ծաղկակիցները՝ սրացած, փշոտ–առամնավոր, հաճախ մանուշակագույն: Շատ գեղազարդային տեսակ է:

Տարածում: Հայաստանում հանդիպում է Գեղամի ֆլորիստիկական շրջանում, Հատիս լեռնազանգվածի ստորոտում: AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտա՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Արևելյան Անատոլիայում, Հյուսիսային Իրանում և Արևմտյան Իրանում:

Կենսաբանական, էկոլոգիական և ֆիլոգենետիկական առանձնահատկություններ: Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1600–1700 մ բարձրությունների վրա, քարքարոտ աճելավայրերում, մարգագետնաառփաստանային բուսականության կազմում, դաշտերի եզրերին: Ծաղկում է հունիս ամսին, ստորերևում՝ հուլիս–օգոստոսին:

Սահմանափակող գործոններ: Սահմանափակ արարածման և բնակարանի շրջանների, աճելավայրի կորուստ կամ ղեզրաղացիա՝ կապված գյուղատնտեսական հանդակների ընդարձակման, արածնցման, կլիմայի զրբրավառության հետ:

Պահպանության միջոցառումներ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել ստորախոյանի վիճակի մոնիթորինգ:

Category. Critically endangered species. Only one not large sub-population is known. The extent of occurrence (EOO) and area of occupancy (AOO) are less than 10 km². The species is under threat of extinction caused by the expansion of arable lands.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention (Convention of the European Wildlife and Natural Habitats).

Description. Perennial herb 30–40 cm. Leaves entire. Corolla unilabiate, purplish-pink. Inflorescence dense, oblong. Bracts acuminate, spinose-dentate, often violet. Very decorative plant.

Distribution. In Armenia it is found in Gegham floristic region, at the foot of the mountain Hatis. The area of occupancy (AOO) is 4 km². Locations are 1. Besides Armenia the species grows in East Anatolia, North Iraq and in West Iran.

Ecological, biological and phytocoenological peculiarities. Grows in middle mountain belt, at the altitude of 1600–1700 meters above sea level, in stony habitats, among meadow-steppe vegetation, at the edges of the fields. Flowering in June, fruiting from July to August.

Limiting factors. Restricted extent of occurrence and area of occupancy, loss/degradation of habitats caused by the expansion of arable lands, grazing and global climate change.

Conservation actions. No conservation actions. Necessary: monitoring of the population state.

Կոտայքը Հայաստանի այն երկու մարզերից մեկն է, որտեղ հայտնաբերվել են բրածո բույսեր (բրածո բույսեր են հայտաբերվել նաև Տավուշի մարզում): Դրանց համալիրներն աչքի են ընկնում իրենց հազվագյուտ տեսակային կազմի բազմազանությամբ և առատությամբ: Հայաստանում մինչ այժմ

հայտնի բրածո ֆլորաներից ամենաերիտասարդը նուռնուսինն է, որը աճում է միայն Կոտայքի մարզում:

Պահպանության կարիք ունեցող տեսակները: Հարկ է նշել, որ տվյալները բերված են Հայաստանի բուսականության Կարմիր Գրքից Կոմուխ անցողուն (*Inula acaulis* Schott. & Kotschy ex Boiss), Գառնաովուտ լազիստանյան (*Oxytropis lazica* Boiss), Վիշապազլուխ ավստրիական (*Dracocephalum austriacum* L), Անողնուցուկ Գրոսհեյմի (*Puccinellia grossheimiana* V.I.Krecz), Արոսենի հայաստանյան (*Sorbus hajastana* Gabr), Սարկոսոմա գնդաձև (*Sarcosoma globosum* (Schmidel Fr.) Casp):

1.4.2. Կենդանական աշխարհ

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը համեմատաբար ավելի աղքատիկ է: Կոտայքի մարզը տեղադրված է Միջերկրածովյան կենսաաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան մարզերի խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ աշխարհագրական շրջանների ազդեցությունը Հայաստանի և առանձին մարզերի կենդանական աշխարհի տեսակների վրա:

Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները: Կենդանական աշխարհին բնորոշ են եղջերուն, գայլը, աղվեսը, նապաստակը, արջը: Բազմազան է թռչնաշխարհը, կան միջատներ եւ սողուններ:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը հանրային հարստություն է և կարևոր նշանակություն ունի հասարակության գիտական, գեղագիտական, ճանաչողական զարգացման համար: Կենդանիները, լինելով կարևոր բնական պաշար և ունենալով կարևոր նշանակություն մարդու տնտեսական գործունեության համար, միաժամանակ կարող են հանդիսանալ գյուղատնտեսության վնասատուներ, որոշ վարակիչ հիվանդությունների ու մակաբույծների փոխանցողներ կամ մարդու և կենդանիների համար վտանգավոր կենդանական թույների կրողներ:

Այսպիսով հատուկ պահպանվող այս տարածքները ամբողջովին դուրս են մնում քաղաքաշինական շրջանառությունից և յուրատեսակ ապաստանի նշանակություն են ձեռք բերում տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների համար:

Տարածքին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են լեռնային չոր տափաստաններում բնակվող Հայաստանում ամենուրեք տարածված սպիտակամկնիկը /*Crocidura*/, աղվեսը /*Vulpes*/, գերմանամուկը /*Cricetus auratus*/, դաշտամուկը /*Mucrotus arvalis* Pall/, կաքավը /*Perdis perdix* L./ և այլն:

Մարդու գործունեության հետ կապված այստեղ բազմաթիվ պատճառներով կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: ՀՀ Կարմիր գրքում գրանցված են 115 տեսակի անողնաշարավոր և 153 տեսակի ողնաշարավոր կենդանիներ: / ՀՀ Կառավարության 29 01 2010 թ. N 72-Ն որոշումը/: Լեռնանիստ համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու,

տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր: Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնորոշ հանդիպող կենդանիներն են՝ նապաստակը և գորշուկը:

Լեռնանիստ համայնքի բնորոշ կենդանիների էնդեմիկ տեսակը գոյություն չունի: Որսա-անդյունագործական կենդանատեսակներն են ամենուր հանդիպող գայլը, աղվեսը, քարակզաքիսը և ջրային առնետը:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, ո որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, Կարմիր Գրքում:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը համեմատաբար ավելի աղքատիկ է: Կոտայքի մարզը տեղադիրքով Միջերկրածովյան կենսաաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան մարզերի խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ աշխարհագրական շրջանների ազդեցությունը Հայաստանի և առանձին մարզերի կենդանական աշխարհի տեսակների վրա:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը հանրային հարստություն է և կարևոր նշանակություն ունի հասարակության գիտական, գեղագիտական, ճանաչողական զարգացման համար: Կենդանիները, լինելով կարևոր բնական պաշար և ունենալով կարևոր նշանակություն մարդու տնտեսական գործունեության համար, միաժամանակ կարող են հանդիսանալ գյուղատնտեսության վնասատուներ, որոշ վարակիչ հիվանդությունների ու մակաբույծների փոխանցողներ կամ մարդու և կենդանիների համար վտանգավոր կենդանական թույների կրողներ:

Հրազդանի անտառներում հանդիպում են փորսուղներ, նապաստակներ, աղվեսներ, դաշտամկներ, եղնիկներ, արջեր, վայրի խոզեր: Բավականին շատ են ոզնիները, իսկ գայլեր հանդիպում են հազվադեպ: Երբեմն ամռան տապից փախչելով՝ Լոռվա և Տավուշի անտառներից այս տարածաշրջան են գալիս տարածաշրջանին ոչ բնորոշ կենդանիներ՝ լուսաններ, հովազներ և այլն: Վերջին 20 տարում բավականին շատացել է աքիսների թիվը:

Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության: Հայաստանի Հանրապետության կենդանիների տեսակների առկա վիճակը գնահատվել է համաձայն Բնության Պահպանության Միջազգային Միության կողմից մշակված սանդղակի ('Կարմիր ցուցակի կատեգորիաներ և չափորոշիչներ' IUCN, 2001, տարբերակ 3.1), որին համապատասխան տեսակները գնահատվել են ըստ անհրաժեշտ չափանիշների՝ դրանց թվաքանակի, աշխարհագրական տարածվածության, որակական մի շարք ցուցանիշների, բազմացման առանձնահատկությունների և այլն: Դրա հիման վրա տեսակներին տրվել են հետևյալ

կատեգորիաները. Անհետացած տեսակ (EX): Տաքսոնը համարվում է անհետացած, եթե չկա որևէ կասկած, որ դրա վերջին առանձնյակը վերացել է: Տաքսոնը գնահատվում է անհետացած, եթե հայտնի և/կամ ենթադրվող բնակմիջավայրի ողջ պատմական արեալում տարբեր ժամանակահատվածների ընթացքում /սեզոնային, տարեկան, օրական/ հետևողական ուսումնասիրության արդյունքում ոչ մի առանձնյակ չի հայտնաբերվել:

Տարածաշրջանում անհետացած տեսակ /RE/: Տաքսոնը համարվում է տարածաշրջանում անհետացած, եթե չկա որևէ կասկած, որ դրա վերջին առանձնյակը այդ տարածքից վերացել է: Այն դեպքում, եթե տաքսոնը նախկինում պարբերաբար ներթափանցում էր տարածաշրջան, այն նույնպես համարվում է անհետացած, եթե տարածաշրջանի վայրի բնությունից վերացել է դրա վերջին առանձնյակը: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR): Տաքսոնը համարվում է ‘Կրիտիկական վիճակում գտնվող’, երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է ‘Կրիտիկական վիճակում գտնվող’ կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման չափազանց մարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ⁶:

Վտանգված տեսակ (EN): Տաքսոնը համարվում է ‘Վտանգված տեսակ’, երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է ‘Վտանգված տեսակ’ կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման շատ մարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

Խոցելի տեսակ (VU): Տաքսոնը համարվում է ‘Խոցելի տեսակ’, երբ ամենամեծ հավանականությամբ ցույց է տրված, որ այն որոշվում է ‘Խոցելի տեսակ’ կատեգորիայի որևէ չափանիշով (A-E) և, հետևաբար, դիտվում է որպես անհետացման բարձր ռիսկի առջև կանգնած տեսակ վայրի բնության մեջ:

Տվյալների անբավարարություն (DD): Տաքսոնը պատկանում է ‘Տվյալների անբավարարություն’ կատեգորիային, երբ առկա տեղեկությունները դրա թվաքանակի և/կամ արեալի մասին անհամապատասխան են անհետացման ռիսկի ուղղակի կամ անուղղակի գնահատման համար: Այդ կատեգորիայի տաքսոնը կարող է լինել լավ ուսումնասիրված, իսկ կենսաբանությունը՝ լավ հայտնի, սակայն դրա առատության և/կամ տարածման վերաբերյալ համապատասխան տվյալները գնահատման համար կարող է լինեն անբավարար: ‘Տվյալների անբավարարություն’ կատեգորիան չի հանդիսանում անհետացման ապառնալիքի կատեգորիա: Տաքսոնի ընդգրկումը այդ կատեգորիայում ցույց է տալիս, որ պահանջվում են ավելի շատ տեղեկություններ, և ընդունվում է, որ ապագա ուսումնասիրությունները կարող են հնարավոր դարձնել նրա պատկանելիությունը անհետացման սպառնալիքի որևէ կատեգորիայում ընդգրկելու համար:

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Հ/h	Կենդանիների անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
	Միջատներ – Insecta		
1	Սատունինի սկոտոդրիմադուգա	Scotodrymadusasatunini (Uvarov, 1916)	CR
2	Ռեյթերի հացաբզեզ	AnisopliareitterianaSemenov, 1903	EN

⁶ <http://env.am/storage/files/pt61-10kendani.pdf>

Հ/հ	Կենդանիների անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
3	Կովկասյան փառավոն	Pharaonuscaucasicus (Reitter, 1893)	CR
4	Մեղու Դեսեպտորիա	Megachiledeseptoria Peres, 1884	VU
5	Երևանյան սևամարմին	Cylindronotus erivanus	
ՍՈՂՈՒՆՆԵՐ - REPTILIA			
9	Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ	Phrynocephalushorvathi (Mehely, 1894)	CR
5	Երկարաոտ սցինկ	Eumeceschneideri (Daudin, 1802)	VU
6	Անդրկովկասյան մողեսիկ	EremiaspleskeiBedriaga, 1907	CR
7	Կովկասյան կատված	Telescopusfallax (Fleschmann, 1831)	VU
ԹՈՉՈՒՆՆԵՐ - AVES			
8	Գիշանգղ	Neophronpercnopterus Linnaeus, 1758	EN
9	Եվրոպական ճնճաճուռակ	Accipiter brevipes (Severtzov, 1850)	VU
10	Տափաստանային արծիվ	Aquila nipalensorientalis Hodgson, 1833	VU
11	Հայկական որոր	LarusarmenicusButurlin, 1934	VU
12	Ներկարար	Coraciasgarrulus (Linnaeus, 1758)	VU
13	Սպիտակափող սոխակ	Iraniagutturalis (Gunrin, 1843)	DD
14	Ժայռային դրախտապան	Emberizabuchanani Blyth, 1844	VU
ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ, MAMMALS			
15	Լայնականջ ոզնի	Erinaceus (Hemiechinus) auritusGmelin, 1770	EN
16	Փոքր ճագարամուկ	Allactaga elater Lichtenstein, 1825	EN
17	Զրասամույր	Lutralutra (Linnaeus, 1758)	EN

103. Ալեքսանոր առագաստափթեռ

Papilio alexanor orientalis Romanoff, 1884

Կարգ՝ Թփուկաթևեր կամ Թիթեռներ - *Lepidoptera*
Ընտանիք՝ Առագաստափթեռներ - *Papilionidae*



Կարգավիճակը: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B 1ab(iii)+B 2ab(iii). Տեսակը ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում:

Համառոտ նկարագրությունը: Խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 35-58 մմ), բնորոշ է սեռական երկձևություն: Էգերի թևերի ընդհանուր գունեղանգը բաց դեղին է, արունների՝ օքրադեղնավուն: Առջևի թևերի վրա կան ծայրային և 2 լայնակի սև գույեր, ինչպես նաև սկավառակային (դիսկալ) և կենտրոնական (մեդիալ) գծեր: Հետին թևերի եզրը բնահատուկ կտրատված է՝ նեղ, երկար ելուստներով, ունեն լայն՝ վերևից դեղին և երկնագույն թեփուկներով ծածկված, արտաքին լայնակի, և նեղ՝ հիմնային, գույեր:

Տարածվածությունը: Հարավային Եվրոպա, Փոքր և Միջին Ասիա, Իրան, Աֆղանստան:

Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է Արագած, Հատիս և Արայի լեռների հարավային լանջերից, «Խոսրովի անտառ» պետական արգելոցից, Կոտայքի (Արզական, Գառնի, Գեղաղիթ, Ջրվեժ), Վայոց Ձորի (Վայք, Գնիշիկ) և Սյունիքի (Մեղրի) մարզերի մի շարք վայրերից:

Ապրելավայրերը: Կիսաանապատներ, կսերոֆիտներ՝ 1000-2000 մ ծ.մ.բ., անտառի վերին եզրի քարքարոտ հատվածներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տարվա ընթացքում տալիս են մեկ սերունդ, թռիչքը՝ մայիսի կեսից մինչև հուլիսի կեսը: Չվաղրում են *Ferula orientalis*, *Ferula rigidula* բույսերի կոկոնների և ծաղիկների վրա: Բարձր հասակի թրթուրները սնվում են հիմնականում գիշերը, ցերեկը թաքնվում են բույսի տերևաճյուղային կամ ստորին մասերում: Չմեռում են հարսնյակները:

Թվաքանակը և դրա փոփոխության միտումները: Թվաքանակը բավականին բարձր է, մարդու գործունեությամբ չվնասված վայրերում վիճակը բավականաչափ բարվոք է: Նկատվում են թվաքանակի խիստ տատանումներ՝ պայմանավորված կերաբույսի վեգետացիոն շրջանի տևողությամբ:

Վտանգման հիմնական գործոնները: Էկոհամակարգերի դեգրադացում՝ պայմանավորված անասունների գերարածեցմամբ:

Պահպանության իրականացվող միջոցառումները: Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

Պահպանության առաջարկվող միջոցառումները՝ Տեսակի ապրելավայրերի ընդգրկում կազմակերպվող «Գնիշիկ» ազգային պարկի տարածքի մեջ, Արայի լեռան վրա ԲՀՊՏ-ի ստեղծում:

1.4.3. Բուսական աշխարհի պահպանություն

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում: Սակայն շինարարության և բարեկարգման ընթացքում անհրաժեշտ է լինում, թեկուզ և սահմանափակ քանակով հատել առանձին թփեր և ծառեր: Ծառաթփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով կառուցապատման նախագծերի մշակման ընթացքում պետք է հնարավորին նվազագույն չափով հատվեն ծառերն ու թփերը: Հիմնականում այդ խնդիրը հաջողվել է լուծել կառուցապատման համար ընտրելով այն տարածքները, որտեղ գրեթե բացակայում է ծառային բուսականությունը և առավելապես բնական կանաչապատ տարածքներում նախատեսվում է քաղաքային զբոսայգիների, պուրակների կամ կանաչապատ շերտերի զարգացումը: Տեղական մարմինների հետ համաձայնեցմամբ առաջարկվում է ավանդույթ դարձնել քաղաքում գարնան և աշնան ամիսներին կատարել կանաչապատման աշխատանքներ, ներգրավելով բնակչության տարբեր խմբեր, հասարակական և այլ, այդ թվում տեղական ինքնակառավարման համակարգի և պետական կազմակերպություններ: Քաղաքի տարածքում գործող մասնավոր ձեռնարկությունների մասնակցությամբ առաջարկվում է կազմակերպել համապատասխան քանակությամբ ծառաթփային տնկարկային նյութի ձեռքբերումը:

1.4.4. Կենդանական աշխարհի պահպանություն

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով տարբեր կառույցների իրականացման ընթացքում ինտենսիվ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն մինչև ձմադրման և բնադրման ժամանակաշրջանը (ապրիլ- մայիս) կամ դրանից հետո:

Ընդհանուր առմամբ, նախատեսվող հեռանկարային զարգացման և վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, որի ընթացքում հնարավոր է, որ վախի գործոնը կենդանիներին ստիպի որոնել առավել հուսալի կացարաններ և հեռանալ մերձավոր՝ շատ ավելի մեծ մակերեսներ և նման պայմաններ ունեցող տարածքներ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Սույն գլխավոր հատակագծի շրջանակներում առաջարկվում է բնակավայրի զարգացումը դիտարկել նոր հատակագծային միավորի ձևով՝ կառուցապատված հատվածին անմիջականորեն հարող հատվածում բնակելի նոր թաղամասերի, հասարակական և այլ կառուցապատումը իրականացնելու, ինչպես նաև նոր զբոսայգիների ու պուրակների, վրանային ճամբարի համար տարածքների առանձնացման և ստեղծման նպատակով: Ընդ որում հորինվածքային առումով հատակագծային միավորի կենտրոնական հատվածում անընդմեջ էկոլոգիական միջանցքի տեսքով նախատեսված է հանրային կանաչ տարածքների համակարգի նախատեսում՝ ելքով դեպի հարակից բնական լանդշաֆտի գոտիներ, ինչը ևս հնարավորություն կտա կենդանական աշխարհի բնադրող տեսակներին տեղաշարժվել այդ հատվածներով: Ի լրումն հարկ է նշել, որ խոշորածավալ կառուցապատումներ չեն իրականացվում այլ առավել ցածր խտությամբ և փոքր հարկայնությամբ, հաճախ անգամ առանց հողային և բետոնացման աշխատանքների նախատեսման, քրթեջային թաղամասի նախատեսում՝ կից տնամերձ հողամասերով:

Կենսաբազմազանությունը հայ ժողովրդի կենսագործունեության, հարատևության և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գրավականներից է: Նրա տեսակային և քանակական հարստությունից է կախված հայ ժողովրդի բարեկեցությունը և կայուն զարգացման ապահովումը:

Հայաստանի տեղադիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, առատ էնդեմիզմի և հարուստ ազրոկենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի փոքրիկ

տարածքի վրա (29,74 հազ. կմ²) հայտնաբերված են մոտ 3500 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը՝ ողնաշարավորներ: Ցածրակարգ բույսերի և լմիկոտորգանիզմների քանակությունն անցնում է մի քանի տասնյակ հազարներից: Բարձրակարգ բույսերի խտությամբ աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից լմեկը՝ ավելի քան 100 տեսակ 1 կմ քառակուսու վրա: Հայաստանի ֆլորայի էնդեմների թիվը կազմում է 106 տեսակ, որը նրա բուսական աշխարհի տեսակային ընդհանուր բազմազանության մոտ 3%-ն է, իսկ ցամաքային ֆաունայինը՝ 329-ը, որոնցից 316-ը՝ անողնաշարավորներ են: Հայաստանը տնտեսապես արժեքավոր մի շարք բույսերի և կենդանիների ծագման կարևորագույն կենտրոններից մեկն է: Այստեղ մինչ այժմ ներկայացված են հացազգիների և այլ մշակաբույսերի, ինչպես նաև ընտանի կենդանիների վայրի ցեղակիցները:

Հայաստանի կենսաբազմազանությունը չափազանց հարուստ է տնտեսական արժեքավոր տեսակներով: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված են սննդարար, կերային, դեղատու ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Կենսաբազմազանության օգտագործումը հանրապետությունում հիմնականում ընթացել է առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության ապահովման բնական հնարավորությունները: Օգտագործման այսպիսի մոտեցման արդյունքում աստիճանաբար տեղի է ունեցել տեսակների դեգրադացիա, և նույնիսկ ոչնչացում, որն էլ բերել է կենսաբազմազանության ընդհանուր աղքատացման:

1.5. Զբոսաշրջության զարգացման նախադրյալներ

Վերջին տարիներին գյուղում արագ զարգանում է տուրիզմի ոլորտը: 2017 թվականին մասնավոր ներդրումներով Լեռնանիստում կառուցվել է դահուկավազքի սահուղի և 350 մետր երկարությամբ ճոպանուղի:

Ըստ Հայաստանի կառավարության պաշտոնական հրապարակման, Լեռնանիստը հավակնում է դառնալ ձմեռային տուրիզմի կենտրոն: Միայն 2019 թվականի հունվարին գյուղն ընդունել է մոտ 1000 զբոսաշրջիկ: 2015 թվականին գյուղում բացվել է ազգագրության թանգարան, որը գործում է համայնքի մշակույթի տանը:

1.5.1. Զբոսաշրջային ռեսուրսներ

1.5.1.1. Բնակլիմայական պայմաններ

Լեռնանիստ համայնքը բարձր լեռնային բնակավայր է, ձմեռային ամիսներին ձյունը առատ է, ձնածածկույթը պահպանվում է ավելի քան **4 ամիս**:

Առկա են թեք լեռնալանջեր, որոնք նպաստում են դահուկավազքի և ձմեռային այլ սպորտաձևերի զարգացմանը:

Ձմեռային տուրիզմի զարգացման նպատակով 2017 թվականին Լեռնանիստ համայնքում մասնավոր ներդրումներով կառուցվել է դահուկավազքի սահուղի և 350 մետր երկարությամբ ճոպանուղի (բուգել):

Հարակից տարածքում առկա է համապատասխան սպորտային պարագաների տրամադրման կետ, ինչպես նաև հանրային սննդի օբյեկտ, ապագայում նախատեսվում է կառուցել հյուրատուն և սպասարկման այլ օբյեկտներ:

1.5.1.2. Պատմամշակութային հուշարձաններ

Համայնքում առկա են IV –XIII դարերի պատմամշակութային կոթողներ, բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, մատուռներ:

Գյուղում է գտնվում 1892 թվականին կառուցված «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցին և 1861 թվականին կառուցված «Սուրբ Հակոբ» մատուռը, որը ճանաչված է «Սուրբ ավազան» աղբյուրի բուժիչ ջրով, որն էլ այժմ դարձել է մեծ ուխտատեղի:

«Երկու քույրեր» մատուռ կառուցվել է 1980 թվականին և հիմնովին վերակառուցվել է 2014 թվականին:

Պատմամշակութային հուշարձաններ. Կոտայքի մարզը, ինչպես և Հրազդան համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Կոտայքի մարզում կա 811 պահպանման միավոր, 3208 հուշարձան:

Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 12-15-րդ դար), ավելի բազմազան են 12-13-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ):

Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները:

Պատմամշակութային հուշարձաններն

ընդգրկված են Հրազդան գետի ավազանի ռելիեֆին գոտու Հրազդանի միջին հոսանքի ենթագոտում:

Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2003 թ. հաստատվել է Հայաստանի

կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 37 հուշարձան (17 միավոր):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2003 թվականի N 1793-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)			Հուշարձանախու մբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը. հանրապետական/ տեղական	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8	9

6.33. ԼԵՌՆԱՆԻՍ ՊՅՈՒՂ⁷

1	2	3	4	5	6	7	8	9
---	---	---	---	---	---	---	---	---

⁷ Հուշարձանների պահպանության պայմանակարգերը տրված են Հավելված 5-ում

1.		ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	13-20 դդ.	գյուղի հս կողմում	Հ	
	1.1	Խաչքար	13-14 դդ.		Հ	
	1.2	Խաչքար	15-16 դդ.		S	
	1.3	Խաչքար	16-17 դդ.		S	
	1.4	Խաչքար	16-17 դդ.		S	
2.		ԳԼԽԱՏՈՒՆ	19 դդ.	գյուղի մեջ	S	
3.		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	ուշ միջնադար	գյուղից 6 կմ հվ-ան	S	«Դայլ» վայրում
	3.1	Եկեղեցի	ուշ միջնադար		S	
4.		ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ	Ք.ա. 2 հազ.	գյուղից 1 կմ ան	Հ	
5.		ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	1892-1906 թթ.	գյուղի մեջ	S	
	5.1	Խաչքար	10 դդ.		Հ	
	5.2	Խաչքար	13 դդ.	ազուցված է եկեղեցու պատին	Հ	
	5.3	Խաչքար	15 դդ.	ազուցված է եկեղեցու պատին	Հ	
	5.4	Խաչքար	1556 թ.		Հ	արձանագիր
	5.5	Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու պատին	Հ	արձանագիր
	5.6	Տապանաքար	1417 թ.		Հ	արձանագիր
	5.7	Տապանաքար	16-17 դդ.		Հ	արձանագիր
	5.8	Տապանաքար	1674 թ.		Հ	արձանագիր
	5.9	Տապանաքար	17 դդ.	ազուցված է եկեղեցու պատին՝ հվ-ան անկյունում	Հ	կենցաղային քանդակներով
6.		ԽԱԶՔԱՐ	13-14 դդ.	գյուղից հս	Հ	
7.		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	ակումբի դիմաց	Հ	
8.		ՄԱՏՈՒԴ ՍԲ. ՀԱԿՈԲ	1893-1902 թթ.	գյուղի հվ կողմում	S	մուտքի մոտ ազուցված է հունարեն արձանագրության բ, 1861 թվակիր քար
	8.1	Խաչքար	9-10 դդ.	ազուցված է մատուռի պատին	Հ	
	8.2	Խաչքար	12-13 դդ.	ազուցված է մատուռի պատին	Հ	
	8.3	Խաչքար	13 դդ.	ազուցված է մատուռի պատին	Հ	

8.4		Խաչքար, կազմող՝Մելքոն	1571 թ.	ազուցված է մատուղի պատին	<	
8.5		Աղբյուր	1902 թ.		S	
9.		ԽԱԶՔԱՐ	10 դ.	գյուղի մեջ, Կենցաղի տան մոտ	<	
10.		ԽԱԶՔԱՐ	10 դ.	գյուղի մեջ	<	նորաշեն սրբատեղ իում
11.		ԽԱԶՔԱՐ	10-11 դդ.	գյուղի մեջ	<	նորաշեն սրբատեղ իում
12.		ԽԱԶՔԱՐ	10-11 դդ.	գյուղի մեջ	<	նորաշեն սրբատեղ իում
13.		ԽԱԶՔԱՐ	11 դ.	գյուղի մեջ, Կենցաղի տան մոտ	<	
14.		ՄԱՏՈՒՌ	1902 թ.	գյուղի մեջ	S	
15.		ՄԱՏՈՒՌ ԶՈՐԱՎՈՐ	միջնադար	գյուղի աե մասում	S	
16.		ՍՐԲԱՏԵՂԻ «ԱՎԵՏԱՐԱՆ»	19 դ.	գյուղի մեջ	S	
17.		ՍՐԲԱՏԵՂԻ ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ	19 դ.	գյուղի մեջ	S	<. Ներսիսյանի այգում

Թանգարանի բացումը տեղի է ունեցել 2015 թվականին և գործում է համայնքի մշակույթի տանը և կառուցվել է համայնքապետարանի աջակցությամբ համայնքի բնակիչ Դավիթ Հակոբյանի հավաքած նմուշների հիման վրա:

Ինչպես երևում է պետական ցուցակի աղյուսակից, գյուղի տարածքում հուշարձանները ներկայացված են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ կառույցների տեսքով, պատմամշակութային կոթողների և հուշաքարերի տեսքով: Առկա են եկեղեցի, մատուռ, սրբատեղիներ, պատմական գերեզմանոց, դամբարաններ, խաչքարեր, աղբյուր, գլխատուն, որոնց զգալի մասը նշված է որպես հանրապետական (<) նշանակության հուշարձան: Առկա է 17 անուն հուշարձան՝ իրենց ենթահամարակալմամբ:

Հուշարձանների պահպանությունն ապահովելուն միտված Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ՀՀ օրենքով սահմանված են պահպանական պայմանակարգեր:

Հուշարձանի տարածքում և պահպանական գոտիների համակարգում դրանց օգտագործման պայմանակարգերը /ռեժիմ/⁸⁹¹⁰

1. Հուշարձանի տարածքում.

արգելվում են՝

⁸ Պայմանակարգերում թույլատրվող աշխատանքները կատարվում են օրենքով սահմանված կարգով,

⁹ Արգելվում է՝ հուշարձանի տարածքում և պահպանական գոտիների համակարգում թույլատրվող աշխատանքների կատարման ժամանակ նոր հայտնաբերված պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտ կամ հնագիտական գտածո հայտնաբերելիս՝ այն թաքցնել կամ շարունակել աշխատանքը (անհրաժեշտ է դադարեցնել և հայտնել լիազոր մարմնին):

¹⁰ Յուրաքանչյուր առանձին հուշարձանի համար սահմանվում է պահպանական գոտիների անհատական պայմանակարգեր՝ ելնելով հուշարձանի և նրա շրջակա քաղաքաշինական իրավիճակի առանձնահատկություններից:

- 1) օգտագործել որպես պայթուցիկ, հրդեհավտանգ, գոլորշագազանման և այլ վնասակար արտադրություն ունեցող նյութերի պահեստներ ու արտադրամասեր,
- 2) տրանսպորտային, գյուղատնտեսական և այլ մեքենաների հավաքակայաններ,
- 3) դինամիկ և վիբրացիոն ազդեցությամբ հաստեցների, հարմարանքների և մեխանիկական այլ շարժիչների արտադրամասեր,
- 4) հուշարձանների համար ջերմային ոչ նպաստավոր ռեժիմ ստեղծող և քիմիական գործուն նյութերի կիրառման արտադրամասեր ու լաբորատորիաներ,

թույլատրելի են՝

- 5) կատարել միայն հուշարձանի, հուշարձանապատկան բեկորների և հնագիտական շերտի (առկայության դեպքում) ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տարածքի բարեկարգման աշխատանքներ,
- 6) օգտագործել հուշարձանի սպասարկմանը, բնույթին և գործառնական նշանակությանը համապատասխան:

1. Պահպանության գոտում.

արգելվում են՝

- 1) հնագիտական շերտի առկայության դեպքում՝ գյուղատնտեսական, հողային շինարարական և այլ աշխատանքները,
- 2) հուշարձանի պատմական միջավայրի և հնագիտական շերտերի անխաթարությունը վտանգող գործողությունները, համայնապատկերի և տեսողական ընկալմանը խոչընդոտող միջոցառումները, առկա շինությունների հավելումները, կոմունիկացիոն հաղորդակցման ուղիների փոփոխությունները, հրդեհավտանգ նյութերի պահեստավորումը,
- 3) հողատեսքերի, գյուղատնտեսական և այլ հողային աշխատանքների բնույթի փոփոխությունները,
- 4) հուշարձանի սպասարկմանը, բնույթին և գործառնական նշանակություն իրականացնել:

թույլատրելի են՝

- 1) հուշարձանի պահպանության գոտու տարածքի բարեկարգման աշխատանքները,
- 2) պատմական միջավայրին անհարիր շինությունների՝ պատմական միջավայրի վերականգնմանը նպաստող կառույցներով փոխարինման աշխատանքները,
- 3) հնագիտական ոչ ակնառու տվյալների դեպքում աշխատանքները կարող են կատարվել պետական լիազոր մարմնի թույլատվությամբ՝ հնագետի հսկողությամբ:
- 4) կարող են կատարվել հիդրոերկրաբանական աննպաստ պայմանների և դինամիկ ազդեցությունների կանխարգելման միջոցառումներ,
- 5) երկարատև ժամանակահատվածում իրականացվող գյուղատնտեսական նույնաբնույթ աշխատանքները,
- 6) հողային, շինարարական աշխատանքների և տնտեսական գործունեության իրականացումը՝ լիազորված մարմնի թույլատվությամբ:

2. Կառուցապարման կարգավորման գոտում.

արգելվում են՝

- 1) տարածքի պատմականորեն ձևավորված հատակագծի և միջավայրի, կամ դրանց պահպանված հատվածների փոփոխությունները,
- 2) հուշարձանի համայնապատկերը խաթարող և տեսողական ընկալման բարենպաստ ուղիներին խոչընդոտող շենքերի և շինությունների հարկայնության բարձրացման անհատանքները, այդ կապակցությամբ՝ նորակառույցների գործառնական նշանակությունների, մասշտաբայնության, առավելագույն բարձրության և ծավալի սահմանը ապահովելու միջոցով,
- 3) արդյունաբերական, տրանսպորտային և պահեստային ձեռնարկությունների, տրանսպորտային բազմաշերտ հանգույցների շինարարությունը:

թույլատրելի են՝

- 4) շենքերի և շինությունների, կոմունիկացիոն հաղորդակցման ուղեգծերի, խողովակաշարերի նորոգման աշխատանքներ,
- 5) գոտու սահմաններում՝ հուշարձանից համեմատաբար հեռու գտնվող տարածքներում և գոտու եզրամասերում, նոր կառուցապատման ապահովման և բնակավայրի համայնապատկերում հուշարձանի պատմագեղարվեստական ընկալումը ապահովելու պայմանով:

3. Լանդշաֆտի պահպանման գոտում.

արգելվում են՝

- 1) հուշարձանի պատմականորեն ձևավորված լանդշաֆտի կառուցվածքային էական փոփոխությանը և շրջակա բնական միջավայրի հուշարձանի հետ կապը ապահովող տարածքների անաղարտ պահպանությանն ուղղված գործունեությունը:

թույլատրելի են՝

- 1) լանդշաֆտի պահպանմանն ուղղված պատմական արժեք ներկայացնող ռելիեֆի, լանդշաֆտի պատմականորեն ձևավորված տեսքի, ջրային տարածքների պահպանության վերականգման միջոցառումները,
- 2) լանդշաֆտն աղճատող շենքերի, շինությունների, գոտուն անհարիր տնկարկների վերացման և բնապաշտպան անհրաժեշտ միջոցառումների կիրառման միջոցառումները,
- 3) լանդշաֆտը չաղավաղող գյուղատնտեսական, հողային և տարածքի բարեկարգման աշխատանքները և տնտեսական գործունեությունը, եթե այն չի վնասում և աղճատում լանդշաֆտը (պետական լիազոր մարմնի համաձայնությամբ):

1.5.1.3.Բնության հուշարձաններ

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Երկրաբանական հուշարձաններ

1.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
32.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
33.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
34.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
35.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
36.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
37.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
38.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
39.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
40.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
41.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
42.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
43.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
44.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
45.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
46.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Զրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
47.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
48.	«Գուֆանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
49.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ
50.	Զորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Զորաղբյուր

Ջրաերկրաբանական հուշարձաններ

1.	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
12.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, Եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
13.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
14.	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
15.	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

7.	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
8.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
9.	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
10.	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Կենսաբանական հուշարձաններ

6.	«Ռեյիկտային կրկես Բյորոլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
7.	«Ալայան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
8.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ապրեի լիճ, լիճ Հայաստանի Կոտայքի մարզում՝ Լեռնանիստ գյուղից 6 կմ հարավ-արևելք, Կլոր Թառ լեռան հյուսիսարևմտյան լանջին: Բարձրությունը ծովի մակարդակից 2250 մ է, մակերեսը՝ 0,6 հա

Մենակսար, Կովասար, հրաբխային ծագմամբ լեռնագագաթ է Հայաստանի Կոտայքի մարզում՝ Լեռնանիստ գյուղից 3 կմ հարավ: Բացարձակ բարձրությունը 2399,4 մ է: Հարաբերական բարձրությունը 250-350 մ է: Հյուսիս-արևմտյան կողմից խառնարանը ունի ճեղքվածք, ուստի լիարժեք խառնարան չէ

1.6. Հողային ռեսուրսներ

«Հողային օրենսգիրքը» ընդունվել է 2001 թվականի մայիսին, որի համաձայն՝ հանրապետության հողային ֆոնդը դասակարգվում է հետևյալ ենթակարգերի.

1. Գյուղատնտեսական
2. Բնակելի
3. Արդյունաբերական կիրառման
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ տնտեսության
5. Հատուկ պահպանվող տարածքներ
6. Հատուկ նշանակության
7. Անտառային ֆոնդի
8. Զրային ֆոնդի
9. Պահուստային ֆոնդի

Լեռնանիստ համայնքի հողային ֆոնդն արտահայտված է հետևյալ հողատեսքերով (հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ).

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ձև N 22

հողային ֆոնդի ակտիվության և բաշխման (ըստ ելատարակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01.07.2021թ.)

Մարզ: 7 (Կող)

Համայնք: 559 (Կող)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Խողի NN	Սեփականության սուբյեկտ									
				Որպանից 12+3+4+8+12*	ՀՀ քաղաքացիների	ՀՀ կառավարական սեփական	հանդեռալին			սխտական			
							ընդամենը (5+6+7)	արված սահմանային օգտագործման	տրված վարձավարության	օգտագործման և վարձավարության չարված	ընդամենը (9+10+11)	տրված սահմանային օգտագործման	տրված վարձավարության
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
1. Գյուղատնտեսական կամ													
1.1	վարձատր			1079.02	886.61	2.49	189.92		79.73	110.19			
1.2	բազմ տնկարկներ												
1.2.1	այլ թվում ² արտասուտ												
1.2.2	խաղողի այգի												
1.2.3	այլ բազմամյա												
1.3	խոտհարց			910.00	818.82		91.18		34.40	56.78			
1.4	արոտ			1835.26			1452.40		97.57	1354.83		341.43	41.43
1.5	այլ հողատեսքեր			434.76			326.19		326.19	108.57			108.57
1	Ուղղամենը			4259.04	1706.43	2.49	2059.69		211.70	1847.99	491.43	341.43	150.00
2. Մանրակարգների													
2.1	քնակերի			207.16	206.80		0.36	0.36					
2.1.1	այլ թվում ² տնամերձ			206.80	206.80								
2.1.2	արգելափակման (ամառ-և)												
2.2	հասարակական			2.19	0.58		0.89			0.89	0.72		0.72
2.3	խաղող կատարագաղտման												
2.4	ընդամենը			26.75			26.75			26.75			
2.5	այլ հողեր			20.94	0.02		20.92			20.92			
2	Ուղղամենը			257.04	207.40		48.92	0.36		48.56	0.72		0.72
3. Արդյունաբերության, ընդհանուր և այլ արտ.													
3.1	արդյունաբերության			0.17	0.13		0.04			0.04			
3.2	գյուղատնտեսական,			15.71	2.58		12.98			12.98	0.15		0.15
3.3	պահեստարանների												
3.4	ընդհանուր օգտագործման												
3	Ուղղամենը			15.88	2.71		13.02			13.02	0.15		0.15
4. Անկախ/այլ սպասարարական կամ/և այլ.													
4.1	էներգետիկայի			0.10		0.10							
4.2	կոստի			0.10			0.10			0.10			
4.3	տրանսպորտի												
4.4	կոմունալ			0.22			0.22			0.22			
4	Ուղղամենը			0.42		0.10	0.32			0.32			
5. Հասուն պտղատու/արտադրող սուբյեկտների													
5.1	քնաբուսածախսական												
5.1.1	այլ թվում ² արդյունաբերող												
5.1.2	արդյունաբերող												
5.1.3	ագոլային												
5.2	արտադրարական												
5.3	հանգստի												
5.4	պատմական և			7.78			3.10			3.10	4.68		4.68
5	Ուղղամենը			7.78			3.10			3.10	4.68		4.68
6. Հ													
6	Ուղղամենը												
7. Անտառային													
7.1	անտառ												
7.2	թվում												
7.3	վարձատր												
7.4	խոտհարց												
7.5	արոտ												
7.6	այլ հողեր												
7	Ուղղամենը												
8. Բլային													
8.1	գետեր												
8.2	քամաքարներ												
8.3	լճեր			0.49							0.49		
8.4	քամաքարներ			0.30			0.30			0.30			
8.5	Խիչուրտնի, և քրտնոտ, այլ			0.08			0.08			0.08			
8	Ուղղամենը			0.87			0.38			0.38	0.49		0.49
9. Պանտասային													
9.1	արդյունաբերող												
9.2	ավազատններ												
9.3	ճակիճներ												
9.4													
9.5	այլ անօգտագործելի												
9	Ուղղամենը												
ԸՆԴԱՄԵՆՆԸ ՀՈՒՆԻՆ՝ 12+3+4+5+6+7+8+9 ²				4941.03	1915.54	2.59	2125.43	0.36	211.70	1913.37	497.47	341.43	156.04

Գյուղատնտեսական հողերը խնայողական օգտագործելու նպատակով հարկ է կայուն գյուղատնտեսության կիրառում, որը ներառում է շահեկան արտադրական տարածքները, էկոլոգիական միջավայրը, տեղական և ընդհանուր տնտեսական շահերը, նախորոք մտածելով ապագա սերնդի լիակատար անվտանգության մասին: Կայուն գյուղատնտեսությամբ նապահովման համար անհրաժեշտ է վերահսկել հողի որակը նրա ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները մշտադիտարկումների միջոցով:

Գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից, առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունը, մասնավորապես կոոպերատիվների, ընկերությունների և կամավորության սկզբունքի վրա հիմնված կազմակերպական այլ միավորումների ձևավորման միջոցով: Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության բարձրացման, ընդլայնված վերարտադրության ապահովման, ապրանքայնության մակարդակի բարձրացման, ոլորտի ինտենսիվացման առումով, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունն օրինաչափ գործընթաց է, որը չունի այլընտրանք և բնորոշ է, մասնավորապես, անցումային տնտեսության բոլոր երկրներին:

1.7. Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատակագծային սահմանափակումների համակարգը

Լեռնանիստ գյուղական համայնքի գլխավոր հատակագծում սանիտարա-պաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման չափերը ընդունված են համաձայն ՍՆ և Կ 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաներ»:

1. Էլեկտրաէներգետիկայի ՍՊԳ-ի չափերը (նկատի ունենալով ակուստիկ հաշվարկների և գործիքային չափումների բացակայությունը) ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրասֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ 11-1277 «Պահպանություն աղմուկից և ԳՕՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմկային փորձարկումների մեթոդներ»: ՍՊԳ-երի չափը ընդունված է 20մ:
2. Էլեկտրահաղորդման գծերի (էՀԳ) պաշտպանական գոտիների չափերը ընդունված են համաձայն «1000Վ բարձր էլեկտրական ցանցերի պահպանման կանոնների» հիման վրա՝
Բարձրավոլտ էՀԳ՝
 - 330-500կՎ – 30*մ
 - 220կՎ – 25*մ
 - 110կՎ – 20*մ
 - 35կՎ – 15*մ
 - 6(10) կՎ – 10մ* – գետնի վրա եզրային լարերի պրոյեկցիայի հեռավորությունը:
3. Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՍՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարեր»
4. Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն ՍՆ և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
5. Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ:
6. Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ: Աղբահավաք վայրը գտնվում է գյուղի մոտ:

1.8. Տարածքի տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարները

Լեռնանիստ համայնքի վարչական տարածքը կազմում է 4541.03 հա, բնակչությունը կազմում է՝ ըստ նախագծային առաջադրանքի, 3177 մարդ:

Լեռնանիստ գյուղական համայնքում գոյություն ունեն կուլտուր-կենցաղային օբյեկտներ՝ մանկապարտեզ, դպրոց, մշակույթի տուն, փոստ, բուժկետ: Համայնքում գերիշխում է գյուղատնտեսությունը, անասնապահությունը, այգեգործությունը և բանջարաբուծությունը: Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են՝ դաշտավարությունը, բանջարաբուծությունը, անասնապահությունը:

Գյուղն ամբողջությամբ գազիֆիկացված է: Զեռուցման կենտրոնացված համակարգ գոյություն չունի: Հեռանկարում նույնպես ջեռուցման նպատակով օգտագործվելու է միայն բնական գազ:

1.8.1. Ակնկալվող արդյունքներ

- 12) Համայնքի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 13) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 14) Արդյունաբերության զարգացում
- 15) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 16) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
- 17) Համայնքի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 18) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 19) Համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 20) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 21) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
- 22) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

1.9. ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

1.9.1. Մթնոլորտային օդի պահպանություն

Մեթոդակարգային մոտեցումներ

Որպես որոշիչ կոնցեպցիա ընդունված է՝ առաջնահերթ միջոցառումների առանձնացումը, որոնց իրականացումը թույլ չի տա օդային ավազանի աղտոտվածության մակարդակի բարձրացում: Օդային ավազանի աղտոտվածության վիճակի գնահատականը ընդգրկում է հետևյալ էտապները՝

- մթնոլորտ համախառն արտանետումների որոշումը (գումարային և ինգրեդիենտներով), ջեռուցման, ավտոտրանսպորտի արտանետումների տեսակարար կշռի գնահատմամբ:
- ամբողջական աղբյուրների արտանետումների տարեկան և օրական քանակների հիման վրա մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակների կանխատեսում:
- մթնոլորտային օդի աղտոտվածության գոտիների գնահատումը հիգիենիկ իրավիճակով
- գյուղի տարածքի գնահատումը ըստ օդային ավազանի աղտոտվածության իրավիճակի բարենպաստության աստիճանի:

Զեռուցման արտանետումները որոշված են հաշվարկային եղանակով, վառելիքի քանակի հիման վրա:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշված են գյուղում հաշվառված ավտոմեքենաների քանակից և խմբերից ելնելով:

Տարածքի գնահատականը օդային ավազանի իրավիճակով տրված է բազմաբնույթ անալիզի հիման վրա՝ մետեոպոտենցիալի, ուլտրամանուշակագույն ճառագայթման, տեղումների, ռելիեֆի և սոցիալ-տնտեսական ցուցանիշների (բնակչության խտություն, արդյունաբերական պոտենցիալ, ավտոճանապարհների խտություն, ֆոնային աղտոտվածություն) հաշվառմամբ:

1.9.2. Ֆոնային աղտոտվածություն

Լեռնանիստ գյուղի բնակչության քանակը ներկայումս կազմում է 3177 մարդ, հեռանկարում՝ 3495 մարդ: Գյուղի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³, վերցված են ՀՀ Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կայքից (ըստ բնակչության քանակի) և բերված է աղյուսակ 7.2.1-ում:

Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները մգ/մ³

Աղյուսակ 7.2.1

NN ը/դ	Աղտոտող նյութերի կոդը և անվանումը	ՄԹԱ մգ/մ ³	Ֆոնային կոնցենտրացիաները Աղավնատուն գյուղում	
			մգ/մ ³	Միավոր ՄԹԿ
1	Փոշի	0.5	0.2	0.4
2	Ծծմբի երկօքսիդ	0.5	0.02	0.04
3	Ազոտի օքսիդներ	0.2	0.008	0.04
4	Ածխածնի օքսիդ	5.0	0.4	0.08

1.9.3. Մթնոլորտի աղտոտման աղբյուրները

Լեռնանիստ գյուղական համայնքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները հանդիսանում են ավտոտրանսպորտը և ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները (կոմունալ-կենցաղային):

Լեռնանիստ գյուղի մթնոլորտում վնասակար արտանետումների ցանկը բերված է աղյուսակ 7.3.1-ում /7,8/:

Ներկայումս գյուղի ջերմամատակարարումն իրականացվում է անհատական: Գյուղը գազիֆիկացված է 90.9 %-ով, իսկ ջեռուցման 9.1%-ը իրականացվում է փայտով: Լեռնանիստ գյուղի մթնոլորտում գերակայող վնասակար արտանետումների ցանկը բերված է աղյուսակ 7.3.1-ում:

Լեռնանիստ գյուղի մթնոլորտում գերակայող վնասակար արտանետումների ցանկը

Աղյուսակ 7.3.1

№№ ը/հ	Անվանումը	Արտանետումների տարեկան քանակը, տ	Վտանգավորության դասը
1	2	3	4
1	Ազոտի օքսիդներ	1.52	2

2	Ածխածնի օքսիդ	1.37	4
3	Կախյալ մասնիկներ	1.06	3
4	Ծծմբային անգիդրիդ	0.064	3
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	4.014	

Մթնոլորտի աղտոտման մեջ զգալի բաժինը ընկնում է ավտոտրանսպորտի վրա; որի արտանետումների քանակները ներկա իրավիճակում բերված են աղյուսակ 7.3.2-ում /9,10/:

Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումները մթնոլորտ

Աղյուսակ 7.3.2

Տրանսպորտի տեսակները	Աղտոտող նյութերը, տ/տարի			
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	Ածխաջրածիններ	Ընդամենը
1. Մարդատար	313.7	18.4	31.1	363.2
2. Ավտոբուսներ	20.7	0.9	3.9	25.5
3. Բեռնատար ավտոմեքենաներ	32.8	3.5	9.8	46.1
Ընդամենը	367.2	22.8	44.8	434.8

Լեռնանիստ գյուղական համայնքի մթնոլորտն աղտոտող աղբյուրների բնութագիրը աղտոտման ծավալներով և տնտեսությանը հասցված տնտեսական վնասի գնահատականով բերված է աղյուսակ 7.3.3-ում /11/:

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և հասցված տնտեսական վնասները

Աղյուսակ 7.3.3

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1	2	3
1. Զեռուցում	<u>4.014</u> 1.0	65.416
2. Ավտոտրանսպորտ	<u>434.8</u> 99.0	11799.0
Ընդամենը	<u>438.8</u> 100	11864.416

Առաջնային վնասակար նյութեր են հանդիսանում 4 ինգրիդիենտ՝ 2-4 դասի վտանգավորության:

Հիմնական աղտոտման աղբյուր հանդիսանում է ավտոտրանսպորտը:

Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետումները ներկա իրավիճակում կազմում են տարեկան ~ 434.8 տ, որը կազմում է գյուղի ամբողջ արտանետումների 99 %:

Ավտոտրանսպորտի մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը ներկա իրավիճակում գնահատվում է տարեկան 11799.0 հազ. դրամ, ջեռուցման արտանետումներից՝ 65.416 հազ. դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը մթնոլորտի աղտոտումից կազմում է տարեկան 11864.416 հազ. դրամ:

1.9.4. Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակ 7.4.1-ում:

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Աղյուսակ 7.4.1

Անվանումը	Գնահատականը			Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով	տարածքի համալիր գնահատականը	
1	2	3	4	5
1. Մեկ գոտի	թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	4541.03

Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 4541.03 հա: Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

1.9.5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն

Բաժինն ընդգրկում է գումարային տվյալների արդյունքների և գյուղի ջրային միջավայրի վիճակի պահպանման վերաբերյալ առաջարկությունների շարադրում:

Բաժնի հիմնական փուլերը ընդգրկում են՝

- ներկա վիճակի վերլուծություն
- կանխատեսելի էկոլոգիական արդյունքներ և միջոցառումների տնտեսական էֆեկտիվություն
- շրջակա ջրային ավազանի պահպանման միջոցառումների վերաբերյալ հիմնական դրույթներ:

1.9.6. Գյուղի ջրամատակարարման և կոյուղու ներկա իրավիճակը և ջրամբարների աղտոտվածության ցուցանիշները

Լեռնանիստ համայնքն ունի արտաքին ջրամատակարարում:

Լեռնանիստ համայնքում ջրամատակարարումն իրականացվում է 3 աղբյուրներից, որոնք ունեն սանիտարական պահպանության արգելման և սանիտարական գոտիներ: Խմելու ջուրը ազգաբնակչությանն է տրվում առանց վարակազերծման:

Ջրի ծախսը գյուղական համայնքում կազմում է 66.6 հազ.մ³/տարի, 182 մ³/օր: Գյուղը կոյուղացված չէ:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են անջրաթափանցիկ հորեր: Պարբերաբար իրականացվում է հորերի մաքրում և կեղտաջրերի հեռացում մոտակա կենսաբանական մաքրման կայան:

Անհրաժեշտ է ջրահեռացման համակարգի կառուցում, առաջնահերթ անհրաժեշտ է կոյուղացնել գյուղը և կառուցել կեղտաջրերի փոքր հզորության մաքրման կայան:

Լեռնանիստ համայնքի ոռոգման ջրի աղբյուր է հանդիսանում Հրազդան-Սուլակ ջրանցքը, ոռոգման ջուր հնարավոր է մատակարարել մեխանիկական եղանակով: Համայնքում ոռոգման ցանց գոյություն չունի: Ներկա դրությամբ բնակչության տնտեսակենցաղային և առևտրային կազմակերպություններից հոսքաջրերի ընդհանուր քանակը կազմում է 132.8 մ³/օր: Հոսքաջրերի՝ արտահոսքից, տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 1.24 մլն դրամ/տարի:

Գյուղի տարածքից անձրևաջրերի արտահոսքն իրականացվում է անկանոն, բնական թեքության հաշվին: Անձրևաջրերի հեռացման համակարգ գոյություն չունի:

Գյուղի տարածքից անձրևաջրերի տարեկան քանակը կազմում է 9367578 մ³/տարի:

Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան 9.2 մլն.դրամ:

2.0. Թափոնների կառավարում

2.1. Աղբավայրեր

Լեռնանիստ գյուղի աղբահեռացման համար չկա նախատեսված աղբավայր: Աղբահանումը կատարվում է անկանոն: Գյուղում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը բերված է աղյուսակ 7.1.1-ում:

Թափոնների ընդհանուր քանակը այժմ կազմում է 635.4 տ/տարի:

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

Աղյուսակ 7.1.1

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Ապակի	3.5	22.2
Մետաղ	3.9	24.8
Պլաստիկ շշեր	2.65	16.8
Այլ պլաստիկ իրեր	4.35	27.6
Թուղթ	3.1	19.7
Այլ թափոններ	82.5	524.2
Ընդամենը՝	100	635.4

2.2. Արդյունաբերական թափոններ

Ներկա իրավիճակում Լեռնանիստ գյուղում արդյունաբերական ձեռնարկություններ չկան, այդ իսկ պատճառով արդյունաբերական թափոնները բացակայում են:

2.3. Գերեզմանատներ

Գյուղն ունի մեկ գերեզմանատուն, որը զբաղեցնում է 3 հա տարածք:

Սանիտարա-համաճարակաբանական տեսակետից վտանգ չի ներկայացնում, քանի որ սանիտարա-պաշտպանիչ 300 մ-ոց գոտին ապահովված է:

2.4. Հողերի պահպանություն

Լեռնանիստի հողաձածկույթը հիմնականում ներկայացված է սևահող կրազերծված խորքային կարբոնատային: Հողային օրենսգիրքը ընդունվել է 2001 թվականի մայիսին, որի համաձայն՝ հանրապետության հողային ֆոնդը դասակարգվում է հետևյալ ենթակարգերի.

1. Գյուղատնտեսական
2. Բնակելի
3. Արդյունաբերական կիրառման
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ տնտեսության

5. Հատուկ պահպանվող տարածքներ
6. Հատուկ նշանակության
7. Անտառային ֆոնդի
8. Ջրային ֆոնդի
9. Պահուստային ֆոնդի

Լեռնանիստ համայնքի հողային ֆոնդն արտահայտված է հետևյալ հողատեսքերով՝

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը – 4541.03 հա

Բնակչության թիվը – 3177 մարդ

Բնակավայրի հողեր – 257.04 հա, որից՝

ա/ բնակելի կառուցապատում- 207.16 հա

բ/ հասարակական կառուցապատում- 2.19 հա

գ/ ընդհանուր օգտագործման-26.75 հա

դ/ այլ հողեր – 20.94 հա

Գյուղատնտեսական նշանակության հողեր – 4259.04, որից՝

ա/ վարելահող – 1079.02 հա

բ/ խոտհարք- 910.0 հա

գ/ արոտ – 1835.26 հա

դ/ այլ հողատեսքեր – 434.76 հա

Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր – 15.88 հա, որից

ա/ արդյունաբերության – 0.17 հա

բ/ գյուղ. Արտադրական – 15.71 հա

Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր – 0.42 հա, որից՝

ա/ էներգետիկայի – 0.1 հա

բ/ կապի - 0.1 հա

գ/ կոմունալ – 0.22 հա

Հատուկ պահպանվող տարածքներ – 7.78 հա, որից՝

ա/ պատմական և մշակութային - 7.78 հա

Ջրային հողեր- 0.87 հա, որից՝

ա/ լճեր- 0.49 հա

բ/ ջրանցքներ-0.30 հա

գ/ հիդրոտնտ.և ջրատնտեսական այլ – 0.08 հա:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, գյուղի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

2.5. Աղմուկի մակարդակի գնահատում /12,13/

Լեռնանիստ գյուղում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է ավտոմեքենաներից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 40 մեքենա:

Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով ճանապարհի երթևեկելի մասից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 36 դԲԱ՝ 45-55 դԲԱ նորմայի դեպքում (համաձայն 15, թիվ 23 գրաֆիկի և СНиП 11-12-77, Часть II, Глава 12. Защита от шума).

2.6. Էլեկտրամագնիսական ճառագայթում

Լեռնանիստ գյուղական համայնքի էլեկտրամատակարարումն իրականացվում է հետևյալ տրանսֆորմատորներով՝ 3-ը -250 կՎտ, 2-ը 400 կՎտ, 1-ը 63 կՎտ, 2-ը 164 կՎտ և 2-ը 160 կՎտ հզորությամբ:

Համաձայն մեթոդակարգի /2/ էլեկտրամագնիսական ճառագայթման վերը նշված աղբյուրները համարվում են սակավահզոր և չեն դիտարկվում ինչպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ:

2.7. Կանաչապատման համակարգ

Ներկա դրությամբ Լեռնանիստ գյուղական համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) գոյություն չունեն:

Գյուղի վարչական սահմաններում եղած գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման հետ կապված, հողօգտագործողները մասամբ փոխել են կոլտնտեսային-սովխոզային պտղատու այգիների ֆունկցիոնալ նշանակությունը (հատուկ նշանակության կանաչ տարածքներ):

Բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր:

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է 1910.43 հա:

Գյուղի կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են աղյուսակ 13.1-ում:

Կանաչ զանգվածների ցուցանիշները

Աղյուսակ 13.1

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ ² /մարդ
1. Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի	-	-
2. Սահմանափակ նշանակության	1910.43	6013,31
ԸՆԴԱՄԵՆԸ	1910.43	6013,31

2.8. Բնակչության կենսակերպի բժշկա-աշխարհագրական վերլուծությունը

Տվյալները ներկայացված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 30.09.2021 թվականի N ՎՀ/19/21002-21 գրությամբ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Լեռնանիստ համայնքը սպասարկող Լեռնանիստի ամբուլատորիայի գործունեության և Լեռնանիստ համայնքի բնակչության հիվանդացության 2020 թվականի դրությամբ տվյալների:

Լեռնանիստի բժշկական ամբուլատորիայի գործունեության առանցքային տվյալներ 2020

NN	Բժիշկների մոտ հաճախումների (ներառյալ կանխարգելիչ) թիվը	Բժիշկների տնային հաճախումների թիվը	Կադրային ներուժ	
			Ընտանեկան բժիշկ	Ընտանեկան բուժքույր
1.	5120	89	1	2

Լեռնանիստ համայնքի բնակչության հիվանդացությունը 2020

N N	Մեծահասակներ		Երեխաներ (0-14 տարեկան)		Երեխաներ (15-17 տարեկան)	
	2	3	4	5	6	7
1						

1.	Հիվանդություններն ըստ բոլոր պատճառների ընդամենը	Այդ թվում՝ կյանքում առաջին անգամ օրհորոշված հիվանդություններ	Հիվանդություններն ըստ բոլոր պատճառների ընդամենը	Այդ թվում՝ կյանքում առաջին անգամ օրհորոշված հիվանդություններ	Հիվանդություններն ըստ բոլոր պատճառների ընդամենը	Այդ թվում՝ կյանքում առաջին անգամ օրհորոշված հիվանդություններ
2.	969	455	174	160	59	59

Լեռնանիստ գյուղական համայնքի սանիտարահիգիենիկ և համաճարակային իրավիճակի բարելավումը համալիր հիմնախնդիր է և կարող է լուծվել հետևյալ միջոցառումների իրականացման հաշվին.

- կյանքի մակարդակի աստիճանական բարձրացման և աղքատության կրճատման (նոր աշխատատեղերի ստեղծում), բնակարանային պայմանների որակի բարձրացման, ջեռուցման և գազիֆիկացման;
- հանգստի լիարժեք գոտիների ստեղծման, ջրային ավազանների աղտոտման կանխարգելման, չարտոնված աղբավայրերի չեզոքացման կատարելագործման, ջրատար և կոյուղու ցանցերի վերականգնման և ընդլայնման;
- շրջակա միջավայրի վիճակի բարելավման՝ կանաչ տնկարկների մակերեսների ընդլայնման:

2.9. Հողերի ռեկուլտիվացիա

Դեգրադացված են համարվում այն հողերը, որոնք մարդու ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ կորցրել են իրենց սկզբնական տնտեսական արժեքը և բացասական աղբյուր են հանդիսանում շրջակա միջավայրի համար: Անթրոպոգեն լանդշաֆտներում մարդու ազդեցիկ ճնշման հետևանքով ոչնչացվել է բուսականությունը, փոփոխվել են մակերևույթային շերտի հիդրոլոգիական ռեժիմները և տեղանքի ռելիեֆը, ոչնչացվել կամ աղտոտվել է հողային ծածկոցը: Հողերի ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը պետք է իրականացնեն բոլոր շահառուները՝ հողօգտագործողները, հողատերերը, վարձակալները: Ռեկուլտիվացիայի (վերականգնում) տեսակները՝ Գյուղատնտեսական: Իրականացվում է աշխատանքների այնպիսի համալիր, որպեսզի հողերը հնարավոր լինի օգտագործել գյուղատնտեսական նպատակով: Անտառային: Քայքայված հողերի օգտագործում անտառների տնկման և էրոզիայի դեմ պայքարելու նպատակով: Ձկնատնտեսային: Վերականգնված հողային տարածքներում ջրամբարների կառուցում ձկների բուծման նպատակով

Ջրադեպային: Վերականգնված հողային տարածքների վրա տարբեր նպատակներով ջրամբարների ստեղծում: Ռեկրեացիոն: Ռեկուլտիվացված հողերի վրա հանգստյան և զբոսաշրջային վայրերի ստեղծում: Շինարարական: Խախտված և քայքայված հողերի վերականգնում մինչև այն աստիճան ,որ հնարավոր լինի դրանք օգտագործել շինարարական նպատակներով: Հողերի ռեկուլտիվացիան իրականացվում է հատուկ սահմանված կարգով՝ հողային աշխատանքների հետ միասին կամ ոչ ուշ, քան հողային աշխատանքների ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

Հողերի ռեկուլտիվացիան կատարվում է 2 փուլով՝

Տեխնիկական — նափատեսվում է պլանավորում, ակոսների ձևավորում, բերրի հողաշերտի հանում և տեղափոխում, հիդրոտեխնիկական և մելիորատիվ կառույցների կառուցում, թունավոր նյութերի խորը թաղում, ինչպես նաև այլ աշխատանքների իրականացում՝ հետագայում ռեկուլտիվացված հողերի նպատակային օգտագործման համար:

Կենսաբանական — ներառում է ագրոտեխնիկական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր, որոնք ուղղված են ագրոֆիզիկական, կենսաբանաքիմիական և հողի այլ հատկությունների բարելավմանը:

Հողերի բերրի շերտի հանված մասն օգտագործվում է խախտված հողերի ռեկուլտիվացիայի կամ ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար: Բերրի հողաշերտի այլ նպատակով օգտագործումը, որը կապված չէ գյուղական և անտառային տնտեսության հետ, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ տնտեսապես նպատակահարմար չէ կամ բացակայում է գյուղատնտեսական նշանակության և անտառային ֆոնդի հողերի բարելավման նպատակով օգտագործման հնարավորությունը: Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիայի մեթոդները և նպատակները. Հողերի ռեկուլտիվացիայի նպատակն է վերականգնել առաջնային նշանակության հողատարածքները, որոնք դուրս են մնացել գյուղատնտեսության բնագավառում օգտագործումից: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ճիշտ կազմակերպման համար պետք է անցկացնել հողի որակական գնահատում՝ սահմանված բալերով, որոնք արտահայտում են հողի բերրիության մակարդակը տվյալ տնտեսության համար, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ օգտագործել երկրի հողային ֆոնդը և պլանավորված կերպով բարձրացնել հողի բերրիությունը: ՀՀ հողային ծածկույթի յուրօրինակությունը, տարբեր հողատիպերի առկայությունը և խոնավացման տարբեր աստիճանները պահանջում են ռեկուլտիվացիոն միջոցառումների տեխնոլոգիաների տարբերակում:

1. Բույսերի նորմալ կենսագործունեության համար հողի ներքին հատկությունների փոփոխում՝ ստեղծելով բարենպաստ ջրաօդային ռեժիմ մելիորատիվ գործունեության միջոցով, հողերի թթվայնության օպտիմալ վիճակ՝ կրայնացմամբ, հողում հումուսի բավարար պաշարի և սնուցման համար անհրաժեշտ տարրերի օպտիմալ քանակության ապահովություն հանքային և օրգանական պարարտանյութերի ներմուծման ճանապարհով:
2. Հողատարածքների վիճակների բարելավում:
3. Միջոցառումներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարձրացմանը:

Հողերի բերրիության բարձրացման մեթոդներն են՝

կենսաբանական — հողում օրգանական նյութերի առաջացման և քայքայման գործընթացների կարգավորում, մշակաբույսերի ճիշտ ընտրություն, ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպում,

քիմիական — հանքային պարարտանյութերի, կրային և կավային հողերի օգտագործում, որոնք ապահովում են հողի բերրիություն

ֆիզիկական — հողի ագրոֆիզիկական հատկությունների կառուցվածք, խտություն, ծակոտկենության և հերկվող շերտի կառուցվածքային վիճակի փոփոխություն: Ռեկուլտիվացիայի ավելի արդյունավետ արդյունքներ են ստացվում նշված երեք մեթոդների զուգակցումից:

ԳԼՈՒԽ 2 ԼԵՌՆԱՆԻՍԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

2.1. Հեռանկարային տնտեսական և տարածքային զարգացման հայեցակարգ

Լեռնանիստ գյուղի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերի տնտեսական և տարածքային զարգացման հիմնախնդիրները քաղաքաշինական գործունեության ներկա փուլի առավել սուր և բարդ պրոբլեմներից են: Այս կապակցությամբ գյուղի զարգացման հիմնախնդիրները դիտարկվել են հետևյալ գործոնների հետ փոխկապակցված.

- ✓ Համայնքի դիրքը Կոտայքի մարզի տարաբնակեցման համակարգում,
- ✓ Բնակչության աճի դինամիկան,

- ✓ Տարածքային ռեսուրսների օգտագործման միտումները և արդյունավետությունը,
- ✓ Տրանսպորտային կապերը, դրանց կատարելագործման հնարավորությունները,
- ✓ Տրանսպորտային մատչելիության գոտում գտնվող ռեսուրսային (հումքային, գյուղատնտեսական) պոտենցիալի օգտագործման հնարավորությունները և արդյունավետությունը,
- ✓ Տնտեսության տարբեր ճյուղերի փոխկապակցվածության, գերակա ճյուղերի զարգացման խնդիրները,
- ✓ Ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման հնարավորությունները,
- ✓ Գոյություն ունեցող շինությունների, կենսաապահովման գծերի ու օբյեկտների ուժեղացումը՝ սեյսմիկ վտանգի մակարդակին համապատասխան սեյսմակայունության բարձրացմամբ:

Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման համար կարևոր գործոններ են գյուղական համայնքի տարածքում զարգացած անասնապահությունը, ոչխարաբուծությունը:

2.1.1. Բնակավայրի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները

Բնակավայրի հատակագծային հեռանկարային կառուցվածքի ձևավորման մեթոդական հիմք են ծառայել.

- ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի՝ հիմնադրույթներով ինտենսիվ յուրացված գոտու տարածքում տեղակայված բնակավայրերի համար ամրագրված տարածքային աճի սահմանափակման սկզբունքը,
- Սեյսմիկ վտանգի պայմաններում բնակավայրի բոլոր կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիությունն ու կայունությունն ապահովող սկզբունքները (բնակելի գոտու ռելիեֆին և սեյսմիկ վտանգին համապատասխանեցված խտություններ, ներքին պահուստային տարածքների ընդգրկում, կանաչ գոտու ընդլայնում),
- Հին և նոր թաղամասերի հատակագծային օրգանական կապերի ապահովումը՝ ընդգրկելով բնակավայրի գործառական տարածքում ռեկրեացիայի համար բարենպաստ տեղամասերը և պատմամշակութային հուշարձանները:

2.1.2. Բացեր, կարիքներ և Լեռնանիստ բնակավայրի զարգացման մասով առաջարկություններ

Հանրագումարի բերելով վերը կատարված վերլուծությունները, ստորև աղյուսակում համալիր ձևով ներկայացվում են ի հայտ բերված բացերը, կարիքներն ու դրանց հիման վրա կատարված առաջարկությունները:

ԵՆԹԱԿԱ-ՌՈՒՑՎԱԾՔ	ԲԱՑԵՐ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Թափոնների կառավարում	<ul style="list-style-type: none"> • Բնակելիչները ներգրավված չեն թափոնների ճիշտ կառավարման և վերամշակման ընթացակարգերում: • Բացակայում են աղբի կոնտեյներները կամ տեսակավորման ու վերամշակման հնարավորությունները: 	<ul style="list-style-type: none"> • Թափոնների կառավարում. Կոտայքի Հրազդան համայնքում մեկնարկել են սանիտարական աղբավայրի շինարարական աշխատանքները: Աղբավայրը կառուցվում է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակում:

	<ul style="list-style-type: none"> • Հասարակական վայրերում բացակայում են պատշաճ տեսքով աղբարկղերը: • Աղբավայրը գործում է իր ամբողջ հզորությամբ և ենթակա է կոնսերվացման: 	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել, որպեսզի համայնքապետարանը կարգավորի համայնքի թափոնների հեռացման վայրերը՝ կարևորելով աղբի կոնտեյներների չափը և տարողությունը, ինչպես նաև դրանց տեղակայման վայրերը: • Առաջարկել թափոնների կառավարման մասով իրազեկման արշավի անցկացում, որը կհասցեագրվի դպրոցների երեխաներին և մեծահասակներին՝ թափոնների պատշաճ հեռացման բնապահպանական արդյունքների վերաբերյալ նրանց կրթելու նպատակով: • Տրամադրել վերամշակման ենթակա թափոնների համար նախատեսված կոնտեյներներ և աղբահանության պայմանագիր կնքել մասնավոր ընկերության հետ:
Կոյուղաաջրերի մաքրում	<ul style="list-style-type: none"> • Մասնավոր տների խողովակաշարերը գտնվում են անբավարար վիճակում: • Կոյուղաջրերի հեռացման համակարգերի և դրանց մաքրման կայանների բացակայության արդյունքում կեղտաջրերը արտահոսում են դեպի շրջակա տարածքներ: • Կոյուղաջրերի ոչ պատշաճ հեռացման արդյունքում կարող են աղտոտվել գրունտային ջրերը: • Կոյուղաջրերի կոլեկտորների բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> • Ռազմավարական ծրագիրը պետք է կարգավորի կեղտաջրերի ապակենտրոնացված կառավարումը բնակավայրի բոլոր հատվածներում: • Գործընկերություն հաստատել ՄԱԶՕ կամ այլ կառույցների հետ, ովքեր հետաքրքրություն կդրսևորեն բնակավայրի կեղտաջրերի մաքրման ուղղությամբ՝ կոյուղաջրերի մաքրման առանձնացված կայանի լուծումների մշակմանը ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցում:
Ջրամատակարարում	<ul style="list-style-type: none"> • Խմելու ջրի աղբյուրները չունեն բավարար պաշարներ, գտնվում են ցածր նիշերի վրա: • Ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով: • Խմելու ջրի մաքրման կայանը բացակայում է: • Ջրամատակարարման ցանցերը կարիք ունեն վերանորոգման: • ՕԿՁ-ները ևս կարիք ունեն վերանորոգման: 	<ul style="list-style-type: none"> • Ներկայումս ջրամատակարարման խողովակները հիմնականում փոխարինվում են համայնքի կողմից, • իրականացվում են ջրամատակարարման նոր աղբյուրի շահագործման աշխատանքներ: • առաջարկվում է բնակավայրի տարածքում 2 հատ 450 մ3 ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում պահանջվող նիշերի վրա:
Հասարակական տրանսպորտ	<ul style="list-style-type: none"> • Հասարակական տրանսպորտը բացակայում է: • Շրջանների միջև թերզարգացած տրանսպորտային կապեր: • Կանոնավոր կատարվում են հայմայնքային կենտրոնի հետ 	<ul style="list-style-type: none"> • Առաջարկվում է բարելավել հասարակական տրանսպորտի համակարգը՝ նախատեսելով համայնքային կենտրոնից նվազագույնը երկանգամյա երթուղի մինչև համայնքային կենտրոն (բնակավայրի կողմից նոր միկրոավտոբուսների

	<p>(Հրագրան) տրանսպորտային կապերը:</p> <ul style="list-style-type: none"> • Համայնքի կենտրոնից կապը Լեռնանիստի հետ կատարվում է տաքսիների միջոցով: 	<p>ձեռքբերում), նոր միանման ժամանակակից կանգառների կառուցում (գբոսաշրջային այցելությունների հաշվի առնմամբ): Կանգառներին հարող հատվածներում նախատեսել նաև հեծանիվների վարձակալության կետեր՝ հեծանվային շարժման համար:</p> <ul style="list-style-type: none"> • Կանգառին կից տեղեկատվական կետի (էլեկտրոնային կամ աշխատակցի սպասարկմամբ) նախատեսվում տեղակատվական գրականության տրամադրմամբ:
<p>Կապի հասանելիություն</p>	<ul style="list-style-type: none"> • Բավարար 3G կամ 4G ծածկույթ՝ պայմանավորված լեռնային ռելիեֆով: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանը պետք է խրախուսի հեռահաղորդակցության ոլորտի հիմնական օպերատորներին՝ ցանցի ավելի լայն ծածկույթի ապահովման ուղղությամբ:
<p>Ճանապարհային ցանց</p>	<ul style="list-style-type: none"> • ավտոմոբիլային ճանապարհների ընդամենը 40%-ն է ասֆալտապատված (որոշ մասը՝ բազալտե չորսուներով): • Որոշ ճանապարհներ ամրացված են հենապատերով, ունեն վերանորոգման կարիք: • Երթևեկության ուղղորդիչ և տեղեկատվական նշանների պակաս, ինչը խոչընդոտում է պատշաճ կողմնորոշմանը: • Թաղամասերի գրունտային ներքին ճանապարհների ցանց, (ունեն ասֆալտապատման կարիք): 	<ul style="list-style-type: none"> • Կառավարությունն արդեն իսկ հատկացրել է համայնքների ավտոճանապարհների վերանորոգման և վերակառուցման, պատվարներն ամրացնելու նպատակով: • Համայնքի կողմից ևս անհրաժեշտ է գլխավոր ճանապարհների համար մի շարք ենթակառուցվածքային բարեկարգումներ, ինչպես նաև այն ճանապարհների նորոգում, որոնք կարող են նպաստել գբոսաշրջության զարգացումը: • Իրականացնել հիմնական փողոցներում համապատասխան նշանների տեղադրում: • Համայնքի ռազմավարական զարգացման քառամյա ծրագրում անհրաժեշտ է ներառել անբավարար վիճակում գտնվող, հաճախ օգտագործվող և վերանորոգման կարիք ունեցող ճանապարհները:
<p>Մայթեր, հեծանվային ճանապարհի միացում և փողոցային լույսեր</p>	<ul style="list-style-type: none"> • Ճանապարհները հիմնականում զուրկ են մայթերից, իսկ գոյություն ունեցող մայթերն անբավարար վիճակում են: • Երկրորդական ճանապարհները և փողոցները հազվադեպ են ապահովված լուսավորությամբ: • Փողոցներում հեծանիվ վարելը դժվար է՝ մեծ թեքությունների և փողոցների երկայնքով հեծանվորդների համար նախատեսված արահետների համապատասխան շերտերի բացակայության պատճառով: 	<ul style="list-style-type: none"> • Մայթերն ունեն վերանորոգման կարիք: • Անհրաժեշտ է նախատեսել մայթեր՝ հիմնական ճանապարհների երկու կողմերում և նվազագույնը մեկը՝ երկրորդական փողոցներում: Նշագծել արահետներ հեծանվորդների համար: • Անհրաժեշտ է կատարել արտաքին լուսավորության համակարգի մանրակրկիտ ուսումնասիրություն՝ հասարակական անվտանգության և հարմարավետության ու գրավչության ապահովման տեսանկյունից:

		<ul style="list-style-type: none"> • Քաղաքի արտաքին լուսավորության համակարգը անհրաժեշտ է համալրել էլեկտրախնայող լամպերով: • Անհրաժեշտ է ՄԱԶԾ, ԱԶԲ կամ այլ միջազգային կազմակերպությունների հետ համաֆինանսավորմամբ փուլ առ փուլ իրականացնել արտաքին լուսավորության էներգաարդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ միջոցների ու էներգախնայող լամպերի ձեռքբերումը, ապահովել անհրաժեշտ ենթակառուցվածքները, ինչպիսիք են՝ լարանցումը, հիմքային բարձիկները, փողոցային լույսերի և սյուների տեղադրումը:
Ջրահեռացում	<ul style="list-style-type: none"> • Փողոցներում և կանաչապատ տարածքներում ջրահեռացման գործող համակարգերի բացակայություն, որը առկա թեթությունների պայմաններում նպաստում է փողոցային ծածկույթի քայքայմանը և տարեց տարի նորոգման անհրաժեշտությանը: քայքայված ծածկույթով փողոցներն անհարմար են երթևեկության համար և ոչ գրավիչ՝ այեցյունների համար: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքին ծրագրերով դիտարկել լուծումներ ըստ առաջնահերթությունների, դիտարկելով տեղային լուծումներ, որոնց միջոցով կապահովվի անձրևաջրերի կանոնակարգված հեռացումը:
Էներգամատակարարում/գազամատակարարում	<ul style="list-style-type: none"> • Բնական գազի բարձր սակագնի պատճառով ի շարք տնային տնտեսություններում անցել են ջեռուցման նպատակով փայտի և/կամ էլեկտրաէներգիայի օգտագործմանը: 	<ul style="list-style-type: none"> • ՄԱԶԾ հետ համատեղ կարող է նախաձեռնվել էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիր, որի արդյունքում կոմունալ վճարները նվազել են մոտավորապես 30-40%-ով:
ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏ	ԲԱՑԵՐ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հասարակական նշանակության օբյեկտներ	<ul style="list-style-type: none"> • Հասարակական նշանակության օբյեկտների և տարածքների, ինչպես նաև քաղաքացիների հանգիստի կազմակերպմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> • Նախագծում ամհրաժեշտ է հաշվի առնել հասարակական նշանակության և ժամանցի տարածքների, շենքերի շինությունների ստեղծման և ընդլայնման անհրաժեշտությանը:
Հանրային առողջություն	<ul style="list-style-type: none"> • Տես թափոնների կառավարման և կոյուղաջրերի հեռացման ու մաքրման վերաբերյալ կետերը: 	<ul style="list-style-type: none"> • Տես թափոնների կառավարման և կոյուղաջրերի հեռացման ու մաքրման վերաբերյալ կետերը:
Հանրային կրթություն	<ul style="list-style-type: none"> • Հանրակրթական դպրոցը և մանկապարտեզը գտնվում են բավարար վիճակում, կահույքն ու նյութական բազան կարիք ունի թարմացման: • Շենքերի ջերմամեկուսացման, ջեռուցման և օդափոխության համակարգերը կարիք ունեն արդիականացման: 	<ul style="list-style-type: none"> • Բնակավայրի կրթական բոլոր հաստատությունները ենթակա են վերանորոգման՝ ապահովվելով ջեռուցման և օդափոխության նոր համակարգերով, սանհանգույցներով, ճաշարաններով և անհրաժեշտ այլ ենթակառուցվածքով:

Ֆինանսավորման աղբյուրներ	<ul style="list-style-type: none"> • Փաստացի ծախսերի կարիքները գերազանցում են բյուջեով նախատեսվածները: • Ֆինանսավորման առկա աղբյուրներն անկարող են ապահովել եկամուտների կայուն հոսքը երկարաժամկետ հեռանկարում: • Բնակավայրի կարիքները չեն կարող ամբողջությամբ բավարարվել համայնքի բյուջեի միջոցով: 	<ul style="list-style-type: none"> • Հանրային ենթակառուցվածքների զարգացման և բարելավման նպատակով համայնքապետարանը պետք է հայթայթի դրամաշնորհներ և ստեղծի պետական-մասնավոր գործընկերություններ:
ՆԱԽԱԳԾՈՒՄ	ԲԱՑԵՐ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Նախագծում և գոտիավորում	<ul style="list-style-type: none"> • Անկանոն կառուցապատում՝ պայմանավորված գոտիավորման պատշաճ նախագծի և քաղաքաշինական նորմերի, ինչպես նաև իրավական այլ կարգավորումների բացակայությամբ: 	<ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտ է նախատեսել գյուղի ճարտարապետական միասնական պատկերի ապահովմանն ուղղված միջոցներ: • Անհրաժեշտ է հաշվի առնել հողօգտագործման և գոտիավորման կանոնակարգման անհրաժեշտությանը և նախատեսել բնակավայրի աճի ու ընդլայնման վերահսկմանն ուղղված միջոցներ:
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	ԲԱՑԵՐ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Զբոսաշրջություն	<ul style="list-style-type: none"> • Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի բացակայություն: • Թերզարգացած զբոսաշրջային ենթակառուցվածք՝ միջոցառումներ, ժամանց, հյուրանոցներ և այլն: • Այցելուների թիվը, տրանսպորտային միջոցների տեսակը, ծագման երկիրը և այցելության նպատակը ճշտելու նպատակով որևէ հետազոտություններ կամ հարցումներ երբևիցե չեն կատարվել: 	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանը պետք է հորդորի, որպեսզի համայնքում ստեղծվի պաշտոնական և մշտապես գործող այցելուների տեղեկատվական կենտրոն: Դրա գտնվելու վայրը և չափը պետք է որոշվի իրագործելիության ուսումնասիրությունների միջոցով:
Փողոցային և տեղեկատվական նշաններ	<ul style="list-style-type: none"> • Ցածր ապահովվածություն ճանապարհային և փողոցային նշաններով ուղղորդիչ և տեղեկատվական նշաններով: • Նշանների տեղադրման գծազրական չափանիշների բացակայություն քաղաքում և հարակից տարածքներում: • Լեռնանիստը գովազդող վեբ կայքի բացակայություն: • Լեռնանիստի մարքեթինգային և բրենդավորման տեսլականի բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> • Նախագծով պետք է նախատեսվեն փողոցների և ճանապարհային նշանների տարբեր տեսակների ձևանմուշներ: • Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան վեբ կայք, որի միջոցով այցելուները կտեղեկանան հյուրանոցների, տեսարժան վայրերի, սննդի օբյեկտների, միջոցառումների և փառատոների մասին: • Անհրաժեշտ է համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում մշակել Լեռնանիստի մարքեթինգային և բրենդավորման պատկերը, որը կարող է օգտագործվել բնակավայրի գովազդման նպատակով:

2.2. Հեռանկարային հատակագծային կառուցվածք

Լեռնանիստ գյուղը մարզի և հանրապետության այլ բնակավայրերին կապված է Մ-4 մայրուղու միջոցով: Մայրուղուց մինչև բնակավայրի կենտրոնական հատվածը կազմում է մոտ 8 կմ հեռավորություն (14 րոպե): Ճանապարհը գտնվում է բարվոք վիճակում, թեև գյուղն՝ իր որդեգրած զարգացման ուղղությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար առկա է ճանապարհային ծածկույթին բարելավման անհրաժեշտություն: Բացի այդ, բնակավայրի անվանումը կրող ուղեցույցը գտնվում է մայրուղուց բավականին հեռավորության վրա՝ ճանապարհի ուղաբաժանին, երբ դրա անհրաժեշտությունն արդեն գրեթե չկա: Վերջինս տեսքը ևս կարիք ունի բարփոխման (տես գոտևորման բաժինը):

Համայնքի տարածքի ներկա վիճակի վերլուծությունը տալիս է հետևյալ պատկերը.

Բնակավայրի կառուցապատված հատվածը տեղակայված է բավականին բարդ ռելիեֆային պայմանների համեմատաբար մեղմ հատվածում: Գյուղի հյուսիս-արևմյան հատվածով կառուցապատմաը հարելով կորած երիզում է ձորակը: Գյուղի տարածքը ևս հատվում է երեք տարբեր ուղղություններով ձգվող հեղեղատարներով:

Կառուցապատված հատվածում բարձունքային նիշերը տատանվում են 1864-ից 1975մ-ի սահմաններում:

Բնակավայրի տարածքը անհարթ է, հարուստ ոլորաններով, ընդ որում փողոցները կազմակերպված են անկանոն՝ համաձայն այդ ոլորանների:

Ոչ կանոնավոր ներքին փողոցային ցանցի ձևավորման պատճառ է հանդիսացել նաև սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր փուլերում տնամերձ հողամասերի տարբեր չափաբաժիններով և առանձնատներով կառուցապատումը:

Պայմանավորված նկարագրված բարդ ու կտրտված ռելիեֆային պայմաններով, բնակավայրի փողոցային ցանցը ձևավորվել է՝ հիմնականում ներգծվելով ռելիեֆին և առավելագույնս հարմարավետ թույլատրելի թեքություններ ապահովելով: Այնուհանդերձ, որոշ հատվածներում դրանց ձգվում են ռելիեֆին գրեթե ուղղահայաց ուղղությամբ և զգալիորեն գերազանցում թույլատրելի առավելագույն թեքությունները:

Այնուհանդերձ, նկարագրված անկանոնության մեջ նշմարվում է որոշակի օրինաչափություն և քաղաքաշինական հորինվածք՝

Բնակավայրը կազմավորել է երկու հորինվածքային առանցքների շուրջ. բնական՝ վերոնշյալ բնակավայրը երիզող ձորակի և մարդածին՝ Մ-4 մայրուղուց մոտեցնող արևելք-արևմուտ հիմնական կենտրոնական մայրուղու շուրջ:

Այնուհետև կառուցապատված հատվածը գրեթե շրջանցող և պարփակող փողոցով սահմանափակվել է բնակավայրի կառուցապատումը՝ մինչև հարմարավետության վերին բարձունքային սահմանը:

Բնակավայրի գրեթե երկրաչափական կենտրոնում հարավից՝ հիմնական մայրուղով սահմանազատված և վերին մասում՝ տեղական նշանակության փողոցով սահմանազատված ձևավորել է եռանկյունաձև հասարակական կենտրոնը և դրա շուրջ դարձյալ ռելիեֆին ընդգծված ու գրեթե օղակաձև շառավղային կառուցվածքով ձևավորվել են կենտրոնական փոքր շրջանին զուգահեռ ավելի մեծ որոշակիորեն անկանոն շրջաններ և կենտրոնական միջուկի հրապարակից սկիզբ առնող շառավղային ուղղությամբ օղակների կապող փողոցներից: Փոխհատումների արդյունքում ձևավորվել են ոչ այնքան կանոնավոր, սակայն գրեթե համարժեք չափերով թաղամասեր: Բնակավայրի հյուսիս-արևելյան հատվածում՝ դարձյալ ռելիեֆային պայմաններից բխող, առկա է բավականին կանոնավոր փողոցային ցանց՝ միմյանց զուգահեռ երեք փողոցներով, որոնք ապահովված են երկկողմանի ելքերով դեպի հիմնական շրջանային փողոց: Փողոցային ցանցով պայմանավորված, այս հատվածում կանոնավոր են նաև հողամասերը և դրանց վրա բնակելի տների տեղադիրքերը՝ ձևավորվելով փողոցից միևնույն հեռավորությամբ ետնահանջով կառուցապատման գիծ:

Հիմնական մայրուղային ճանապարհը լայնական կտրվածքում ունի մոտ 12 մ լայնություն, մինչդեռ մյուս փողոցների և մոտեցումների լայնական կտրվածքների չափը կազմում է 3.5-ից 8.5 մետր: Մայրերը մեծմասամբ բացակայում են:

Էական վերակառուցման և նախագծման խիստ կարիք ունի գյուղի ճանապարհատրանսպորտային ցանցը:

Ելքային ցուցանիշներ.

- ասֆալտապատված ճանապարհների երկարությունը՝ 5 կմ
- Տարվա ընթացքում նախատեսված համայնքի ճանապարհների ասֆալտապատում, փոսացում և խճապատում՝ մոտ 3 կմ
- Ձյան ծածկույթից մաքրվող ճանապարհների երկարությունը մոտ 25 կմ¹¹:

Առաջարկ

Աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակրնկալել բնական ռեսուրսների (հումքային, ռեկրեացիոն, տուրիստական, գյուղատնտեսական) տարածքային, բնական ռեսուրսների պոտենցիալ հնարավորությունների ռացիոնալ օգտագործումից և ներդրումային ճկուն քաղաքանությունից:

Այսպիսով, համայնքի հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Ագրոարդյունաբերական համալիրի ձևավորում,
- Ռեկրեացիոն ոլորտի զարգացում, որի շրջանակներում՝
 - հանգստի, առողջության վերականգնման, լեռնակլիմայաբուժական,
 - մշակութային, կրոնական, ճանաչողական, սպորտային, ընտանեկան և տուրիզմի այլ ձևերի ասպեկտներով:

Զարգացման հիմնական ուղղությունների ընտրման և իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների և գործարարության համատեղ գործունեությունը, ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծումը, համայնքի տեղաբնակների մասնակցությունն ու նրանց ավանդական մոտեցումների հաշվառումը քաղաքաշինական կարգավորման հիմնական ուղղությունների և սկզբունքների սահմանման գործընթացում:

Նախկին սոցիալ-տնտեսական փուլի պլանային համակարգով գործող տարածաշրջանի արդյունաբերական համալիրը (սննդի, թեթև, գյուղ մթերքների վերամշակում, տեղական արդյունաբերություն) այլևս չի գործում:

Արդյունաբերական և արտադրական բոլոր օբյեկտները սեփականաշնորհվել են և ներկայումս որոշ մասը կիսաքանդ վիճակում են:

Սույն նախագծով տնտեսական զարգացման հեռանկար դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) պաշարների, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունից, որոնցից կարևորագույններն են՝

- Տարածաշրջանային, մարզային և միջհամայնքային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծումը:
- Արդյունաբերական օբյեկտներում նախատեսվում է շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող առաջավոր տեխնոլոգիաների կիրառում (թափոնների կրկնակի վերամշակում, դրանց վնասազերծում, փակ ցիկլեր և այլն):

¹¹ <http://kotayk.mtad.am/files/docs/44808.pdf>

- Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար տրամադրվող գրավիչ միջավայրի քաղաքաշինական կարգավորմամբ և ճարտարապետական ձևավորմամբ: Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիական արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ արագ և փոքր ծախսերով կարող են յուրացնել նոր տեխնոլոգիաներ և նորարական մշակումներ:

Այդ օբյեկտները ավելի ճկուն են, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման ձևերին:

- Արտադրական օբյեկտների տեղադրումը նոր տեխնոլոգիաներով (հիմնականում գյուղ մթերքների վերամշակում):

- Աշխատունակ բնակչության ներուժի օգտագործում:

- Իրավական և գործարարական տեղեկատվական կենտրոնի ստեղծում՝ բնակչությանն ու հիմնականում ներդրողներին իրազեկելու նպատակով:

Համայնքի հանքահումքային ներուժը փոքր է: Չկան մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր, վառելիքային և պարարտացման հումքեր, սակայն համայնքը տիրապետում է մշակութային հարուստ ժառանգության և ձմեռային ռեկրեացիայի կազմակերպման համար բավականին զգալի ներուժով: Բնակավայրի դիրքն ու դերը տարաբնակեցման համակարգում, բնակավայրի դերի մեծացման հնարավորությունները, այն կարող է վերածվել տարածաշրջանի ռեկրեացիոն բազմաֆունկցիոնալ ենթակենտրոնի:

Ռեկրեացիայի կազմակերպումը կնպաստի՝

- ՀՀ տուրիստական քաղաքականության ռազմավարական ուղղությունների իրականացմանը:

- Նոր տիպի առողջարանների ստեղծմանը:

- Տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների (հիմնականում սպասարկման) օբյեկտների կազմակերպմանը:

- Նոր տիպի աշխատատեղերի ստեղծմանը:

- Կրթական մակարդակի բարձրացմանը:

- Բժշկական սպասարկման, սակավ շարժունակ խմբերի կարիքների հոգման կատարելագործմանը:

- Երիտասարդական, ինչպես նաև մեծահասակների ժամանցի կենտրոնների ստեղծմանը;

- Մարզական, մշակութային համալիրի վերականգնման ու կատարելագործմանը:

- Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներդրմանը:

Ներկայումս Համայնքում իրականացվում են մի շարք ծրագրեր՝ նպատակաուղղված համայնքի հատակագծային կառուցվածքի և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի կատարելագործմանն ու զարգացմանը, համայնքում նոր զարգացող տնտեսության ոլորտների պահանջների բավարարմանը, բնակչության համար առողջ ու գրավիչ կենսամիջավայրի ձևավորմանը:

Լեռնանիստի զարգացման հիմնական ուղիներից մեկը սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում կանխորոշում է ռեկրեացիոն բոլոր ռեսուրսները (կլիմայաբուժություն, բալնոլոգիական բուժում, ձմեռային սպորտի և տուրիզմի տարբեր ձևեր, հիմնականում ճանաչողական տուրիզմի) ռացիոնալ օգտագործումը՝ փոխկապակցված շրջակա բնական լանդշաֆտի և գոյություն ունեցող տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների հետագա կատարելագործման հետ:

Լեռնանիստի ենթագոտու ռեկրեացիոն ուղղվածությունը՝ շուրջտարյա կլիմայաբուժություն, բալնոլոգիա, երկարատև, կարճատև հանգիստ, ձմեռային սպորտ (լեռնադահուկային), տուրիզմի տարբեր ձևերը՝ հատկապես ճանաչողական զբոսաշրջությունը:

Գլխավոր հատակագիծն ու գոտևորման նախագծի ուղեցույցը նպատակ ունեն Լեռնանիստ բնակավայրը դարձնել ինչպես ապրելու, աշխատելու, սովորելու, այնպես էլ այցելությունների, գնումների կամ ճաշելու համար ամենացանկալի վայրերից մեկը՝ հագեցած հանրային և ժամանցային ենթակառուցվածքներով և գործունեության այլ հնարավորություններով:

Համայնքի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումների արդյունքում կանխշշվել են տեղի բնակչության անմիջական պահանջները, որոնց վերլուծությունների արդյունքում առաջադրվել են համայնքի բնակչության կարիքները հաշվի առնող և զբոսաշրջության պոտենցիալ հնարավորությունները զարգացնող ենթակառուցվածքի կազմակերպման ուղղությունները՝ միտված լրացնելու առկա հասարակական, մշակութային և ենթակառուցվածքային բացերը:

Բնակավայրի հատակագծային՝ որոշակի առումով կոմպակտ կառուցվածքի վերլուծությամբ բացահայտվել է հետևյալ պատկերը.

- բնակավայրի ձևավորված հատակագծային կառուցվածքը կրում է հիմնականում անկանոն, սակայն որոշակի հատվածներում նաև կանոնավոր բնույթ: Տեղակայված լինելով ռելիեֆային ինչպես խիստ մեծ թեքություններով, այնպես էլ որոշակի հատվածներում համեմատաբար հարթ պայմաններում, հատակակազմային կառուցվածքը՝ առավելագույնս համապատասխանեցված է ռելիեֆային պայմաններին:
- ընդ որում գործառական առումով ևս գյուղի տարածքը հստակ տարաբաժանված է առանձին ֆունկցիոնալ գոտիների՝ մասնավորապես կենտրոնական միջուկը՝ մշակութային, վարչական և հոգևոր օբյեկտներով: Գյուղի ճիշտ երկրաչափական կենտրոնում, Նշան Մաթևոսյան կենտրոնական պողոտայի երկու կողմում են տեղակայված.
- գյուղապետարանի վարչական շենքը (երկհարանի քարե կանոնավոր շարվածքով, երկթեք լանջավոր տանիքով, տիպային մշակույթի շենք-վարչական կառույց),
- բավականին բարեկարգ հուշապուրակը՝ Հայրենական պատերազմի հերոսների հիշատակին կանգնեցրած հուշարձանով:



Լեռնանիստ գյուղում առկա են մի շարք մշակութա-կենցաղային օբյեկտներ՝

- մշակույթի տուն և գրադարան (համայնքապետարանի հետ նույն շենքում):
- Լեռնանիստի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երկհարկանի շենքն է (բացառությամբ միահարկ անցումի): Շենքը գտնվում է բարվոք վիճակում, վերանորոգվել է 2012 թվականին, ապահովված է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Մանկապարտեզն ունի երկու միջին և մեկ ավագ խումբ, որտեղ հաճախում են 100-ից 120 երեխա: Մանկապարտեզն ունի 20 աշխատող:

Գյուղում գործում է բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ: 2013 թվականի շահագործման հանձնված նորակառույց ամբուլատորիան համապատասխանում է եվրոպական ստանդարտներին՝ ապահովված է ջեռուցման համակարգով և անհրաժեշտ պարագաներով, ունի 6 աշխատող:

Գյուղի մշակույթի տունը զբաղեցնում է 1240 ք.մ. մակերես, վերանորոգվել է 2005 թվականին, սակայն ապահովված չէ ջրով և ջեռուցման համակարգով:

Մշակույթի տանն է տեղակայված նաև համայնքապետարանը: Նույն շենքում է գործում նաև գրադարանը և խմբակներ՝ պար, նկարչություն, հաճախում են 85 երեխա: Մշակույթի տան շենքում բացվել է նաև ազգագրական թանգարան:

Գյուղում կա հանրակրթական դպրոց՝ 362 աշակերտական տեղով: Հասարակական կենտրոնը որոշակիորեն ձևավորված է հասարակական տարաբնույթ օբյեկտներից՝ գյուղապետարանի շենքից, մշակույթի տան, հանդիսությունների սրահից և հուշահամալի-այգու տարածքից: Բացառությամբ գյուղապետարանի տարածքի, որը փոքր ինչ-առանձնացված է հասարակական կենտրոնի մյուս կառույցներից, մյուսները միասնական նախագծով բարեկարգված են: Այստեղ է գտնվում նաև հայրենական պատերազմին նվիրված հուշարձանը: Առանձնացված վայրում առկա է ամբուլատորիա:

Գյուղի հարավ-արևմտյան հատվածում տեղակայված է Զորավոր և Սարոյի Խաչ մատուռները: Գյուղի կենտրոնական հատվածում առկա է նաև գործող Սբ. Հակոբ եկեղեցի:

Բնակավայրի հատակագծային կառուցվածքում տարբեր հատվածներում առկա են արտադրական տարածքներ՝ նախկին տրիկոտաժի ֆաբրիկայի շենքը, գործող գյուղ. արտադրական տարածքներ (գործող ֆերմաներ):


Նախկին ուսուցչի տունը վերակազմավորված է որպես բազմաբնակարան շենք:

Առկա է նաև հյուրատուն՝ գյուղի արևմտյան հատվածում:

Համայնքում գերիշխում է գյուղատնտեսությունը, անասնապահությունը, այգեգործությունը և բանջարաբուծությունը: Առկա է նաև քարի մշակման արտադրամաս:

Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններն են՝ դաշտավարությունը, բանջարաբուծությունը, անասնապահությունը, վերամշակող արտադրությունը, զբոսաշրջությունը:

Գյուղը գրեթե ամբողջությամբ (90%) գազիֆիկացված է: Զեռուցման կենտրոնացված համակարգ գոյություն չունի: Հեռանկարում նույնպես ջեռուցման նպատակով օգտագործվելու է միայն բնական գազ:



Բնակելի ֆոնդի վերլուծության արդյունքները հետևյալն են.

Տների տեղադիրքը գերազանցապես՝ այն հատվածներում, որտեղ ռելիեֆային պայմանները թույլ են տալիս, տեղակայված են հիմնական փողոցին/մոտեցմանը կից՝ որոշակի ետնահանցով:

Բուն շենքերն ու շինություններն իրականացված են տեղական քարով (սև), առկա են նաև այլ տարածաշրջանից բերված նարնջազյն և վարդագույն տուֆ քարով իրականացված շենքեր՝ կանոնավոր քարե շարվածքով: Որպես կապակցանյութ օգտագործված է հիմնականում ցեմենտաավազային շաղախ: Շենքերի միայն ծայրամասային հատվածներում են պահպանվել տեխնիկապես բավարար վիճակում գտնվող շենքեր՝ ասբեստի ծածկաթիթեղներով: Գյուղի առավել կենտրոնական և մուտքային հատվածին հարող հատվածներում տները բարեկարգ են, որոշ հատվածը՝ նորակառույց: Հիմնականում երկու հարկանի, նույն քարից իրականացված ցանկապատերով իրականացված: Ցանկապատերի բարձրությունը տատանվում է 1.5-ից 2.0 մետրի սահմաններում: Առկա են թիթեղից դարպասներ:

Հիմնական փողոցների երկայնքով տեղակայված են լուսավորության սյուներ՝ երգետնյա էլեկտրալարերի ցանցով, ինչպես նաև գազատակարծարման խողովակները:

Նորակառույց կամ վերջրես վերանորոգված տների լուսամուտներն ու դռնային բացվածքներն իրականացված են մետաղապլաստե շջրանակներով: Հին տների նույն տարրեն իրականացված են փայտով: տանիքները ևս տարբեր նյութերից են: Առկա են ինչպես թիթեղից, այնպես էլ ասբեստից և մետաղակղմինչրից տանիքային ծածկեր:

Հարկ է նշել, որ տները չունեն միասնական ոճ և հաշվի առնելով բնակավայրին վերագրվող զբոսաշրջային ուղղվածությունը զուրկ են այդ ոճով պայմանավորված գրավչությունից:

Առաջարկվում է աստիճանական փուլային մեթոդով առավել այցելելի երթուղիների երկայնքով բնակելի տների համար մշակել և տարբեր ֆինանսական միջոցների հաշվին իրականացնել տների բարելավման, արտաքին տեսքի արդիականացման և առավել գրավիչ դարձնելուն միտված միջոցառումներ՝ միասնական նախագծերի, կանաչապատման ուղղագծերի օգնությամբ:

Առաջարկվում է նաև քաղաքային կահավորման տարրերի միջոցով (նստարաններ, պերգոլաներ, տաղավարներ, աղբամաններ, տեղեկատվաան վահանակներ, ճարտարապետական փոքր ձևեր և այլն) բնակավայրի քաղաքաշիանական միջավայրն առավել գրավիչ ու ճանաչելի դարձնել:

Բնակավայրի հեռանկարային հատակագծային կառուցվածքի հետագա գործառնման արդունավետության ապահովման նկատառումներից ելնելով նախատեսվում է վերը նշված վերլուծության արդյունքում իրականացնել հետևյալ միջոցառումների համակարգը.

- նախ և առաջ կանոնակարգել բնակավայրի ներկայումս գոյություն ունեցող հատակագծային կառուցվածքը,
- միասնական լուծում տալ հեռանկարային բնակելի թաղամասերի՝ ի սկզբանե ենթակառուցվածքներով հագեցած հատակագծային կառուցվածքների կազմավորմանը:

Ներկայիս գլխավոր հատակագծով նախատեսվում է գյուղի և համայնքի ընդհանուր տարածքի հատակագծային կառուցվածքի առավելագույն կանոնակարգում՝ փողոցների ցանցի կարգի հստակեցմամբ, հասարակական կենտրոնի ձևավորմամբ, թաղամասերի հավասարապես ապահովմամբ առաջին անահրաժեշտության հասարակական օբյեկտներով՝ հասարակական կանաչի ապահովմամբ, ներքին պահուստային տարածքների համապատասխան գործառական նշանակության սահմանմամբ:

Գյուղի համար առաջարկվում է հետևյալ հատակագծային կառուցվածքը.

- կանոնակարգված և լրացված փողոցային ցանց, դրանց հանգույցներում հասարակական գործառույթների կենտրոնացում,

- գյուղի հասարակական կենտրոնի կազմակերպում բնակավայրի մուտքի մոտ՝ հայրենական պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանի հարևանությամբ, պուրակի բարեկարգում և առավել գործառնական կիրառության առաջարկներ:
- հասարակական սպասարկման օբյեկտների ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով բնակելի թաղամասերը,
- ռեկրեացիոն գոտու կազմակերպում՝ մարզական և այգեպուրակային տարածքի ներգրավմամբ,
- գրեթե բոլոր փողոցների բարելավում:
- գյուղի սպորտային համալիրը, որը ձևավորվում է ռեկրեացիոն գոտում զբոսայգու և տուրիզմի կենտրոնի հարևանությամբ, իրենից ներկայացնում է ֆուտբոլի, վալեյբոլի, բասկետբոլի դաշտեր, ունիվերսալ մարզասրահ, բաց և փակ լողավազաններ և կանաչ տարածություններ, բացօթյա սրճարաններ, ճեմուղիներ և հանգիստ կազմակերպելու ամենամանրամասն միջոցներ:

Որպես հեռանկարային զարգացման հիմնական ծրագրային առաջարկ առաջադրվել է գյուղի հարավ-արևմտյան հատվածում, բնակելի կառուցապատման անմիջականորեն հարող և ձևավորված փողոցային ցանցի շարունակությունը կազմող նոր զբոսայգային միավորի ձևավորում՝ որպես ռեկրեացիոն պոտենցիալի զարգացման համար ենթակառուցվածքի ձևավորման և բնակչության հեռանկարային կարիքների բվարարման համար համապատասխան տարածքների առաջադրման գոտի:

Բնակելի կառուցապատման գոտիները սահմանվել են հետևյալ սկզբունքների ապահովմամբ՝ տարբեր կարիքների համար տեսակի բնակելի տարածքների ապահովման նպատակով և ներառում են առաջարկներ սկսած մեկ ընտանիքի համար նախատեսված բնակավայրից մինչև միջին խտության բազմաբնակարան կառուցապատումները, և միաժամանակ կոչված են խթանել համախմբված ու միասնական թաղամասերի ձևավորումը և անցումային շերտեր ստեղծել այդ թաղամասերի և խառը կառուցապատման, տնտեսական և արդյունաբերական նշանակության գոտիների միջև: Բնակելի կառուցապատման գոտիների խնդիրներն են.

1. բնակչության տնտեսական և սոցիալական տարբեր կարիքների բավարարմանն ուղղված՝ բնակչության բազմաբնույթ հնարավորությունների ստեղծում, պահպանում և խթանում.
2. առկա բնակելի թաղամասերի պահպանություն, ապագա բնակելի կառուցապատումների պատշաճ պլանավորում և նախագծում.
3. առկա և նորաստեղծ թաղամասերի ցանկալի արտաքին բնութագրերի պահպանում և զարգացում.
4. ներդաշնակ բնակելի թաղամասերի ստեղծում՝ շենքերի նախագծային առանձնահատկությունների, ծավալատարածական չափանիշների և օգտագործման թույլատրված ձևերի միջոցով
5. անհրաժեշտության դեպքում՝ առկա բնակելի թաղամասերի յուրօրինակ բնութագրերի, մասշտաբի և միջավայրի պահպանում.
6. համապատասխան հասարակական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի ձևավորում՝ ինչպիսիք են դպրոցները, զբոսայգիները և հանգստի այլ գոտիները, կրոնական հաստատությունները և տրանսպորտի համակարգը.
7. խուսափում այնպիսի օգտագործման ձևերից, որոնք կարող են էպպես աղավաղել գոտու բնակելի բնույթը:

Նոր թաղամասերը ձևավորող փողոցային ցանցը հնարավորինս համապատասխանեցվել է տարածքի ռելիեֆին՝ հարազատ մնալով բնակավայրի արդեն իսկ

կազմավորված կերպարին: Այն սկիզբ է առնում ձևավորված ցանցի մեկ հատվածից և շրջանաձև ավարտվում մեկ այլ անավարտ հատվածի մոտ՝ այդպիսով փակելով փակուղային հատվածներով օղակը:

Քաղաքաշինական հորինվածքը ձևավորված է հյուսիս-հարավ ուղղվածության և երկու փողոցների գրեթե միջնամասով անցնող հորինվածքային առանցքի շուրջ՝ կենտրոնական հատվածում ձևավորելով հանրային կանաչ զբոսայգիների գոտի, ինչպես նաև վերջինիս փոխուղղահայաց և ողջ հատակագծային միավոր երկայնքով ու միջնամասով ձգվող կանաչ ճեմուղուց: Այդ հատվածում կձևավորվեն հիմնական հանրային կանաչ ու ժամանցային տարածքները՝ բավարարելով ինչպես այցելուների, այնպես էլ բնակիչների կարիքները:

Զբոսայգին ամբողջովին կկառուցապատվի 2-րդ փուլի ընթացքում: Դրա տարածքում կկազմակերպվեն տարաբնույթ միջոցառումներ, կկատարվեն կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ: Կկառուցվեն նոր ատրակցիոններ, սրճարաններ և ռեկրեացիոն գոտիներ: Կնախագծվեն զվարճանքի նոր վայրեր, ինչպիսիք են ծառերից կախվող ճոպանային ատրակցիոններով այգին, խաղահրապարակները, ջրաշխարհը, մանկական ավազի խաղահարթակը, կարուսելը, սրճարանները և ժամանցի գոտիները: Չնայած այն բանին, որ զբոսայգում շինությունները կլինեն խիստ սահմանափակ, այնուամենայնիվ կթույլատրվի սրճարանների, զուգարանների կամ զվարճանքի պարագաների վարձակալության փոքրածավալ տաղավարների կառուցումը:

Հատակագծային միավորի տարածքում առաջարկվում է նախաձեռնել այնպիսի կառուցապատում, որը կառաջարկի բնակարանավորման լայն ընտրություն՝ յուրաքանչյուր կենսակերպին և սոցիալ-տնտեսական կարգավիճակին համապատասխան: Այդ մոտեցումը ներառում է ինչպես տնամերձ հողամասերով անհատական բնակելի կառուցապատման գոտի, այնպես էլ միջին խտության քաղաքատիպ (թաունհաուսներ) բնակելի սակավահարկ շենքերով կառուցապատում՝ հասարակական սպասարկման գործառույթների լայն տեսականիով՝ մարդու հիմնական կարիքների բավարարման համար տարածքներն առավելագույնս մոտեցնելով իր բնակության վայրերին: Նշվածի իրականացման համար թաղամասի սահմաններում առանձնացվել են խառը կարուցապատման գոտիներ:

Հատակագծային գլխավոր և երկրորդական առանցքներին անմիջականորեն հարում են հասարակական նշանակության տարածքներ՝ լրացնելու բացակայող ենթակառուցվածքները և



բավարարելու բնակչության և այցելուների կարիքները և նախատեսագելվո ինչպես հյուստաուն-հյուրանոցային եթակառուցվածք, այնպես էլ առևտրային տարածքներ, սննդի ու կենցաղ սպասարկման հաստատություններ: Փողոցային ցանցի օղակաձև փոխհատմամբ ձևավորված կանաչ օղակի ներսում նախատեսվում է հուշարձանի տեղադրում:

Կենտրոնական ճեմուղու երկայնքով նախատեսվում են արվեստանոց-արհեստանոցների, սրճարանների, հուշանվերների վաճառատանների, ավանդական ուտեսների համտեսման սրահների և այլ հանրային տարածքների կազմակերպում: Նույն տարածքում է նախատեսվում նաև տարաբնույթ փառատոների կազմակերպումն ու անցկացումը: Այս կապակցությամբ պետք է մշակվի այս վայրին համապատասխանող տարեկան և կանոնավոր միջոցառումների և փառատոների ծրագիր, ինչը նույնպես զբոսաշրջության կայուն զարգացման գործընթացի մասը կկազմի: Միջոցառումների և փառատոների մտահղացումները պետք է հիմնված լինեն տեղի բնական ու պատմամշակութային ժառանգության, ժողովրդական արվեստի, սովորույթների և ավանդույթների վրա: Փառատոների հաջող կազմակերպումը կարող է ուղղակի դրական ազդեցություն ունենալ տեղական տնտեսության աճի վրա, հզորացնել համայնքները: Նման միջոցառումների շնորհիվ տեղի վաճառականները, արհեստագործները, արհեստավորները, սննդի օբյեկտների, հյուրանոցների և հյուրատների սեփականատերերը կարող են ստանալ իրենց տարեկան եկամուտի մի մեծ մասնաբաժինը: Իր հերթին, տեղի ՓՄՁ-ների կայուն և հուսալի եկամուտների հոսքի արդյունքում հարկերի հավաքագրումը կգրանցի ավելի բարձր ցուցանիշներ:

Տարածքի հարավ արևմտյան եզրամասում առանձնացված է նաև վրանային ճամբարի համար հատված՝ այդ տիպի հանգստի սիրահարների համար: Տարածքի բարենպաստ մատչելիությունը հիմնական հատակագծային միավորի և դրանում տեղակայված հանրային ենթակառուցվածքի առանձին բաղադրիչների ևս առանց մեծ տարածքություններ անցնելու մասնակից լինել բոլոր միջոցառումներին:



Տվյալ հատվածում նոր կառուցապատումների ինչպես նաև գոյություն ունեցողների վերակառուցման գործընթացում պետք է անդրադառնալ կառույցների ձևերի վիզուալ հատկանիշներին և հարակից բաղադրիչներին, ինչպիսիք են դրանց կողմնորոշմանը, համաչափություններին, կառուցապատված և ազատ տարածքների հարաբերակցությունը, տանիքների, ծխնելույզների, պատուհանների և դռների ձևերին, շինանյութերին և այլն: Պատերի, դարպասների, փողոցային կահավորման, բուսածածկման և սալարկման վերաբերյալ մանրամասները ևս պետք է նկատի առնվեն առաջարկների մեջ:

Արհեստագործություն. Հետիոտն փողոցի երկայնքով տեղակայված արհեստանոցների առկայությունը կնպաստի գյուղում երեխաների համար արհեստների ուսուցման կկենտրոնի կազմակերպման: Նախաձեռնության նպատակն է գյուղում հայկական ավանդական արհեստների տարածումը, զբաղվող արհեստավորներին ժամանակակից միջոցներով, գործիքներով և նյութերով ապահովումը՝ միջազգային շուկայում մրցունակ արտադրանքի ստեղծման նպատակով:

Ագրոարդյունաբերական ոլորտի զարգացումը ևս ուղեկցող ոլորտ է զբոսաշրջային զարգացման համար: Գաղափարը կայանում է նրանում, որ որպես սպասարկող ճյուղ՝ գյուղում ընդլայնվի էկոլոգիական գյուղարտադրանքի պատրաստումը՝ գյուղատնտեսական ապրանքներ և շուրջտարյա ջերմոցային արտադրանք ապահովելու նպատակով: Կազմակերպման համրա նպատակահարմար է օգտագործել գյուղի տարածքում առկա գյուղարտադրական տարածքները՝ վերաօգտագործման և ժամանակակից պահանջներին համապատասխանեցման միջոցով: Այս հատվածում ևս կարող են կազմակերպվել այցելություններ՝ ծառայելու որպես բացօթյա դասարան բոլոր տարիքի երեխաների համար, որտեղ նրանք կհյուրընկալվեն և կձանոթացվեն բուսաբանության, այգեգործության և անասնապահության հիմունքներին: Մեծահասակները նույնպես կարող են օգտագործել այս վայրը՝ կաթնամթերքի արտադրության և սննդի պահածոյացման տեխնոլոգիաներին ծանոթանալու նպատակով: Խոհարարական դպրոցը, ռեստորանը և տեղական արտադրանքի խանութը նույնպես կազմում են այս հայեցակարգի մի մասը: Կից բնակավայրերի հետ համագործակցության շրջանակում այդ բնակավայրերում աճեցված մթերքը ևս կարող է վերամշակվել այս տարածքում՝ մեկ բրենդի ներքո արտադրելով տարբեր տեսակի տեղական օրգանական արտադրանք:



Միջոցառումների և փառատոնների կազմակերպում. Համայնքում համապատասխան ստորաբաժանման ստղեծմամբ ինչպես տեղական այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկներին համար պետք է մշակվի այս վայրին համապատասխանող տարեկան և կանոնավոր միջոցառումների և փառատոնների ծրագիր, ինչը նույնպես զբոսաշրջության կայուն զարգացման գործընթացի մասը կկազմի:

Զբոսաշրջության զարգացումը գյուղի զարգացման առանցքն է կազմում: Կայուն զբոսաշրջային հոսքերը կնպաստեն վայրի ինքնությանը բնորոշ զբոսաշրջային պատշաճ ապրանքների ստեղծմանը՝ դրանով իսկ այն դարձնելով եզակի և առանձնահատուկ:

Համայնքային համապատասխան ստորաբաժանման կողմից պարբերաբար պետք է մշակվեն նոր ծրագրեր, որոնք միտված են խթանելու զբոսաշրջությունը և աշխուժացնելու զբոսաշրջային հոսքերը՝ նպաստելով նաև կրթական, տնտեսական, բնապահպանական, ռեկրեացիոն և մշակութային գործունեության տեսակների զարգացմանը:

Բրենդավորումը և գովազդումը բնակավայրի՝ որպես ձմեռային զբոսաշրջության կենտրոնի զարգացման հաջողության մասն են կազմում: Լեռնանիստը պետք է բրենդավորի իրեն որպես «տրորված արահետից» դուրս գտնվող մի վայր, որտեղ կարելի է հայտնագործել հինավուրց ժամանակներից եկած ժառանգություն, մշակույթը, ավանդույթներ և արհեստներ: Բնակավայրի բրենդավորումը տարբեր եղանակներով գյուղի իմիջի գովազդման միջոց է: Կարևոր է նաև ընդունել, որ բրենդավորման կարիքները պետք է համապատասխանեն հնարավորություններին:


Նշաններ և ցուցանակներ

Նպատակն է կարգավորել և սահմանափակել նշանների և ցուցանակների կիրառումը, որպեսզի հնարվոր լինի կանաչել դրանց չափազանց օգտագործումը, լուսավորությունը, մակերեսը կամ բարձրությունը, վարորդների համար անհարմարությունը, համատեղելիությունը տեղադրման հողամասի կամ շենքի հետ՝ բացառելով բնակչության առողջության, անվտանգության և բարեկեցության վրա բացասական այլ ազդեցության հավանականությունը:

Ճանապարհացույցներ. Ճանապարհացույցների համակարգն ընդհանուր հատակագծի մատչելիության ռազմավարության հիմնարար տարրն է: Այն ապահովում է անարգել և անվտանգ ուղղություն դեպի հիմնական նշանակետ:

Ճանապարհացույցների համակարգերը հիմնված են նշանների տիպաբանությունների վրա, ունցից յուրաքանչյուրն ունի որոշակի գործառույթ:

Կողմնորոշող նշանները վերաբերում են ավելի լայն տարածություններին եւ թույլ են տալիս ճանապարհորդին կողմնորոշվել «ճամփորդության ծրագիր» կազմելու համար:



Ուղղություն ցույց տվող նշաններն ուղղորդում են ճանապարհորդին, իսկ նպատակակետի, գտնվելու վայրի կամ նույնականացման նշանները ցույց են տալիս ճանապարհորդության նպատակակետը՝ որոշ լրացուցիչ տեղեկատվությունով:



նշված բոլոր նշանները/ցուցանակները պետք է տեղադրված լինեն ճանապարհի երթևեկելի հատվածից և կողային սահմանագծերից դուրս՝ չխոչնդոտելով կողային տեսանելիությունը:

1. Հանրային նշանակության նշաններ/ցուցանակներ. ոչ առևտրային բնույթի նշաններ/ցուցանակներ, որոնք տեղադրվում են բնակչության համար պետական մարմինների կողմից կամ դրանց հրամանով՝ ներառյալ (սակայն չսահմանափակվելով) անվտանգության, նորխուժումն արգելող, ճանապարհային երթևեկության նշանները:
2. Փոքր ցուցանակներ: Թույլատրվում է տեղեկատվական ցուցանակի տեղադրում:
3. Պետական խորհրդանիշներ. պետական դրոշներ:
4. Շենքերի դեկորատիվ կամ ճարտարապետական անբաժանելի հատկանիշներ:
5. Շինարարական աշխատանքների վերաբերյալ ժամանակավոր ցուցանակներ
6. Հանդիսավոր բացման ցուցանակներ:
7. Բարեգործական կամ համաքաղաքային միջոցառումներ ազդարարող ցուցանակներ:
8. Ուղղորդող ցուցանակներ. հողամասի տարածքում երթևեկությունը կառավարող և կայանատեղի տեղակայությունը ցույց տվող նշաններ:
9. Զբոսայգիներում և հանգստի գոտիներում տեղադրվող նշաններ:

Նշանների չափսերը, բարձրությունը և տեղակայությունը

Համայնքի գլխավոր ճարտարապետը կարող է արտոնել բնակավայրի տարածքում, հետագա կառուցապատման և ընդլայնման, ինչպես նաև առևտրային նշանակության հիմնական գոտիներում գետնի մակերևույթին ազատ տեղադրվող ցուցանակների բարձրության և չափսերի, ինչպես նաև շենքերի վրա տեղադրվող ցուցանակների չափսերի և տեղակայության տեղադիրքը և դրանց վերաբերյալ փոփոխություններ:

2.3. Գյուղի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ինչպես նշվեց առաջին գլխում, բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:

Ոռոգման ջուր չունենալու պատճառով գյուղը դժվարանում է կազմակերպել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

Գյուղատնտեսական տնտեսությունները հիմնականում զբաղված են ցորենի, գարու, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ, որոնք խիստ զգայուն են ջերմաստիճանային տատանումների նկատմամբ և մեծապես կախված բնակլիմայական պայմաններից:

Անձրևային տարիներին որոշ չափով կարելի է բերք հավաքել, իսկ երաշտային տարիներին՝ գյուղացին կորցնում է բերքի 70-80 %-ը:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում ևս դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մուրային շրջանի կազմակերպումը: Առտավայրերը և խոտհարքները 30 %-ի չափով գտնվելով թեք լանջերի վրա, գտնվում են էրոզիայի և հողատրոսության վտանգի տակ:

2.4. Արդյունաբերական զարգացման հեռանկարները

Որպես համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղություններ ընդունվել են՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակումը, բուսաբուծությունը, մեղվաբուծությունը, ռեկրեացիայի կազմակերպումը:

Սույն նախագծով արդյունաբերության զարգացման հեռանկարները դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) ռեսուրսների, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունով, որոնցից կարևորագույնն են.

- Տարածաշրջանի հումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման արդյունաբերության 'բազային' ճյուղերի զարգացման համար:

- Տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրության օգտագործումը՝ ագրոարդյունաբերական ճյուղի զարգացման համար:

- Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմամբ: Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիաներով արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ համեմատաբար արագ և փոքր ծախսերով հնարավոր է յուրացնել նոր տեխնոլոգիաները և նորարարությունները, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման արդիական ձևերին:

Ներկայում բնակավայրում գործում են մի շարք նորաստեղծ ձեռնարկություններ՝ հացի արտադրությամբ զբաղվող, որոնք որոշակիորեն ապահովում են ոչ գյուղատնտեսական ոլորտի աշխատատեղեր:

Առկա են «Կոոպերատիվ ԴՎին» ֆերմերային տնտեսությունը, որն զբաղվում է անասնապահությամբ և կաթի արտադրությամբ, ունի մոտ 34 խոշոր եղջերավոր անասուն:

- Գիտատեխնիկական ճյուղի արդյունաբերական օբյեկտների տեղադրում:

- Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծում:

- Արդյունաբերական օբյեկտներում ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառում:

- Աշխատունակ բնակչության բարձր ներուժի կիրառում:

- Իրավական և գործարարական կենտրոնի ստեղծում՝ բնակչությանը, հիմնականում ներդրողներին իրազեկելու համար:

Համայնքի վարչական տարածքում առկա է բազալտի հանքավայր:

2.5. Ագրոարդյունաբերական հնարավորությունները

համալիրի

զարգացման

Համայնքի ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հնարավորությունը դիտարկված է մարզի ընդհանուր համակարգին ինտեգրման, փոխհամագործակցության կտրվածքով:

Ագրոարդյունաբերական համալիրի արտադրանքի ստացումը, վերամշակումը կազմակերպելու և իրացնելու նպատակով անհրաժեշտ է համայնքի որոշակի՝ ներկայումս սեփականաշնորհված, սակայն մասամբ անգործության մատնված արտադրատարածքների մասնակի վերապրոֆիլավորումը սննդի վերամշակման արտադրատարածքների, տեղական ինքնակառավարման մարմինների և ներդրողների համագործակցությունը՝ տարածաշրջանային, միջմարզային, միջհամայնքային կապերի ստեղծման, առաջին հերթին տարածաշրջանային մեծածախ շուկայի ստեղծման գործընթացում:

Գյուղարտադրական օբյեկտների վերականգնման, զարգացման և վերագործարկման, կամ նորերի կառուցման գործընթացում պարտադիր պայման է հանդիսանում նոր, առաջավոր տեխնոլոգիաներով արտադրության տեղադրումը՝ բացառելով շրջակա միաջավայրի աղտոտումը:

Մսի սպառման մեծ պահանջարկը և, հետևաբար, արտադրության ծավալների կայուն աճը հանգեցրել են արդյունաբերական սպանդի և փաթեթավորման զարգացմանը: Հաշվի առնելով անասնապահությունը՝ որպես բնակաբայրի տնտեսության թե ներկա և թե հառանկարային ուղղություն, կազմակերպվում է բնակավայրում կամ համայնքի տարածքում վերամշակման արտադրության հիմնումը՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

Սպանդանոցները մսի արտադրության հիմնական աղբյուրն են, և դրանց կառուցման և շահագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ կապված ինչպես տնտեսական, այնպես էլ անասնաբուժական, բնապահպանական և նույնիսկ էթիկական ոլորտների հետ:

Սպանդանոցները պետք է նախագծվեն և շահագործվեն այնպես, որ բավարարեն կենդանիների սպանդի ոչ բժշկական և սանիտարական պահանջները և գործողությունների հաջորդականությունը:

Սպանդանոցներում կենդանիների մորթի կազմակերպելու և սպանդանոցային մորթին խրախուսելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի «Պարտադիր սպանդի կիրառման և ժամանակացույցի հաստատման մասին» արձանագրությունը որոշել է այն տարածքները և շրջանները, որտեղ, ըստ ժամանակացույցի, պետք է իրականացվի սպանդանոցային մորթը¹²:

Սպանդանոցների առկա ներուժը և զարգացման հեռանկարները

Պահանջվող քանակի սպանդանոցների հաշվարկն ըստ մարզերի և շրջանների հիմնվել է տարածաշրջանի գյուղատնտեսական կենդանիների քանակի, ինչպես նաև գործող սպանդանոցներից և խոշոր բնակավայրերից տարածաշրջանի հեռավորությունից:

Հաշվարկները կատարվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա՝ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի հետ կապված: Մորթման ենթակա կենդանիների թիվը հաշվարկվել է՝ ելնելով տարեկան տարբեր կենդանիների ակնկալվող ծնելիությունից: Թվերը միջին օրական են, բայց կարող են տարբեր լինել սեզոնից ամիս՝ մորթի սեզոնային բնութագրերի պատճառով: Հաշվարկներն իրականացվել են տարեկան 300 աշխատանքային օր (ամսական 25 օր) մոտավոր հաշվարկով: ՊԵԿ-ի համար սպանդի վճար է հաշվարկվել 12000 դրամ, ՊԵԿ խոզերի համար՝ 3000 դրամ:

¹² Հավելված 7-ում տրված է կառուցման ուղեցույցը

2.6. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային զարգացումը

Ռեկրեացիայի կազմակերպման հնարավորություններն առկա են ինչպես բնակավայրի տարածքում, այնպես էլ դիտարկվել է ներմարզային համակարգի ձևավորման կտրվածքով:

Ռեկրեացիոն ենթագոտիների կազմակերպումը կնպաստի թույլ յուրացված գոտու զարգացմանը՝ տարաբնակեցման ռեկրեացիոն ձևերի կազմակերպումով, էկոլոգիական հիմնականախքի, ինժեներական ենթակառուցվածքների բարելավումով: Ինչպես նշվել է համապատասխան բաժնում, ռեկրեացիոն ոլորտի զարգացման կտրվածքով բնակավայրի կարող է դառնալ աճի ենթաբևեռ՝ անգամ տեղակայված լինելով ձմեռային զբոսաշրջության հիմնական բևեռի՝ Ծաղկածոր քաղաքի բարենպաստ մատչելիության գոտում: Լինելով առավել մատչելի պայմաններով ձմեռային զբոսաշրջության արդյունքի մատակարար, այն կարող է բավարարել ներքին զբոսաշրջիկների համապատասխան խմբերի պահանջարկը:

Բնակչության հանգիստը և բուժումը լրացուցիչ կարելի է կազմակերպել տրանսպորտային մատչելիության բարենպաստ գոտում գտնվող Սևանի ավազանի (հիմնականում հարավային ափի), Կոտայքի մարզի ռեկրեացիոն ենթագոտիներում:


Բուն բնակավայրի տարածքում ռեկրեացիոն-հանգստի գործառույթների կազմակերպման նպատակով հիմնական հասարակական կենտրոնի բարեկարգ տարածքը կազմակերպված է տարբեր ֆունկցիոնալ գոտիներով:

Գործառույթի հետագա զարգացումը և ընդլայնումը կբերի նաև հարակից ոլորտների զարգացման: Ներկայում արդեն իսկ նակետելի են միտումների բնակչության շրջանակում ինքնուրույն զբոսաշրջային երթևեկառուցվածքի առանձին բաղադրիչների (հյուրատների, վրանային ճամբարների, հանրային սննդի, վարձակալության կետերի և այլնի) զարգացման ուղղությամբ: Ոլորտի առավել արդյունավետ գործառնման և բնակչության շրջանակում տվյալ ոլորտում ընդգրկված բնակիչների թիվն ավելացնելու նպատակով անհրաժեշտություն կառաջանա տվյալ ոլորտի ուսումնական դասընթացների կազմակերպման և բնակչության հմտությունների զարգացման:

2.6.1. Հեռանկարային զարգացման հայեցակարգ

Հարմարավետ տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունն ու տարանցիկ երթևեկության հնարավոր աճը նույնպես կարող են նպաստող գործոններ հանդիսանալ զբոսաշրջության զարգացման համար:

Ոլորտի զագացման համար մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:



Միաժամանակ մարզում առկա են զբոսաշրջությանը խոչընդոտող և խանգարող մի շարք գործոններ, որոնց զգալի մասը բնորոշ է ոչ միայն Կոտայքի մարզին, այլ նաև ողջ հանրապետությանը: Սպասարկման ոլորտում առկա ոչ բավարար և ոչ պրոֆեսիոնալ մակարդակը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, հասարակական տրանսպորտի անկանոն և ոչ պատշաճ որակի աշխատանքը, բնապահպանական խնդիրները, մարդկանց մի ստվար մասի մենթալիտետը, հյուրանոցային փոքր ֆոնդը, զբոսաշրջային ուղղությունների ինֆորմացիոն բաղադրիչի հատվածային բնույթն ու ցածր որակը, պատմա-մշակութային օբյեկտներին կից անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունն այն հիմնական խնդիրներն են, որոնց ոչ պատշաճ լուծումը կարող է վտանգել մասսայական զբոսաշրջության ապագան մարզում:

Այն ամենն, ինչ արվում է զբոսաշրջիկներին գրավելու համար, առաջին հերթին պետք է ուղղված լինի և ծառայի տեղական բնակչությանը, այսինքն՝ զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների առաջնային շահառուները պետք է սկզբում լինեն տեղական բնակչությունը, ապա միայն նոր՝ զբոսաշրջիկները: Զբոսաշրջային ոլորտը մարզում չի կարող զարգանալ ավտոնոմ՝ առանց մարզի բնակչության մասնակցության և առանց նրանց առօրյա կենցաղի մի մասը կազմելու: Զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում ապրել «ոսկե վանդակում», այլ մեծ ցանկություն է ունենում իր ժամանակն անցկացնել այն միջավայրում, որտեղ և որով ապրում են տեղի բնակիչները: Եթե բնակչության կենցաղը գրավիչ է, ապա զբոսաշրջիկի ուղևորությունը լինում է ավելի իմաստավորված, իսկ տպավորություններն՝ ավելի վառ: Ավելին, նրանց մի մասի մոտ ցանկություն է առաջանում կրկին վերադառնալու և նորից ապրելու այդ կենցաղով: Առավել հետաքրքիր է հենց այն փառատունը, ծեսը, միջոցառումը, ազգայինի հիմքով գործող ռեստորանը, կամ գյուղական հյուրատունն ու արհեստանոցը, որը բնակչության առօրյա կենցաղի մի մասն է կազմում, քան՝ եթե դա կազմակերպվում է ցուցադրական և արհեստաստեղծ ձևով, միայն զբոսաշրջիկների համար և միայն զբոսաշրջիկների մասնակցությամբ, մեծամասամբ նաև՝ ուռճացված գներով: Բացի այդ էլ՝ բարեկարգ ճանապարհները, մաքուր բնությունը, լավ սպասարկումը, առողջ սնունդն ու սեփական մշակույթին և ավանդույթներին ծանոթանալն, առաջին հերթին, անհրաժեշտ է հենց տեղի

բնակիչներին, ապա նոր միայն զբոսաշրջիկներին: Սեփական քաղաքացիները և նրանց շահերը միշտ պետք է լինեն առաջնային:

2017-ին Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում կառուցվել էր 350 մետր երկարությամբ ճոպանուղի եւ դահուկավազքի սահուղի, սակայն այն մասին, որ այս տարածքը հավակնում է դառնալ ձմեռային տուրիզմի կենտրոն, պարզ դարձավ միայն 2019-ին՝ 2 տարի անց:

Զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով համագործակցում են ճանապարհորդող բլոգերների հետ, թիմում ներգրավում երիտասարդ կադրերի, հաշվի առնում նրանց հետաքրքրություններն ու թարմ գաղափարները:

2019 թվականի ձմռանը մոտ 2000 այցելու արդեն ականատես է եղել այն տարածքին, որտեղ 0,5-1 մետր բարձրությամբ ձյուն է տեղում եւ որտեղ նոյեմբերից մինչև մարտ բնակիչներն իսկական ձմեռ են վայելում:

Ճանապարհների հետ կապված որեւէ խնդիր չի լինում. համայնքապետարանում հավաստիացնում են՝ օնլայն կարգով հետեւում են, ճանապարհների փակվելու դեպքում գործի են դնում համապատասխան մեքենաները:



Հայկական Ski jump park՝ Վրաստանի փոխարեն

Լեռնանիստում լեռներն արեւին հակառակ են, այսինքն՝ լեռնադահուկային սպորտը զարգացնելու համար սա կարող է լինել լավագույն միջավայրը: Ձմեռային սպորտաձեւի մասնագետների այցից հետո գաղափարը քննարկվում է համայնքապետարանի կողմից, եւ արդեն իսկ մեկնարկել են սպորտի զարգացմանն ուղղված առաջին քայլերը:

Նախկինում ձնե տրամպլիններով ցատկելու համար շատերը նախընտրում էին մեկնել Վրաստան: Լեռնանիստում, սակայն, այս տարի կառուցվել է Ski jump park (ցատկելու համար փոքրիկ տրամպլիններ):

5 ամիս ձմեռող Լեռնանիստում, մոտավոր հաշվարկով, բնակվում է 3100 մարդ, իսկ ձմեռային այս գոտի հասնելու համար մայրաքաղաք Երեւանից պետք է ընդամենը 45 կմ ճանապարհ անցնել:

Լեռնանիստն ունի նախադրյալներ դառնալու ձմեռային տուրիզմի կենտրոն, միաժամանակ՝ զարգացնելու արշավախմբային, վրանային, լեռնագնացային, մշակութային, էքստրեմալ, գաստրո տուրիզմի տեսակները:

Տարվա մյուս եղանակների համար էլ որոշվել է զիփլայն կառուցել, ճոպանուղին երկարացնել, հնարավորության դեպքում՝ նորը կառուցել, նոր ճանապարհներ հարթեցնել՝ մոտոտուրերի համար:

Այս բոլոր գաղափարները կյանքի կոչելու համար մեկ տասնյակից ավելի հայ ներդրողներ են հայտնվել, ընդհանուր առմամբ, 20 մլն դրամ է հատկացվել: Ակնկալվում է նաև համագործակցություններ և ներդրումներ Սփյուռքից:

Արդեն կա 5 տուն, որտեղ կարելի է գիշերել էկոտուրիզմի զարգացմանը ծանոթանալու համար, բնակիչներն անգամ գիշերակաց են տրամադրում:

Բացվել են պարի, նկարչության, կարատեի և բռնցքամարտի խմբեր, որոնցում ներգրավված է մոտ 200 երեխա:

Կառավարության և համայնքի համատեղ ֆինանսավորմամբ գյուղում ամբուլատորիա կառուցվեց:

Հաշվի առնելով մարզի զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրները, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Ստեղծել այցելուների կենտրոն, որը այցելուներին կտրամադրի տեղեկություններ Արմավիրի մարզի տուրիստական հնարավորությունների վերաբերյալ, կհամագործակցի Հայաստանի և արտերկրի տուր-օպերատորների հետ,

2) Ստեղծել բրուտագործության կենտրոն,

4) Վերականգնել զբոսաշրջային տեսանկյունից մեծ հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանները,

5) Կառուցել ռեստորան-հյուրանոցային համալիրներ, քոթեջներ,

6) Առանձնացնել հենակետային տուրիստական կենտրոնները և դրանց շուրջ ստեղծել ենթակառուցվածքներ՝ ավտոկանգառներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ,

7) Ընդլայնել ամենամյա կազմակերպվող տոնակատարությունները,

8) Կազմակերպել հեծանվավազքի միջոցառումներ,

9) Կազմել և հրատարակել քարտեզներ՝ ըստ թեմատիկ երթուղիների,

10) Ստեղծել մարզի և համայնքի տուրիստական ինտերնետային կայք,

11) Կազմակերպել մարզի գովազդը արտաքին և ներքին տուրիստական շուկաներում:

2.7. Աճի բևեռներ

Կոտայքի մարզում որոշակիորեն ձևավորված են տարածաշրջանային աճի բևեռներ: Որպես տարաբնակեցման համակարգի հավասարակշռման միջոցառում և համայնքների համաչափ զարգացման գործիք բազմագործոն վերլուծության և համալիր գնահատման արդյունքում ի հայտ է բերվել, որ մարզի զարգացման համատեքստում Լեռնանիստը լիարժեք ներուժ ունի դառնալու ռեկրեացիոն զարգացման աճի բևեռներ, Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքը՝ հոգևոր-մշակութային տուրիզմի զարգացման աճի բևեռ, միաժամանակ խթանելով փոքր ու միջին բիզնեսի զարգացումը:

Թույլ յուրացված գոտիների կամ ինտենսիվ յուրաված գոտիների առանձին՝ համապատասխան պոտենցիալով օժտված տարածքներում առաջարկվում է ձևավորել նոր տիպի՝ տնտեսության և բնակչության գործունեության ավանդական ուղղություններին զուգահեռ նոր առաջարկվող այլընտրանքային ուղղություններ՝ համապատասխան ենթակառուցվածքի զարգացմամբ տարածաշրջանների ոչ արդյունավետ օգտագործվող հատվածներում աճի բևեռի առաջադրմամբ՝ ինչպես գոյություն ունեցող և անկման միտում ապրող բնակավայրերի վերակենդանացմանն ուղղված, այնպես էլ նոր հատակագծային միավորների առաջադրմամբ ներքին աշխատանքային հոսքերի կիզակետեր ձևավորելու:

Աճի բևեռների ներդրման հիմնական գաղափարն այն է, որ տարածական- տնտեսական զարգացումը կամ աճը միասնական չէ ողջ տարածաշրջանի համար, այլ փոխարենը ձևավորվում է հատուկ բևեռի (կամ կլաստերի) շուրջ: Նշված բևեռը բնութագրվում է տնտեսական խթանների՝ հիմնական (առանցքային)՝ արտադրությունների առկայությամբ, որոնց շուրջ զարգանում են հարակից արտադրությունները՝ հիմնական ուղղակի և անուղղակի ազդեցությունների միջոցով: Հիմնական արտադրությունը կարող է ներառել ոլորտների լայն տեսականի՝ ավտոմոբիլային, օդագնացություն, ագրոբիզնես, էլեկտրոնիկա, պողպատի, թեթև, սննդի, վերամշակման և այլն:

Ուղղակի հետևանքները նկատառում են.

2. հիմնական արդյունաբերություն՝ իր մատակարարներից (հարակից մտակարար արտադրություններ) ապրանքներ և ծառայություններ գնելու կամ իր հաճախորդներին ապրանքներ և ծառայություններ տրամադրելու գործընթացը:

Անուղղակի հետևանքները կարող են ներառել.

3. հիմնական և հարակից արդյունաբերության ոլորտներում աշխատող մարդկանց կողմից ապրանքների և ծառայությունների պահանջարկը (մանրածախ վաճառքը), որոնք խթանում են տնտեսական գործունեության զարգացումը և ընդլայնումը:

Աճի բևեռն ունի աշխարհագրական և տարածաշրջանային նշանակություն, քանի որ բնորոշվում է որպես քաղաքային տարածքում տեղակայված և զարգացող արտադրությունների համախումբ, որը նկատառում է տնտեսական գործունեության հետագա զարգացում իր ազդեցության ողջ գոտում: Տարածքը, որտեղ տեղակայված են «ընդլայնվող» կամ «շարժիչ» կամ «գերակայող» արտադրությունները, դառնում է տարածաշրջանի աճի բևեռը և խթանում ազլոմերացիայի միտումները:

Աճի բևեռների ձևավորման գործընթացում հարկ է առաձնացնել բևեռացման 4 հիմնական տեսակ.

4. **տեխնոլոգիական և տեխնիկական** - հիմնված աճի բևեռում նոր տեխնոլոգիաների կենտրոնացման վրա,

5. **եկամուտի վրա հիմնված**. Աճի բևեռը նպաստում է կենտրոնացմանը և եկամտի աճին՝ ծառայությունների ընդլայնման և պահանջարկի ու շահույթի փոխկախվածության միջոցով,

6. **հոգեբանական**, որը հիմնված է շարժվող տարածաշրջանում ապագա պահանջարկի լավատեսական ակնկալիքի վրա,

7. **աշխարհագրական**. հիմնված աշխարհագրականորեն ընտրված տարածքում տնտեսական գործունեության կենտրոնացման վրա:

Այնուհանդերձ, միջազգային փորձը ոլորտում ցույց է տալիս, որ ակնկալվող արդյունքի հարցում կանխատեսումներն իրատեսական չեն:

Գյուղն աստիճանաբար կորցնում է իր գրավչությունը՝ որպես ապրելու և աշխատելու տեղ՝ գործազրկության բարձր մակարդակի և ցածր եկամուտների պատճառով: Չնայած պետության աջակցությանը, գյուղի հիմնախնդիրները դեռ լիովին լուծված չեն: գյուղական բնակավայրերում զարգացել են տնտեսական, սոցիալական և, որպես արդյունք, ժողովրդագրական բնույթի խնդիրներ: Բոլոր մակարդակների տարածքների կառավարման արդյունավետության վրա բացասաբար է անդրադառնում ինտեգրված մոտեցման բացակայությունը, որը օբյեկտիվորեն պետք է բնութագրի գյուղական տարածքների զարգացման առանձնահատկությունները՝ կապելով դրանք գյուղական վայրերում տնտեսական, կազմակերպչական, կարգավորող և իրավական հարաբերությունների ռացիոնալացման հետ: Այս առումով անհրաժեշտ է որոշել մրցունակ տարածքի գերակա հատկանիշները, մշակել և գործնականում ներդնել գյուղական տարածքների համայնքային կառավարում՝ մրցակցային դիրքերը գնահատելու և ղեկավարելու նոր մոտեցումներով, որոնք ապահովում են գյուղական տարածքի ներդրումային և ռեսուրսային ներուժի զարգացման հիմքերը: Հետևաբար, ժամանակակից գյուղական զարգացման ծրագրերը պետք է համարված լինեն համալիր մոտեցմամբ նախագծերով, որոնք ընդգրկում են ոչ միայն գյուղատնտեսական արտադրական ոլորտը, այլև սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքը, զբոսաշրջությունը և գործողունեության այլ տեսակներ, որոնք նպաստում են գյուղական տնտեսության արդյունավետության բարձրացմանը և գյուղական բնակավայրերում կյանքի որակի բարելավմանը:

Վերլուծության փուլերում հայտնաբերված բնակավայրերի ներքին և արտաքին միջավայրային գործոնները ընդհանրացվել են առաջնային SWOT վերլուծության մեջ և դասակարգվել ըստ տարածքի համար դրանց նշանակության աստիճանի: SWOT վերլուծության հիման վրա ձևավորվել են միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի զարգացման ռազմավարական ուղղություններ՝ ամրապնդելու դրանց մրցակցային դիրքը, օգտագործելով ի

հայտ բերված հնարավորությունները և դրանց օգնությամբ հարթեցնելով տարածքի զարգացման գործում բացասական գործոնների ազդեցությունը: Յուրաքանչյուր ոլորտի համար ստացվում են զարգացման սեփական հիմնական ռազմավարություններ:

1. **Դիվերսիֆիկացիայի կամ վերափոխման զարգացման ռազմավարություն**- հիմնված է առկա բնական և հանգստի ներուժի, տարածքի շահավետ աշխարհագրական դիրքի վրա և ուղղորդված է արտաքին միջավայրից բխող վերափոխման հնարավորությունների վրա: Այստեղ ամենաարդյունավետ ռազմավարությունը կլինի շուկայի վրա արտաքին սպառնալիքների մեղմացումը դիվերսիֆիկացիայի միջոցով (նոր ապրանքների և շուկաների զարգացում), այն է՝ տուրիստական և հանգստի կլաստերի զարգացում:

2. **Կերային զարգացման ռազմավարություն** ուղղված է շրջակա միջավայրի սպառնալիքների չեզոքացմանը՝ բնակավայրերի կոնկրետ առավելությունների ամրապնդման միջոցով, ինչպես նաև փոխհատուցելով տարածքների թույլ կողմերը՝ ի հաշիվ արտաքին միջավայրի ընձեռած բարենպաստ հնարավորությունների, համատեղ ձեռնարկություններ ստեղծմամբ հեռանկարային շուկայում ակտիվ աշխատանքների կազմակերպման միջոցով (գիտություն - կրթություն - արտադրություն - բիզնես-կառավարում):

3. **Հարմարվողական (ադապտացիոն) զարգացման ռազմավարությունը** բխում է միկրոռեգիոնի բնակավայրերի ճգնաժամային երևույթների իներցիայից և պահանջում է անհապաղ միջոցառումների իրականացում իրավիճակի կայունացման համար՝ գոյատևման ռազմավարություն: Տվյալ դեպքում առավել խելամիտ է ջանքերի կենտրոնացումը շինարարական կլաստերի զարգացման վրա:

4. **Օպտիմալացման կամ ինտենսիվ աճի ռազմավարություն**. հաշվի է առնում տարածքային զարգացման օբյեկտիվ դրական միտումները և որոշ չափով իրականացնում է վերը նշված ռազմավարությունների դրական գործոնները: Այս տարբերակն իրենից ներկայացնում է միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի կուտակված ներուժի օգտագործումից արտաքին միջավայրի ընձեռած հնարավորությունների միջոցով առավելագույն հետադարձի հնարավորությունները, և ենթադրում են գյուղատնտեսական մթերքների (գյուղարտադրություն, մսամթերքի) կլաստերի զարգացում:

Հաշվի առնելով, որ գոյություն ունեցող ներուժի տեսանկյունից, միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի համար առավել արդյունավետ և հեռանկարային են, դիվերսիֆիկացիայի կամ վերափոխման զարգացման (գբոսաշրջային, ուսումնակրթական) և օպտիմալացման կամ ինտենսիվ աճի ռազմավարությունները՝ հիմնված տարածքի իրական և հնարավոր մրցակցային առավելությունների վրա, նպատակահարմար է թվում ընդունել դրանք որպես հիմնական ռազմավարություններ:

Տարածաշրջանում առկա է Լեռնանիստի պոտենցիալ հնարավորությունը՝ դառնալու կլաստերի ճմեռային գրավչության միջուկ-աճի բևեռ՝ հարակից բնակավայրերի ներառմամբ և առավել խնայողական պահանջարկը բավարարելու տեսանկյունից:

2.8. Նախատեսվող համալիր զարգացման միջոցառումներ

- Կաթնամթերքի, մսի, ինչպես նաև կաթնատու և մսատու անասունների ցեղատեսակների բուծման համալիրի բացում և բանջարեղենի աճեցման ջերմոց կառուցելու համար տարածքների առանձնացում
- Սիլոս խրամահորերի կառուցում:

- Ձեռնարկության աշխատակիցներին բնակարանով ապահովելու խնդիր (Ազրո-բնակավայրի շինարարություն անհատական բնակելի թաղամասում՝ 20-100 տան համար):

2.9. Հասարակական սպասարկման և սոցիալական ոլորտ

Ներկայումս, նոր սոցիալ-տնտեսական զարգացման փուլում մշակութա-կենցաղային օբյեկտների ցանցը կազմավորվում և ընդլայնվում է հիմնականում շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Առևտրական, հասարակական սննդի, կենցաղային, տեխնիկական և այլ տիպի սպասարկումների զարգացումը հնարավորություն է տալիս աստիճանաբար բնակչության սոցիալական ոլորտի հետ կապված հարցերի լուծումը ապակենտրոնացնել և ծանրության կենտոնը տեղափոխել մասնավոր սպասարկումների վրա: Զարգացումը տանում է առևտրի և սպասարկումների մանր, անկազմակերպ և տարերային ձևերից դեպի փոքր ու միջին կայուն, ստացիոնար ձևերի:

Նոր սոցիալ-տնտեսական փուլում հասարակական ոլորտի օբյեկտների նպատակաուղղված զարգացումը տարվել է հիմնականում բուժական և կրթական շենքերի ցանցի վերականգնման ուղղությամբ՝ մեծ մասամբ արտասահմանյան ներդրողների միջոցով: Կուլտուր կենցաղային օբյեկտների ցանցն ընդլայնվում է շուկայական տնտեսության պայմաններին համապատասխան:

Բնակավայրում գործում են 6 առևտրի օբյեկտներ, որտեղ իրականացվում են սննդի, ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք: Գործում են հագուստի, ավտոպահեստամասերի խանութներ, դեղատներ, ավտոսպասարկման կետ, ավտոդողերի վերանորոգման կետ:

Համայնքի սոցիալական ոլորտը ներկայացված է մանկական նախադպրոցական, դպրոցական, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական և բուժական հաստատություններով: Մարզի կրթական համակարգը ընդգրկում է նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և մասնագիտական) և բուհական համակարգերը: Մարզի բնակչությունը օգտվում են Երևան քաղաքի մոտ լինելու հանգամանքից և օգտագործում մայրաքաղաքի կրթական համակարգը միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար:

Մանկապարտեզը 3 խումբ ունի, 100 (120) երեխա է հաճախում:



Սոցիալական հաստատությունների հեռանկարային պահանջնարկի հաշվարկ

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ.	Հայկական	
			Բնակչությունը մարդ	
			3177	3495
			Քանակը	Զբաղեցրած տարածքը (հա)
1	2	3	16	17
Կրթության հիմնարկություններ				
1	Մանկական նախադպրոցական հիմնարկություններ, այդ թվում	տեղ	419	1.7
2	Նախադպրոցականների համար ծածկած լողավազաններ	օբյեկտ	*-/-	*-/-
3	Հանրակրթական դպրոցներ,	աշակերտ		
4	Լ-Մ-րդ դասարաններում	աշակերտ	629	0.9
5	Մասնագիտացված	աշակերտ	*-/-	*-/-
6	Մանկապատանեկան սպորտային դպրոց	աշակերտ	50	
7	Արվեստի մանկական դպրոց, երաժշտական, գեղարվեստական պարարվեստի դպրոց	աշակերտ	63	
8	Գիշերօթիկ դպրոցներ	աշակերտ	ըստ նախագծային առաջադրանքի	
9	Միջնակարգ մասնագիտական և մասնագիտատեխնիկական ուսումնական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ	սովորող	*-/-	*-/-
Առողջապահական, սոցիալական ապահովության հիմնարկություններ				
	Հատուկ տիպի բնակելի տներ և բնակարաններ ծերերի, վետերանների, հաշմանդամների ու միայնակների համար	տեղ	20	ըստ նախագծային առաջադրանքի
	Առողջապահական ստացիոնարներ	մահճակալ	ըստ նախագծային առաջադրանքի	
	Պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, առանց ստացիոնարի դիսպանսերներ	Հերթում հաճախում	0.1 հա/ 100 հաճախում մեկ հերթափոխում	
	Շտապ բուժական օգնության կայաններ	ավտոմեքենա	0.35	0.1
Առողջարանակուրորտային և կազդուրչական, հանգստի և տուրիզմի հիմնարկություններ				
	Առողջարանակուրորտային և կազդուրչ., հանգստի և զբոսաշրջ. հիմնարկություններ, հյուրանոցներ	տեղ	ըստ նախագծային առաջադրանքի	140մ ² 1 տեղին
Մարմնակրթական, սպորտային կառույցներ				

	Մարմնակրթական -սպորտային կառույցներ, (տարածքը)	հա		2
	ընդհանուր օգտագործման սպորտային դահլիճներ	մ ²		245
	Ընդհանուր օգտագործման բաց և ծածկած յոդավազաններ	մ ³		70
Մշակույթի և արվեստի հիմնարկություններ				
	Ակումբներ	տեղ	280	ըստ նախագծային առաջադրանքի
	Կինոթատրոն	տեղ	87	ըստ նախագծային առաջադրանքի
	Թատրոն	տեղ	28	ըստ նախագծային առաջադրանքի
	Գրադարաններ	ընթերցող	14	ըստ նախագծային առաջադրանքի
Առևտրի, հասարակական սննդի և կենցաղային սպասարկման հիմնարկություններ				
	Խանութներ	մ ² առևտրային մակերես	1048	0.84
	Շուկա	մ ² առևտրային մակերես	84	1174.2
	Հասարակական սննդի հաստատություններ	տեղ	140	5.1
	Կենցաղային սպասարկման ձեռնարկություններ	աշխատատեղ	24	0.2
	Քիմմաքրման կետեր	կգ	40	
	Բաղնիք	տեղ	24	12.2
Կառավարման կազմակերպություններ և հիմնարկություններ, վարկաֆինանսական հիմնարկություններ և կապի ձեռնարկություններ				
	Կապի հանգույց	Ըստ Կապի նախարարության նորմերի և կանոնների		
	Կառավարման կազմակերպություններ և հիմնարկություններ	ըստ նախագծային առաջադրանքի	ըստ նախագծային առաջադրանքի	
	Բանկի մասնաճյուղեր	1 պատուհան	1 պատուհան	1 պատուհան
Բնակելի-կոմունալ տնտեսության հիմնարկություններ				
	Հրշեջ դեպո	Հրշեջ մեքենա	2	6.3
	Հյուրանոցներ	տեղ	21	5.1
	Հանրային զուգարաններ	սարք	3	
	Ավանդական թաղման գերեզմանատուն	հա		0.8
*-հողամասերի չափերը նպատակահարմար է վերցնել 2 հա-ից ոչ պակաս՝ բնակավայրից դուրս				

***-տարողությունը և կառուցվածքը որոշվում է առողջապահական մարմնի կողմից և ներկայացվում է նախագծման առաջադրանքում*

2.10. Բնակչություն

ինչպես նշվել է նախագծի առաջին գլխում, բնակչության նախնիների մի մասը 1828-1829 թթ. գաղթել է Խոյի, Մակուի ու Սալմաստի գյուղերից: Բնակչության ամենամեծ քանակը եղել է 2016 թվականին և կազմել է 3246 մարդ¹³: 2018 թվականին՝ արտագաղթի արդյունքում բնակչության թվաքանակը զգալիորեն կրճատվել է՝ կազմելով 2877 մարդ:

Ներկայում բնակավայրի բնակչության թվաքանակը կազմում է 3177 մարդ:

Հեռանկարային կանխատեսումները կրում են խիստ մոտավոր բնույթ, վիճակագրական տվյալներ չեն տրամադրվում, այնուհանդերձ, հաշվի առնելով ինչպես վերջին տարիներին արձանագրված բնական աճի միտումները, գյուղի հեռանկարային բնակչության գրավչության արդյունքում նաև որոշակի փոքրաքանակ ներքին տեղաշարժը, հաշվարկային հեռանկարի համար այդ ցուցանիշը կկազմի 3500 մարդ: Անկանխատեսելի զարգացումների դեպքում կկատարվի վերահաշվարկ և հեռանկարային զարգացման տարածքների վերագնահատում:

2.11. Ճանապահային ցանց

Բնակավայրին մոտեցումը միջպետական Մ-4 մայրուղուց կատարվում է միջհամայնքային ճանապարհի միջոցով: Ճանապարհի կարծր ծածկույթն իրականացված է ասֆատով, որը սակայն

ունի պահպանվածության տարբեր աստիճան՝ որոշ հատվածներում այն լիովին պահպանված է, այլ մասերում՝ քայքայված, որոշ հատվածներում կարծր ծածկույթը բացակայում է, առկա են փոսեր:

Ներքին ցանցը ևս տարբեր նյութերով է պատվածքը: Առավել մեծ թեքություններով մուտքային հատվածում այն իրականացված է գրանիտե չորսուններով (բուլիժնիկ), որը գերազանց պահպանված է և տվյալ հատվածում ապահովում է անվտանգ ու ապահով երթևեկություն՝ ապահովելով նաև անհրաժեշտ կաչողունակության եղանակային վատ ապյմանների պարագայում (անձրև, ձյուն):

Մինչև գյուղապետարան ճանապարհին ասֆալտապատ է և վերջինս գտնվում է լավ վիճակում: Գյուղում կատարվել են մոտ 3.5 կմ հատվածի ասֆալտապատման աշխատանքներ: Իրականացվել են նաև

գյուղի դաշտամիջյան ճանապարհների հարթեցման և խճապատման աշխատանքներ: Այնուհանդերձ առկա է մոտ 10.5 մ երկարությամբ ճանապարհի ընթացիկ և կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն: Վերանորոգման անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն տեխնիկական վիճակի առումով, այլ նաև որպես զբոսաշրջային գրավչության նոր նպատակակետ փողոցային ներքին ցանցը ձեռք է բերում այլ կարևոր նշանակություն՝ ինչպես իր գեղագիտական հատկանիշներով, այնպես էլ բավարար լայնական կտրվածքով, երկայնական թեքություններով, ավտոկայանման հնարավորությամբ և կից ապշտպանիչ կանաչապատմամբ:



¹³ <http://kotayk.mtad.am/files/docs/24491.pdf>

Բավարար երկշերտ լայնական կտրվածքն ու բարեկարգ մայրերի առկայությունը հնարավոր կդարձնեն ինչպես առավել հարմարավետ տրանսպորտային և հետիոտն երթևեկության կազմակերպման համար, այնպես էլ հնարավոր արտակարգ իրավիճակներում մարդկանց տարահանումն առավել արդունավետ կազմակերպելու և առավել կարճ ժամկետում միջպետական մայրուղուն հասանելիություն ապահովելու համար:

Գյուղի կենտրոնական հատվածում, մինչև 350 մ երկարությամբ բուզելային ամբարձիչի ներքին կայան դիտարկվում է հեծանվային երթուղու համար փողոցի կտրվածքում համապատասխան հեծանվային շավիղի նախատեսում: Մուտքային հատվածում, հուշարձանի հարևանությամբ ավտոկայանատեղի կազմակերպմամբ հիմնական զբոսաշրջային տրանսպորտային միջոցները կկայանեն և գյուղի ներքին կառուցվածքը զերծ կմնա մեքենաների հոսքից ակնկալվող բացասական ազդեցություններից՝ աղմուկ, արտանետումներ, վիբրացիա, և ներքին տեղաշարժերը հիմնականում կկազմակերպվեն նույն կայանատեղում կազմակերպված հեծանիվների վարձակալության կետից վարձակալված հեծանիվներով կամ ինքնազխտորներով:

2.12. Հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխությունը և կառուցապատման հերթականություն

Տարածքի հատակագծային կառուցվածքի կանոնակարգման, հեռանկարային զարգացման նպատակով կատարվել են մի շարք հողատեսքերի նպատակային նշանակության փոփոխություններ, որը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում (տես նաև նպատակային նշանակության փոփոխությունների ուրվագիծը):

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
<i>ԲԲ-1</i>	<i>այլ հողեր</i>	0.11	բնակելի կառուցապատում	0.11
<i>ԲԲ-2</i>	<i>այլ հողեր</i>	0.06	բնակելի կառուցապատում	0.06
<i>ԲԲ-3</i>	<i>այլ հողեր</i>	0.09	բնակելի կառուցապատում	0.09
<i>ԲԲ-4</i>	<i>այլ հողեր</i>	0.22	բնակելի կառուցապատում	0.22
<i>ԲԲ-5</i>	<i>այլ հողեր</i>	0.31	բնակելի կառուցապատում	0.31
<i>ԲԲ-6</i>	<i>այլ հողեր</i>	0.17	բնակելի կառուցապատում	0.17
<i>ԲԲ-7</i>	<i>այլ հողեր</i>	0.95	բնակելի կառուցապատում	0.95
<i>ԲԲ-8</i>	<i>այլ հողեր</i>	0.11	բնակելի կառուցապատում	0.11
<i>ԲԲ-9</i>	<i>այլ հողեր</i>	0.16	բնակելի կառուցապատում	0.16
<i>ԲԲ-10</i>	<i>այլ հողեր</i>	0.08	բնակելի կառուցապատում	0.08
<i>ԲԲ-11</i>	<i>այլ հողեր</i>	0.11	բնակելի կառուցապատում	0.11
Ընդհանուր		2.37		2.37
<i>ԲԲ-12</i>	բնակելի կառուցապատում	0.09	հասարակական կառուցապատման	0.09

<i>ԲԲ-13</i>	բնակելի կառուցապատում	0.22	հասարակական կառուցապատման	0.22
<i>ԲԲ-14</i>	բնակելի կառուցապատում	0.20	հասարակական կառուցապատման	0.20
Ընդհանուր		0.51		0.51
	Ջրային հողերից՝			
<i>ՋԲ-1</i>	հիդրոտեխնիկական	0.08	հասարակական կառուցապատման	0.08
Ընդհանուր		0.08		0.08
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
<i>ՀԷ-1</i>	պատմության և մշակույթի	2.30	կոմունալ ենթակառուցվածքների	2.3
<i>ՀԷ-2</i>	պատմության և մշակույթի	0.55	կոմունալ ենթակառուցվածքների	0.55
Ընդհանուր		2.85		2.85
	Բնակավայրերի հողերից՝			
			Հատուկ պահպանվող հողեր	
<i>ԲՀ-1</i>	բնակելի կառուցապատում	0.08	պատմության և մշակույթի	0.08
Ընդհանուր		0.08		0.08
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Անտառային հողեր	
<i>ԳԱ-1</i>	արոտ	12.84	անտառ	12.84
<i>ԳԱ-2</i>	արոտ	8.52	անտառ	8.52
<i>ԳԱ-3</i>	խոտհարք	35.69	անտառ	35.69
Ընդհանուր		57.05		57.05
Ընդհամենը առաջնաժամկետ				62.94
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
<i>ԳԲ-1</i>	վարելահող	0.76	խառը կառուցապատում	0.76
<i>ԳԲ-2</i>	վարելահող	3.04	խառը կառուցապատում	3.04
Ընդհանուր		3.80		3.80
<i>ԳԲ-3</i>	արոտ	0.67	խառը կառուցապատում	0.67
<i>ԳԲ-4</i>	արոտ	0.34	խառը կառուցապատում	0.34
Ընդհանուր		1.01		1.01
<i>ԳԲ-5</i>	վարելահող	0.37	հասարակական կառուցապատման	0.37
<i>ԳԲ-6</i>	վարելահող	0.85	հասարակական կառուցապատման	0.85

Ընդհանուր		1.22		1.22
ԳԲ-7	արոտ	0.20	հասարակական կառուցապատման	0.20
Ընդհանուր		0.20		0.20
ԳԲ-8	արոտ	1.14	ընդհանուր օգտ. կանաչ հողեր	1.14
Ընդհանուր		1.14		1.14
ԳԲ-9	վարելահող	0.08	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0.08
ԳԲ-10	վարելահող	0.47	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0.47
Ընդհանուր		0.55		0.55
ԳԲ-11	արոտ	0.30	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0.30
ԳԲ-12	արոտ	0.24	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0.24
Ընդհանուր		0.54		0.54
				Հատուկ պահպանվող հողեր
ԳՀ-1	վարելահող	0.32	հանգստի	0.32
Ընդհանուր		0.32		0.32
				Բնակավայրերի հողերից՝
ԲԲ-15	այլ հողեր	0.25	ընդհանուր օգտ. կանաչ հողեր	0.25
Ընդհանուր		0.25		0.25
Ընդհամենը միջնաժամկետ				9.03
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
			Գյուղատնտեսական նշանակության հողերից՝	
				Բնակավայրերի
ԳԲ-13	վարելահող	0.85	խառը կառուցապատում	0.85
ԳԲ-14	վարելահող	1.51	խառը կառուցապատում	1.51
Ընդհանուր		2.36		2.36
ԳԲ-15	վարելահող	0.35	հասարակական կառուցապատման	0.35
Ընդհանուր		0.35		0.35
ԳԲ-16	վարելահող	0.68	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0.68
Ընդհանուր		0.68		9.03
ԳԲ-17	վարելահող	0.10	ընդհանուր օգտ. կանաչ հողեր	0.10
ԳԲ-18	վարելահող	0.15	ընդհանուր օգտ. կանաչ հողեր	0.15
Ընդհանուր		0.25		0.25
				Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր
ԳԷ-1	վարելահող	1.43	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	1.43
Ընդհանուր		1.43		1.43

ԳԷ-2	վարելահող	2.56	Էներգետիկայի	2.56
Ընդհանուր		2.56		2.56
	<i>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր</i>			
			<i>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ. հողեր,</i>	
ԷՍ-1	կոմունալ ենթակառուցվածքների	0.14	արդյունաբերության	0.14
Ընդհանուր		0.14		0.14
Ընդհամենը հեռանկարային				16.12
Ընդամենը				88.09

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
Ցուցանիշը	Զավման միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային
1	2	3	4	5
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	4541.03	4541.03	4541.03
<i>Բնակավայրերի հողեր, որից՝</i>	հա	257.04	257.04	269.14
բնակելի կառուցապատման	հա	207.16	208.94	208.94
հասարակական կառուցապատման	հա	2.19	2.78	4.55
խառը կառուցապատման	հա		0.00	7.17
ընդհանուր օգտագործման,	հա	26.75	26.75	28.52
<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ</i>	հա		0.00	1.64
այլ տարածքներ	հա			
այլ հողեր	հա	20.94	18.57	18.32
<i>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝</i>	հա	15.88	15.88	16.02
արդյունաբերական օբյեկտների	հա	0.17	0.17	0.31
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	15.71	15.71	15.71
պահեստարանների	հա			
ընդերքի օգտագործման	հա			

<i>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝</i>	հա	0.42	3.27	7.12
Էներգետիկայի	հա	0.1	0.1	2.66
կապի	հա	0.1	0.1	0.1
տրանսպորտի	հա		0	0
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.22	3.07	4.36

<i>Հատուկ պահպանվող հողեր,</i>		7.78	5.01	5.33
բնապահպանական	հա			
հանգստի համար նախատեսված	հա		0	0.32
պատմական և մշակութային	հա	7.78	5.01	5.01
<i>Հատուկ նշանակության հողեր</i>	հա			
<i>Գյուղատնտեսական նշանակության հողեր,</i>	հա	4259.04	4201.99	4185.58
վարելահող	հա	1079.02	1079.02	1065.50
բազմամյա տնկարկներ	հա		0	0
խոտհարքներ	հա	910.0	874.3	874.31
արոտավայր	հա	1835.26	1813.90	1811.01
այլ հողատեսքեր	հա	434.76	434.76	434.76
<i>Անտառային հողեր</i>	հա	0.00	57.05	57.05
<i>Ջրային հողեր</i>	հա	0.87	0.79	0.79
գետեր	հա			
ջրամբարներ	հա			
լճեր	հա	0.49	0.49	0.49
ջրանցքներ	հա	0.3	0.3	0.3
հիդրոտեխ. և ջրունտ. այլ օբ.	հա	0.08	0	0

2.13. Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքներ

2.13.1. Ջրամատակարարում

Ըստ “Ջրային կոմիտե”-ի 12.10.2021թ. տրամադրած տեղեկատվության /գրություն N 01/08/4170-2021/ Կոտայքի մարզի Լեռնանիստ բնակավայրը չի սպասարկվում “Վեոլիա ջուր” ընկերության կողմից, իսկ գոյություն ունեցող գույքը հանդիսանում է համայնքային սեփականություն և “ՀՀ տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի հաճայան սպասարկվում ու շահագործվում է ՏԻՄ-ի կողմից:

Ըստ համայնքի տրամադրած տեղեկատվության ներկայումս բնակավայրի խմելու ջրի՝ մատակարարումն իրականացվում է բնակավայրի սահմաններում տեղակայված ՕԿԶ-ներից /կից ջրհորից է մղվում/: Թեև բնակավայրի տարածքում կան խմելու ջրի աղբյուրներ /թվով 3 հատ/, սակայն դրանք գտնվում են ցածր նիշերի վրա, հետևաբար հնարավոր չէ դրանց ինքնահոս տեղափոխումը ՕԿԶ:

Ջրամատակարարումն իրականացվում է ժամային գրաֆիկով, ջրամատակարարման ցանցերը կարիք ունեն վերանորոգման: Նախկինում բնակավայրի ջրամատակարարումն իրականացվել է Հրազդանն քաղաքից՝ պոմպակայանի միջոցով, հավաքվելով բնակավայրի տարածքում տեղակայված ՕԿՋ-ներում: Ներկաումն պոմպակայանը չի գործում, ՕԿՋ-ները ևս կարիք ունեն վերանորոգման:

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրերի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,
- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 150 լ/օր/մարդ : Սույն նորմն ընդգրկում է գյուղական բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը (150 լ/օր /ըստ ՇՆևԿ 2.04.02.84/):

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվել է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84): Հակահրդեհային պահանջարկի վերականգնումը՝ 72 ժամում :

Ստորև աղյուսակում տրված է Լեռնանիստ բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկա-րային բնակչության քանակը	Ջրասպառման նորմը	Ջրապահանջը				Ընդամենը
				խմելու-տնտեսական	Արտադրական (15%)	Հակահրդեհային կարիքներ	Հոսակորուստներ (30%)	
				լ/օր	լ/օր	մ ³ /օր	մ ³ /օր	
1	2	3	4	5	6	7	8	9
1	Լեռնանիստ	3495	150	524.3	78.6	162	157.3	922.2

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝

նախատեսելով նոր ՕԿՋ-ներ /անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար ճնշման կարագավորիչներ/, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով :

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_{կ}$ (կարգավորման), $W_{հհ}$ (հակահրդեհային), $W_{վթ}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{ընդ}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր բնակավայրում, ձևավորվում է այս երեք բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{ընդ}=W_{կ}+W_{հհ}+W_{վթ}$: Ստորև աղյուսակում տրված է միկրոոեգիոնում ներառված բնակավայրերի խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները.

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավորման ծավալ $W_{կ}$	Հակահրդեհային կարիքներ $W_{հհ}$	Վթարային ծավալ $W_{վթ}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{ընդ}$
		$մ^3$			
1	Լեռնանիստ	276.6	162	461.1	899.7

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող գրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրի տարածքում 2 հատ 450 $մ^3$ ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում պահանջվող նիշերի վրա :
- Խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:

- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.13.2. Ջրահեռացում

Կենցաղային և արտադրական կոյուղի

Բնակավայրը չունի կոյուղու համակարգ: Բնակչությունն օգտվում է բակային հորատի պարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել բնակավայրը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը) իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում:

Ստորև աղյուսակում տրված Լեռնանիստ բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն ու մաքրման կայանի հզորությունը

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակարային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ ³ /օր		
			Կոմունալ-կենցաղային	Արտադրական	Ընդամենը
1	2	3	5	7	9
1	Լեռնանիստ	3495	524.3	471.8	996.1

Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառունների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:



Նախագծային առաջարկություններ

- Բնակավայրի լրիվ կոյուղացում, կոյուղու ինքնահոս համակարգերի նախատեսում:
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու հոսքաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի

պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ $\text{ԹԿՊլրիվ}=6$ մգ/լ:

Բնակավայրի տարածքից հեռացման ենթակա հոսքաջրերի մաքրումն ապահովելու նպատակով սույն նախագծով նախատեսվում է բնակավայրի հյուսիսային հատվածում տեղադրել 1000 մ³/օր հզորությամբ կոյուղու մաքրման սարքավորում:

Մաքրման կայանի տեղադիրքը որոշվել է՝ հաշվի առնելով բնակավայրի տարածքի բնական թեքությունը և առանձնացնելով տարածք բնակավայրի հյուսիսային հատվածում՝ ռելիեֆի առավել ցածրադիր հատվածում, ապահովելու համար ինքնահոս եղանակով կեղտաջրերի հեռացում տարածքից: Որպես կոլեկտորի անցկացման տարածք առաջարկվել են գոյություն ունեցող գծային ենթակառուցվածքները՝ փողոցները, հնարավորինս զերծ մնալով բնակիչներին պատկանող հողամասերը այդ նպատակի համար ծառայեցնելու և հետագա շահագործումը ևս դյուրին դարձնելու համար:

Վերոնշյալ սարքավորումը բաղկացած է շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ուղղվել ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

Ոռոգում

Ըստ ՀՀ «Կոտայք» ջրօգտագործողների ընկերության տրամադրած տեղեկատվության

Լեռնանիստ համայնքին Հրազդան տեղամասը ոռոգման ջուր չի մատակարարել պոմպակայանի անսարք լինելու և ոռոգման ցանցի շարքից դուրս գալու պատճառով: Լեռնանիստ համայնքը ԶՕԸ-ի ստեղծման պահից ի վեր ԶՕԸ անդամ չի եղել:

Լեռնանիստ համայնքի ոռոգման ջրի աղբյուր է հանդիսանում Հրազդան-Սուլակ ջրանցքը: Ոռոգման ջուր հնարավոր է մատակարարել մեխանիկական եղանակով: Համայնքում ոռոգման ցանց գոյություն չունի:

Առաջարկվում է կառուցել պոմպակայան /ավագ, մղման խողովակաշար մոտ 6000 մ և ներտնտեսային ցանց/:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

Կաթիլային ոռոգման համակարգ


Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:



Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ: Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:



Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

Կաթիլային ոռոգման առավելությունները.

➤ Հողի օդափոխություն (քամահարում)

Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

➤ Արմատային համակարգ

Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներից բաղկացած առատ զանգվածի:

➤ Սնուցում

Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենարդյունավետ եղանակն է:

➤ Բույսերի պահպանություն

Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն վրասվում տերևներից:

➤ **Ազրույթխնուղոգիա**

Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.13.3. Էներգամատակարարում

2.13.3.1. Էլեկտրամատակարարում

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Ըստ «ՀԷՑ» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության /գրություն Դ.Գ. N6161-17.11.21/ Լեռնանիստ բնակավայրի էլեկտրամատակարարումն իրականացվում է բնակավայրի սահմաններում տեղակայված թվով 10՝ 10/0.4 կՎ լարման մեկ տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Ստորև աղյուսակում տրված է էլեկտրամատակարարման առկա համակարգերի տեխնիկական բնութագրերը .

Էլեկտրամատակարարման առկա համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10/0.4 ենթակայաններ			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը
	Անվանում	Լարումը ԿՎ	Հզոր- նը ԿՎԱ	Տեղա կայման- վայրը	Առկա տրանս- ֆորմա- տորների քանակը	Հզորութ- յունները ԿՎԱ	Տեղակայման վայրը	
Լեռնանիստ	ՏԷ-5727	0.4	250/10	Լեռնանիստ	1	250/10	Լեռնանիստ	430567
	ՏԷ-5728	0.4	400/10	Լեռնանիստ	1	400/10	Լեռնանիստ	473297
	ՏԷ-5729	0.4	400/10	Լեռնանիստ	1	400/10	Լեռնանիստ	372403
	ՏԷ-5730	0.4	250/10	Լեռնանիստ	1	250/10	Լեռնանիստ	294978
	ՏԷ-5776	0.4	63/10	Լեռնանիստ	1	63/10	Լեռնանիստ	Նոր տեղադրված 27964
	ՏԷ-5789	0.4	16/10	Լեռնանիստ	1	16/10	Լեռնանիստ	22043
	ՏԷ-4987	0.4	16/10	Լեռնանիստ	1	16/10	Լեռնանիստ	12103
	ՏԷ-7401	0.4	160/10	Լեռնանիստ	1	160/10	Լեռնանիստ	13586
	ՏԷ-2998	0.4	160/10	Լեռնանիստ	1	160/10	Լեռնանիստ	14345
	ՏԷ-3004	0.4	250/10	Լեռնանիստ	1	250/10	Լեռնանիստ	

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ համայնքներում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկարային բնակչության քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. էներգիայի քանակը (կվտ.ժամ /տարի)	Էլ. էներգիայի գումարային ծախսը (հազ. կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջվող առավելագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանսֆորմատորային ընդհանուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ.	Արտադր. 15 %	Կորուստ 30 %			
1	Լեռնանիստ	3495	950	3320.3	498.0	996.1	4100	1024.3	1965

Տրանսֆորմատորային հզորությունների առկա և պահանջվող առավելագույն հզորությունների համեմատությունից երևում է, որ բնակավայրն ունի բավարար պահուստային հզորություններ՝ էլեկտրաէներգիայի հեռանկարային պահանջարկը բավարարելու համար:

2.13.3.2. Գազամատակարարում

Ըստ “Գազաբեռնարմենիա” ՓԲԸ-ի 04.10.2021 թ. N 02/18.1/2553 գրությամբ տրամադրված տեղեկատվության Լեռնանիստ բնակավայրը գրեթե ամբողջովին գազաֆիկացված է /մոտ 90 տոկոս/:

Բնակավայրի Վարչական տարածքով անցնում է “Գազաբեռնարմենիա” ՓԲԸ-ի “Տրանսգազ” ՍՊԸ-ի կողմից շահագործվող Ղազախ-Երևան ըստ=700 մմ տրամագծով բարձր ճնշման գազատարը:

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:



Բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ,

N	Բնակավայրի անվանումը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի տվյալները				ԳԲԿ-ի տեղակայման վայրը	Գազաֆիկացման աստիճանը	Գկկ, ՊԳԿ-ների քանակը	Բաժանորդների քանակը	Գազասպաման տարեկան քանակը 2020թ. դրությամբ
		Ճնշումը մթն	Վերգետնյա կմ	Ստորգետնյա կմ	Տրամագիծը մմ					
1	Լեռնանիստ	0.6	3.365	2.55	76-159	Առկա է	90.9	3	564	537 000

Ջերմամատակարարում

Բնակավայրի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում է ինչպես գազի վառանների, այնպես էլ էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Բնակչության որոշակի մասն էլ ջեռուցման նպատակով օգտագործում է փայտի կամ աթարի վառարաններ:

Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել:

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օգափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է Լեռնանիստ բնակավայրի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված ցուցանիշը¹⁴

N	Բնակավայրը	Հեռանկարային բնակչությունը	Գազի հեռանկարային տարեկան պահանջարկը հազ. մ ³
1	Լեռնանիստ	3495	769

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, բնակավայրի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 800 հազար մ³:

Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերագինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:

¹⁴ Խոշորացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպամման պահանջը

➤ Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:

➤ Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:

➤ Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:

➤ Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:

➤ Բնակավայրերի վարչական, հասարակական, կրթական, առողջապահական, արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական տների ջեռուցումը նախատեսվում է ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:

➤ Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:

➤ Ըստ ՀՀ Կառավարության 16.07.2015թ. N787-Ն որոշման մայրուղային գազատարի անվտանգության գոտին սահմանազատվում է խողովակաշարի երկու կողմով՝ առանցքից 30 մ հեռավորությամբ, ինչպես նաև ՀՀ Կառավարության 08.11.2007թ. N1438-Ն որոշման համաձայն՝ $D_{\text{գազ}}=700$ մմ տրամագծով մայրուղային գազատարից նվազագույն հեռավորությունը /բնակավայրերի համար/ կազմում է 200 մ:

➤ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.13.3.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետություն արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Սույն թվականի նոյեմբերի մեկի դրությամբ ցանցին է միացված մինչև 500 կՎտ հզորության 1640 արևային ինքնավար կայաններ՝ ընդհանուր 25.9 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Ներկա զարգացման տեմպերը թույլ են տալիս կանխատեսելու, որ մինչև 2023 թվականը օրենքով սահմանված սահմանափակումների ուժի մեջ մտնելը դրանց ընդհանուր դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններից, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

2.13.4. Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային կայան ապահովում են՝ UCOM, ՄՏՍ Հայաստան և Տելեկոմ Արմենիա ՓԲ ընկերությունները: Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզի տարածքում հեռարձակվում են Հ1, Հ2, «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՑԱՅԳ» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում:

ԳԼՈՒԽ 3 ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

3.0. Մթնոլորտային օդի պահպանություն

Հեռանկարում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում գյուղմթերքների արտադրության ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և ջեռուցման համակարգեր:

Ներկա դրությամբ, օդային ավազանի վիճակով տարածքը գնահատվում է բարենպաստ, անտրոպոգեն ազդեցությամբ գերիշխում են հիմնականում թույլ ազդեցության գոտիները, հիգիենիկ վիճակով՝ օդային ավազանի աղտոտվածությունը որևէ վտանգ չի հարուցում:

Լեռնանիստ գյուղական համայնքում, հեռանկարում նախատեսվում է զարգացնել գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրությունները, այգեգործությունը, բանջարաբուծությունը, անասնապահությունը, դաշտավարությունը:

Հեռանկարում ջեռուցումն ամբողջությամբ իրականացվելու է բնական գազով:

Ջեռուցման համակարգերի վնասակար արտանետումների գերակայությունների ցանկը բերված է 1.1 աղյուսակում:

Լեռնանիստ գյուղական համայնքի մթնոլորտում գերակայող վնասակար արտանետումների ցանկը

Աղյուսակ 1.1

№№ ը/հ	Անվանումը	Արտանետումների տարեկան քանակը, տ	Վտանգավորության դասը
1	2	3	4
1	Ածխածնի օքսիդ	0.77	4
2	Ազոտի օքսիդներ	1.8	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	2.57	

Գյուղի բնակչության աճին համապատասխան ավելանում է նաև ավտոտրանսպորտը, որի արտանետումների քանակները բերված են 1.2 աղյուսակում:

Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումները մթնոլորտ

Աղյուսակ 1.2

Անվանումը	Աղտոտող նյութերը, տ/տարի			
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	Ածխաջրա- ծիններ	Ընդամենը
1. Մարդատար	345.1	20.2	34.2	399.5
2. Ավտոբուսներ	22.8	1	4.3	28.1
3. Բեռնատար	36.1	3.9	10.8	50.8
Ընդամենը	404	25.1	49.3	478.4

Գյուղի օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրների և տնտեսությանը հասցված տնտեսական վնասի քանակական բնութագրերը բերված են 1.3 աղյուսակում:

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և տնտեսությանը հասցված տնտեսական վնասները

Աղյուսակ 1.3

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1	2	3

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1. Ջեռուցման համակարգեր, անհատական կաթսայատներ	<u>2.57</u> 0.5	23.5
2. Ավտոտրանսպորտ	<u>478.4</u> 99.5	12978.9
Ընդամենը	<u>480.97</u> 100	13002.4

Լեռնանիստ գյուղի սննդի արդյունաբերական ձեռնարկությունները V դասի են, և վնասական արտանետումներ մթնոլորտ չեն արտանետում:

Ջեռուցման համակարգերից մթնոլորտ են արտանետվում տարեկան 2.57 տ վնասակար նյութեր:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 99.5 %-ը:

Ավտոտրանսպորտի արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը գտնվում է 1-ին տեղում՝ տարեկան ~ 12.9 մլն դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը բոլոր արտանետումներից կազմում է տարեկան ~ 13 մլն դրամ:

3.1. Մթնոլորտային օդի աղտոտվածության կանխատեսվող մակարդակները

Հեռանկարում գյուղի սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգահեռ, ավելանում են նաև մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրները՝ ավտոտրանսպորտ, ջեռուցման վառարաններ:

Օդային ավազանի վրա սպասվելիք բեռնվածության որոշման համար կատարված է մթնոլորտային օդի աղտոտվածության երկարաժամկետ կանխատեսում համաձայն /14/:

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 2.1-ում:

Վնասակար նյութերի մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաներ

Աղյուսակ 2.1

Անվանումը	Մերձգետնյա կոնցենտրացիաները ՍԹԿ միավոր միջոցառումներից առաջ և հետո		
	Ջեռուցման համակարգեր	Ավտո-տրանսպորտ	Ջեռուցման համակարգեր, ավտոտրանսպորտ
1	2	3	4
1. Ածխածնի օքսիդ	<u>0.32</u> 0.3	<u>0.41</u> 0.45	<u>0.73</u> 0.75
2. Ազոտի օքսիդներ	<u>0.008</u> 0.0085	<u>0.035</u> 0.036	<u>0.043</u> 0.045

Ինչպես երևում է 2.1 աղյուսակից, ջեռուցման համակարգերից և ավտոտրանսպորտից արտանետումների աղտոտվածության մակարդակները չեն գերազանցում սահմանված նորմերը:

Գլխավոր հատակագծի ուրվագծում նախատեսված են մի շարք միջոցառումներ կաթսայատների և ավտոտրանսպորտի արտանետումների նվազեցման համար:

3.2. Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ

Առաջնահերթ օդապահպանական նպատակներով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

1. գյուղատնտեսական ձեռնարկությունների ներդրմանը զուգընթաց տեխնոլոգիական հոսքագծերի և սանիտարա-տեխնիկական արդիականացումը,
 - մթնոլորտի աղտոտվածության դիտարկման և վերահսկման համակարգի կատարելագործումը,
2. Ավտոտրանսպորտի համար
 - լավացնել ճանապարհների ծածկույթը,
 - ավտոմեքենաների տեխնիկական վիճակի, ինչպես նաև ծխագազերի չեզոքացման մուտքերի վրա վերահսկման ուժեղացում և վառելանյութի որակի վերահսկում,
 - ավտոճանապարհների եզրագծով իրականացնել լրացուցիչ կանաչապատում ավտոտրանսպորտի արտանետումների վնասակար ազդեցության նվազեցման համար: Արտանետումների քանակը նվազում է 40-50%-ով:
3. Զեռուցման համակարգերի համար
 - Հասարակական շինությունների համար նախատեսել ժամանակակից կաթսայատներ, բարձր ՕԳԳ-ով, գազի այրման լավացված ռեժիմով, ինչը կնպաստի վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների նվազեցմանը:

3.3. Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է 4.1 աղյուսակում:

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Աղյուսակ 4.1

Անվանումը	Գնահատականը		Տարածքի համալիր գնահատականը	Աղտոտման մակերեսը գյուղի տարածքում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով		
1 Գոտի	Թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	4541.03

Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի հարուցում: Տարածքի համալիր գնահատականը մնում է բարենպաստ:

3.4. Մակերևութային ջրերի պահպանություն

Լեռնանիստ գյուղական համայնքում ջրի ծախսը կազմում է 437 մ³/օր, 159505 մ³/տահջ: Ինչպես ներկայումս, այնպես էլ հեռանկարում մակերևութային ջրերի աղտոտվածության վրա նկատելի ազդեցություն կգործեն՝

- Լեռնանիստ համայնքի գյուղատնտեսական և այլ առևտրային կազմակերպությունները: Կոյուղու համակարգի շահագործման արդյունքում գյուղի տնտեսակենցաղային կոյուղու

ցանց թափվող կենցաղային և արտադրական հոսքաջրերի քանակը կկազմի՝ 305.9 մ³/օր, 111.6 հազ. մ³/տարի: Լեռնանիստի անձրևաջրերը կազմում են 9367.6 հազ. մ³/տարի:

Առանց ջրապահպան միջոցառումների ներդրման, հեռանկարում տնտեսությանը հասցված վնասը կզնահատվի 1056.9 մլն դրամ, այդ թվում՝

- տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի արտահոսքից՝ 1047.7 մլն.դրամ,
- անձրևաջրերի արտահոսքից – 9.2 մլն դրամ:

Մակերևութային ջրերի պահպանությանն ուղղված միջոցառումների ցանկում որոշիչ տեղ է պատկանում մաքրման կայանի կառուցմանը: Մաքրման կայանի տեղադիրքը որոշվել է՝ հաշվի առնելով բնակավայրի տարածքի բնական թեքությունը և առանձնացնելով տարածք բնակավայրի հյուսիսային հատվածում՝ ռելիեֆի առավել ցածրադիր հատվածում, ապահովելու համար ինքնահոս եղանակով կեղտաջրերի հեռացում տարածքից: Որպես կոլեկտորի անցկացման տարածք առաջարկվել են գոյություն ունեցող զծային ենթակառուցվածքները՝ փողոցները, հնարավորինս զերծ մնալով բնակիչներին պատկանող հողամասերը այդ նպատակի համար ծառայեցնելու և հետագա շահագործումը ևս դյուրին դարձնելու համար:

3.5. Զրային պաշարների պահպանական միջոցառումների վերաբերյալ հիմնական որոշումները

1. Զրամատակարարման ցանցի վերակառուցումը և հոսակորուստների կրճատումը: СНиП 2.04.02-81 Водоснабжение наружных сетей и сооружений:
2. Զրամատակարարման համակարգի կենտրոնացումը մեկ ջրատարով՝ կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացման համար:
3. Կոյուղու ցանցի կառուցումը և հոսակորուստների կրճատումը:
4. Բնակչությանը 24 ժամ ջրամատակարարումով, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելքն ապահովելու համար, անհրաժեշտ է տեղադրել 2x150մ³ ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարներ:

3.6. Թափոնների կառավարում

3.6.1. Աղբավայրեր

Գյուղում մշտական աղբահանություն չի եղել: Այդ խնդրին մեծ ուշադրություն է դարձվել համայնքի կողմից և ներկայում վիճակը բավարար է: Աղբահանությունն իրականացվում է բացառապես համայնքի միջոցներով, առանց բնակիչներից գանձումներ կատարելու: Աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից (Հրազդան համայնք (<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ) :

Համայնքում կատարվում են աղբահանության աշխատանքներ, որի շնորհիվ ապահովված է համայնքի մաքրությունը:

Համայնքում իրականացված աղբահանության ծավալը՝ տարեկան կտրվածքով՝ մոտ 1350 մ³, աղբամանների թիվը՝ 15, աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը՝ (շաբաթվա ընթացքում):¹⁵

Կենցաղային աղբը կուտակվում է համայնքի տարածքում հավասարաչափ տեղադրված աղբարկղերի մեջ: Կուտակված աղբը ամեն օր սահմանված գրաֆիկով աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է համայնքի սահմաններից դուրս գտնվող բացօթյա աղբավայր և պարբերաբար ծածկվում է հողի շերտով:

Կոտայքի Հրազդան համայնքում մեկնարկվել են սանիտարական աղբավայրի շինարարական աշխատանքները:

Աղբավայրը կառուցվում է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակում, այն առաջինն է:

¹⁵ <http://kotayk.mtad.am/files/docs/44808.pdf>

Նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին ու ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայր՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, այդ թվում՝ հողի, ստորգետնյա ջրերի և օդի աղտոտվածության բացառման համար նախատեսված ենթակառուցվածքներով, ինչպես նաև ադմինիստրատիվ շենքերով ու ճանապարհային ուղիներով:

Կոտայքի Ակունք և Գեղարքունիքի Մարտունի համայնքներում կկառուցվեն աղբի փոխաբեռնման կայաններ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն €11 մլն է, որից €5.5 մլն-ը վարկային միջոց է, €5.5 մլն-ը՝ դրամաշնորհ: Ծինարարությունը նախատեսվում է ավարտել 2022 թվականին:

Կոտայք-Գեղարքունիքի ենթահամակարգում կիրառված կոշտ կենցաղային թափոնների կառավարման ողջ արտադրական շղթայի ուղղահայաց ինտեգրված մոտեցումը, երբ աղբահանությունից մինչև աղբի տեղափոխումն, աղբավայրում տեղադրումն ու աղբավայրի շահագործումն իրականացվում է մեկ ընկերության կողմից կարող է կիրառելի չլինել մյուս ենթահամակարգերի համար: Ելնելով տեղական առանձնահատկություններից և ծախսերի արդյունավետության պահանջներից, ԿԿԹԿ գործընթացի տարբեր ենթագործընթացներ կարող են ապահովվել տարբեր ընկերությունների կողմից: Ընդ որում, պարտադիր պայման չէ, որ ենթահամակարգի բոլոր համայնքների աղբահանությունն իրականացնի միևնույն օպերատորը:

Հայաստանի Հանրապետության 2017-2036 թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) գերակա նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին (այսուհետ միասին՝ բաժանորդներ): ԿԿԹԿ հանրապետական համակարգը ներառելու է միմյանցից անկախ գործող, բայց միևնույն պահանջներին ու սկզբունքներին բավարարող ԿԿԹԿ տարածաշրջանային ենթահամակարգեր: Համակարգի ինտեգրվածությունը ենթադրում է թափոնների կառավարման (հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման, իսկ հետագայում նաև վերամշակման) տեխնոլոգիաների և կառավարման համակարգի համադրություն, որը գործելու է ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական կայուն հենքի վրա:

Միևնույն ժամանակ նախատեսվում է փակել մարզի բոլոր բնակավայրերի աղբավայրերը և ներդնել ինտեգրված աղբահանության համակարգ:

3.6.2. Կենցաղային թափոններ

Մինչև [] տարածաշրջանային [] սանիտարական [] աղբավայրի [] կառուցումը [] Հրազդան քաղաքում, [] բնակավայրի կենցաղային թափոնները հեռացվելու են [] Լեռնանիստ գյուղական համայնքի համար նախատեսված վայր:

Բնակչության աճի հետ մեկտեղ կավելանա նաև կենցաղային կոշտ թափոնների քանակը:

Հեռանկարում ԿԿԹ-ների քանակը կկազմի տարեկան 699 տ:

Թափոնների կազմը բերված է աղյուսակ 6.1.1-ում:

ԿԿԹ-ների կազմը և տարեկան քանակները

Աղյուսակ 6.1.1

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Ապակի	3.5	24.5
Մետաղ	1.9	13.3
Պլաստիկ շերտ	3.7	25.9
Այլ պլաստիկ իրեր	4.5	31.5

Թուղթ	4	27.9
Այլ թափոններ	82.4	575.9
Ընդամենը՝	100	699

Արդյունաբերական թափոնները բացակայում են:

Շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության մեղմացման և կանխարգելման համար անհրաժեշտ է՝

- կենցաղային թափոնների տեղափոխման շարժական և տեխնիկական սարքավորումների նորացում,
- աղբավայրում աղբի հարթեցման և հողով ծածկման աշխատանքների պարբերաբար իրականացում:

Նախատեսվում է ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիկի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարումե ծրագրի շրջանակներում նախատեղծվում է ՀՀ Կոտայքի մարզի բոլոր բնակավայրերում առաջացած թափոններ հավաքել և տեղափոխել Հրազդանում կառուցվող նոր սանիտարական աղբավայր:

3.7. Հողերի պահպանություն

Հեռանկարում հողի աղտոտման հիմնական աղբյուրներ կմնան ավտոտրանսպորտի գազային մթնոլորտային արտանետումները և կենցաղային թափոնների աղբավայրերը:

Համաձայն գյուղական համայնքի զարգացման տեմպերի, հեռանկարում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, գյուղի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման միջոցառումների շարքը:

3.8. Աղմուկի մակարդակի գնահատում

Հեռանկարում հնարավոր է բեռնատար և մարդատար անձնական օգտագործման մեքենաներին կգումարվեն եվս ավտոբուսներ: Բնակչության թվաքանակի աճի համապատասխան կաճի նաև ավտոտրանսպորտի քանակը և շարժման ինտենսիվությունը, հասնելով ժամում 50 ավտոմեքենայի:

Լեռնանիստ գյուղական համայնքի ճանապարհները մնալու են տեղական նշանակության:

Ճանապարհների համար ձայնի էկվիվալենտ մակարդակը որոշվում է՝ էջ 45 թիվ 23 գրաֆիկի միջոցով /12, 13/:

Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով երթևեկելի մասի եզրից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 40 դԲԱ, 45-55 դԲԱ նորմայի պարագայում:

3.9. Կանաչապատում

Լեռնանիստ գյուղական համայնքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուց-վածքային ստորաբաժանման ստեղծում գյուղապետարանում;
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը;
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում;

- բոլոր տիպի հասարակական կառույցների տարածքների կանաչապատում և բարեկարգում;
- կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների, խախտված լանդշաֆտով հողակտորների և սանիտարական գոտիների տարածքների մաքրում, վերականգնում, կանաչապատում:

Լեռնանիստ գյուղական համայնքի կանաչ զանգվածների ընդլայնման հեռանկարային ցուցանիշները բերված են աղյուսակ 9.1-ում:

Կանաչ զանգվածների ընդլայնման հեռանկարը

Աղյուսակ 9.1

h/h	Կանաչ զանգվածների ֆունկցիանալ նմանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված		
		մակերեսը, հա	այդ թվում նորաստեղծ, հա	մ ² /մարդ
1	Ընդհանուր օգտագործման	4.194	4.194	12.0
2	Սահմանափակ օգտագործման	1910.43	-	5466.18
	ԸՆԴԱՄԵՆԸ	1914.624	4.194	5478.18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Որպես եզրակացություն տրված է Լեռնանիստ գյուղական համայնքի էկոլոգիական ցուցանիշների ամփոփիչ աղյուսակը, ինչպես ներկա իրավիճակում. այնպես էլ հեռանկարում:

Լեռնանիստ գյուղի էկոլոգիական ցուցանիշներ

NN ը/ն	Ցուցանիշներ	Չափման միավոր	Ցուցանիշներ	
			Ներկա իրավիճակը	Հեռանկար
1	2	3	4	5
1	Տարածքը ընդամենը, այդ թվում բնակավայրի հողեր	հա հա	4541.03 257.04	4541.03 257.04
2	Բնակչության թվաքանակը, բնակչության խտությունը	հազ. մարդ <u>հազ. մարդ</u> կմ ²	3.177 0.07	3.495 0.077
3	Ինժեներային ապահովվածություն Ջրօգտագործում (ընդհ), այդ թվում՝ ստորգետնյա աղբյուրներ արտադրական կարիքների համար	հազ. մ ³ /օր	0.182	0.437
4	Կոյուղի Ջրահեռացման ծավալը	հազ. մ ³ /օր	0.133	0.306
5	Բնական գազի ծախսը	<u>մլն.մ³</u> տարի	0.54	0.77
6	Հեռացվել են հոսքաջրեր, այդ թվում՝ - տնտեսակենցաղային կոյուղու ցանցով (ջրահեռացման հորեր) - արտադրական կոյուղու ցանցով - անձրևային կոյուղու ցանցով	հազ.մ ³ /տ հազ.մ ³ /տ հազ.մ ³ /տ հազ.մ ³ /տ	 48.6 - 9367.6	 111.6 - 9367.6
7	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասները - հոսքաջրերի արտահոսք - անձրևաջրեր	<u>մլն.դրամ</u> տարի <u>մլն.դրամ</u> տարի <u>մլն.դրամ</u> տարի	 1.2 9.2	 1047.7 9.2

Օդ				
8	Ջեռուցման համակարգերից արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը, այդ թվում՝ Կոշտ, այդ թվում՝ Կախյալ մասնիկներ Գազանման, այդ թվում՝ Ծծմբային անհիդրիդ Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ Այլ արտանետումները	տ/տարի տ/տարի տ/տարի տ/տարի տ/տարի տ/տարի տ/տարի	4.014 1.06 1.06 2.954 0.064 1.37 1.52 -	2.57 - - 2.57 - 0.77 1.8 -

9	Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը, այդ թվում՝	տ/տարի	434.8	478.4
	Ածխածնի օքսիդ	տ/տարի	367.2	404
	Ածխաջրածիններ	տ/տարի	44.8	49.3
	Ազոտի օքսիդներ	տ/տարի	22.8	25.1
10	Ջեռուցման համակարգի արտանետումներից գյուղի օդային ավազանի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված վնասը	հազ.դրամ տարի	65.416	23.5
11	Նույնը ավտոտրանսպորտի արտանետումներից	հազ.դրամ տարի	11799.0	12978.9
	Հողեր և թափոններ			
12	Տարածքի կանաչապատում	հա	1910.43	1914.624
13	Գյուղի ընդհանուր տարածքից կանաչապատման %-ը	%	42	42.16
14	Մեկ մարդուն ընկնող կանաչապատ տարածքը	մ ² /մարդ	6013.31	5478.18
15	Գյուղի սանիտարական մաքրումը՝ թափոնների հավաքումը և տեղափոխումը	տ/տարի	635.4	699
	Աղմուկը նորման բնակելի գոտում	դԲԱ	45-55	45-55
	Աղմուկը փողոցում	դԲԱ	36	40

3.10. Գերեզմանատներ

Համայնքում տեղակայված է 2 գերեզմանոց՝ ընդհանուր 2.8 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են: Սանիտարապաշտպանիչ գոտիները պահպանված են մասնակի: Ուստի անհրաժեշտ է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները, մասնավորապես գերազմանոցի պարագծով նախատեսելով ցանկապատում, պաշտպանիչ ծառատնկումներ:

Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է 300 մ, ինչպես նաև հաշվի է առած ՀՀ կառավարության նոյեմբերի 23-ի «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» 2006 թվականի N1910-ն որոշման հավելված 4-ի 7-րդ կետը:

3.11. Նախագծի այլընտրանքը

Որպես այլընտրանք կարելի է ընդունել զրոյական տարբերակը, երբ բնակավայրի որևէ զարգացում չի նախատեսվում, սակայն այն լավագույնը չէ, նման տարբերակը ոչինչ չի տալիս ազդակիր համայնքին:

Նախագիծը չունի այլընտրանք, քանի որ բնակավայրի զարգացումը՝ նախատեսված մեղմացուցիչ միջոցառումների կիրառման դեպքում շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն չի ունենա:

3.12. Շրջակա միջավայրի մշտադիտարկումների պլան

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանոնակարգելու նպատակով մշակվում է մոնիթորինգի պլան, որի միջոցով հնարավոր է ժամանակին և հավաստի տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա եղած բոլոր ազդեցությունների վերաբերյալ և ժամանակին կարգավորել՝ սահմանափակել դրանք:

Մթնոլորտային օդի որակի գնահատման մշտադիտարկումների համար նախատեսվող սարքավորումների տեղադրման վայրերի որոշմանը մեծապես օժանդակում են եղանակային պայմանները, տոպոգրաֆիան:

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումները պետք է իրականացվեն բավարար հաճախականությամբ, իսկ դրանց արդյունքները ենթարկվեն ստուգման:

Ստացված արդյունքները պետք է լինեն հասանելի հանրության լայն շերտերի համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ընդգրկում է՝

- մթնոլորտային օդի կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- հողային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- ջրային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազ.դրամ:

Ներածություն

Լեռնանիստ գյուղի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքի համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման, տարածքների սեյսմիկ խոցելիության նվազեցման (բնակարանային ֆոնդի, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեյսմակայունության ապահովում) համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Համայնքում ընդհանուր նշանակության օբյեկտների (հանրային, վարչական, հասարակական, ուսումնական կառույցներ) նախատեսվում է իրականացնել սեյսմակայունության հաշվառումով: Բնակարանային ֆոնդի նոր հատվածը ևս իրականացված է սեյսմակայունության պահանջների հաշվառմամբ, համեմատաբար հին բնակելի ֆոնդի համար պետք է իրականացնել աստիճանական ամրացման աշխատանքներ կամ առավել բարձր սեյսմակայունությամբ կառույցների վերափոխմամբ:

Համայնքի տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, բնական և տեխանիկ վտանգավոր երևույթներից պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների, ՀՀ բնական և տեխանիկ վտանգավոր երևույթներից (այդ թվում՝ երկրաշարժից) տարածքների պաշտպանությանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի 'Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին' N 138-Ն որոշմամբ սահմանված ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրով նախատեսված միջոցառումների 2.1.4., 3.3.1., 3.3.2., 3.3.5., 3.12 կետերի, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորման ապահովմանը:

Քաղաքացիական պաշտպանության կարևորագույն միջոցառումներից է բնակչության պատասպարումը հակաճառագայթային թաքստոցներում և ապաստարաններում: Պարզեցված գլխավոր հատակագծում ներկայացված ապաստարանների անհրաժեշտ ծավալները պետք է ապահովվեն և դրանք պահվեն պատրաստ վիճակում՝ օգտագործելու առաջին իսկ անհրաժեշտության դեպքում:

4.1. Ընդհանուր բնութագիրը

Համայնքը Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհով կապված է Սևան-Երևան քաղաքների, իսկ միջհամայնքային ճանապարհով՝ համայնքային կենտրոնի հետ: Ըստ էության գյուղը որոշակիորեն գտնվում է փակուղային վիճակում: Գյուղի բնակչությունը՝ 3.177 հազ. մարդ:

Գյուղի տարածքում է գտնվում Լեռնանիստի հանրակրթական դպրոցը, որի նախագծային տարողությունը կազմում է 360 տեղ:

Համայնքը կոյուղացված չէ, ապահովված է էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերով:

4.2. Բնական վտանգավոր երևույթները

Հետազոտվող տարածքում և դրա շրջակայքում վտանգավոր բնական երևույթներից տարածված են քամիները, հորդառատ անձրևները, կարկուտները, որոնք բավական մեծ վնաս են պատճառում քաղաքի տնտեսությանը և ռեկրեացիոն համալիրին:

Հետազոտվող տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները պարզ են, ներկայացված են հրաբխային սարավանդով, կտրտված մի քանի ձորակներով:

Դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական պրոցեսներով, որոնք տեղի են ունեցել սկսած Էոցենից մինչև Ժամանակակից դարաշրջանը ներառյալ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևույթային համատարած լվացումով մակերևույթային տեղումներով, հեղեղատներով, ձորակային էրոզիայով:

Տարերային արտակարգ իրավիճակներից խուսափելու, ինչպես նաև հնարավոր ԱԻ հետևանքները մեղմացնելու նպատակով անհրաժեշտ է՝

- համայնքի համար կառուցել կենցաղային, կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան և ապահովել դրա արդյունավետ աշխատանքը,
- մաքրել և մշտական պատրաստ վիճակում պահպանել համայնքի սելավատարը,
- համայնքի տարածքի շինարարական ու տնտեսական այլ նպատակներով յուրացման դեպքում խստագույնս հետևել շինարարական նորմերի և կանոնների պահպանմանը:

4.3. Տեխնաժին վտանգներ

Բնակավայրում տեխնաժին արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում՝

- կոմունալ և կենցաղային գազատարները,
- քաղաքի խմելու ջրագծերը, էներգամատակարարման գծերը և կոյուղագծերը. Տեխնաժին արտակարգ իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է՝
- ապահովել ավտոտրանսպորտով թունավոր, հրդեհապայթյունավտանգ նյութերի տեղափոխման անվտանգությունը.
- ապահովել կենցաղային, կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի արդյունավետ աշխատանքը.
- ապահովել կոմունալ, կենցաղային գազատարների, խմելու ջրագծերի կոյուղագծերի, էներգամատակարարման գծերի, ճանապարհների անխափան աշխատանքը՝ ժամանակին կատարելով դրանց պլանային նախազգուշական վերանորոգման պրոֆիլակտիկ աշխատանքները.

- բենզա-գազալիցքավորման կայանները տեղակայել գործող նորմերի համաձայն.
- արտակարգ իրավիճակներում բնակավայրի բնակչության նվազագույն կարիքները բավարարելու նպատակով ստեղծել սննդամթերքի և խմելու ջրի պահուստային պաշարներ.
- կարգի բերել բնակչության պաշտպանության համար նախատեսված ապաստարանները և կառուցել նորերն ըստ գոյություն ունեցող նորմերի.
- բարձրացնել էլեկտրաէներգետիկ համակարգերի հուսալիությունը բացառելով բնակչության էլեկտրամատակարարման երկարատև անջատումները.
- բնակարանների գազով տաքացման համար օգտագործել այնպիսի վառարաններ, որոնք ունեն գազի այրման արգասիքների երաշխավորված հեռացման հնարավորություն:

4.4. Նախագծի հիմնական դրույթները

Բնակչության թվաքանակը 3.177 հազար մարդ, տարածքը՝ 257.04 հա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թաղամասը՝ համաձայն ՀՀՇՆ 20-04- «Երկրաշարժադիմացկուն շինարարության շինարարական նորմերի» գտնվում է ՀՀ տարածքի հանավնական սեյսմիկ վտանգի 2-րդ գոտում (համապատասխանում է գրուտնտների սպասվելիք արագաուժների 0.4 g արժեքին), նախատեսվում են վտանգավոր օբյեկտների, բնակելի շենքերի և բնակչության կենսապահովման օբյեկտների պաշտպանության, ինչպես նաև շենքերի և շինությունների խոցելիության նվազեցման ուղղված միջոցառումներ՝

- սեյսմիկ խոցելիության նվազեցման՝ ֆինանսավորմամբ ապահովված միջնաժամկետ ծախսային ծրագրերի (տիպային բնակելի, դպրոցների, առողջապահական հիմնարկների և այլ շենքերի) մշակում ու իրականացում, որը ներառի վտանգի մակարդակին համապատասխան շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացումը, ենթակառուցվածքների ու կենսապահովման գծերի սեյսմիկ խոցելիության նվազեցումը, արդյունավետ հողօգտագործումը.
 - տարածքի խոցելիության նվազեցում՝ գոյություն ունեցող շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման, քաղաքաշինական նորմերի հիման վրա նոր սեյսմակայուն շինարարության, սողանքավտանգ և նստվածքավտանգ տեղամասերի արդյունավետ պաշտպանական ինժեներական կառուցվածքների ստեղծման միջոցով,
 - սեյսմիկ վտանգի կանխատեսումից մինչև սեյսմակայուն շինարարություն և բնակչության նախապատրաստում, նոր տեխնոլոգիաների ներդրում, ինչը հնարավոր կլինի օգտագործել պետության գործունեության բոլոր մնացած ոլորտներում.
- արտակարգ իրավիճակներում տարածքի ռացիոնալ օգտագործման և կենսագործունեության կայունության բարձրացման նպատակով նախատեսել տարբեր ֆունկցիոնալ գոտիներ և համայնքի տրանսպորտային ցանցի մանրամասն լուծումներ.
- մայրուղային փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, ընդունել նվազագույնը 9.0 մ, որպեսզի շենքերի և կառույցների փլուզման դեպքում ապահովվի փրկարարական ստորաբաժանումների մոտեցումը.
- ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դնել թաղամասի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խաղաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում.
- ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, համատեղված է խմելու և հակահրդեհային ծախսերը մեկ ջրատարով:

4.5. Համայնքի հակաճառագայթային թաքստոցները և ապաստարանները

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

ա) ստորգետնյա հատուկ շինություններ՝ ապաստարաններ, թաքստոցներ (հակաճառագայթային, պարզագույն, նկուղներ, կիսանկուղներ, խորացված տարածքներ,).

բ) բնակելի ֆոնդի տարածքներ (առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես հակաճառագայթային թաքստոցներ, նկուղներ, կիսանկուղներ):

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղորդ շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Պաշտպանական կառույցների համակարգը, որն ապաստարանների և թաքստոցների ամբողջություն է, կախված պաշտպանական կառույցների տեղակայման վայրից և նշանակությունից, ապահովում է բնակչության պատսպարումը՝

ա) ապաստարաններում՝

բ) նկուղային և այլ խորացված տարածքներում, հանքախորշերում, պատսպարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում՝ մնացած բնակչությանը:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով, որի ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից և պաշտպանական կառույցները պատսպարվողների ընդունման համար ժամանակին պատրաստականության բերումը:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող ապաստարաններ և հակաճառագայթային թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

արագ կառուցվող ապաստարաններ,

արագ կառուցվող թաքստոցներ,

պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող ապաստարանները և թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են արտակարգ իրավիճակների ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղորդ մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարահանման պլաններին:

4.6. Բնակչության ազդարարումը և իրազեկումը

Համայնքում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունվում են՝

ա) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը,

բ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը, ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Համայնքում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչության ազդարարումն իրականացնում են՝

ա) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը,

բ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի ծառայությունը:

Համայնքում բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք ու կարճալիք, ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

Ազդանշանը տրվում է շչակների միջոցով, 3 րոպե անընդմեջ տևողությամբ: Բնակչության հետագա գործողությունների վրեպերյալ հաղորդագրությունները տրվում են հեռուստատեսությամբ և ռադիոյով: Անհրաժեշտության դեպքում ազդարարման գործընթացին մասնակցում են նաև ոստիկանության շարժական ուժերն ու միջոցները:

4.7. Համայնքի բնակչության պատսպարումը

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարումը պետք է իրականացվի հետևյալ պաշտպանական կառույցներում՝

- ստորգետնյա հատուկ շինություններում՝ ապաստարաններում, նկուղիներում, կիսանկուղիներում, խորացված տարածքներում.

- բնակելի ֆոնդի տարածքներում՝ առաջին հարկի տարածքներում հարմարեցված որպես ապաստարաններ.

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

- պաշտպանական կառույցների վաղօրոք կառուցումը.

- պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում.

- պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

- արագ կառուցվող ապաստարանների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ.

- արտակարգ իրավիճակներում քաղաքի կենսագործունեությունն ապահովող հաստատությունների ապաստարաններում պատսպարվում են նշված հաստատությունների աշխատակիցները:

- նկուղային և այլ խորացված տարածքներում, պատասպարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում պատասպարվում է մնացած բնակչությունը:

Բնակչությանն ապաստարաններով ապահովման հաշվարկ (բնակչության հեռանկարային 3 812 թվաքանակի դեպքում)

N	Բնակչության խմբերը	Ներկա ժամանակահատվածում		Հաշվարկային ժամանակահատվածում	
		Թվաքանակը (հազ. մարդ)	Ենթակա են պատասպարման (հազ. մարդ)	Թվաքանակը (հազ. մարդ)	Ենթակա են պատասպարման (հազ. մարդ)
1	2	3	4	5	6
1.	Աշխատավայրում գտնվող բնակիչներ	1.048	0.944	1.258	1.132
2.	Տանը գտնվող չաշխատող բնակիչներ	0.731	0.658	0.877	0.789
3.	Ուսման վայրում գտնվող ուսանողներ, դպրոցական երեխաներ	0.508	0.457	0.610	0.549
4.	Տնային պայմաններում գտնվող ուսանողներ, դպրոցականներ, նախադպրոցական երեխաներ	0.890	0.801	1.067	0.961
Ընդամենը՝		3.177	2.859	3.812	3.431

Ապաստարանների մակերեսների հաշվարկ՝ ըստ խմբերի

N	Բնակչության խմբերը	Ներկա ժամանակահատվածում		Հաշվարկային ժամանակահատվածում	
		Բնակչության թվաքանակը	Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ ²	Բնակչության թվաքանակը	Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ ²
1	2	3	4	5	6
1	Նախադպրոցական տարիքի երեխաներ՝ իրենց խնամակալների հետ	635	762	762	915
2	Քաղաքի մնացած բնակչությունը	2542	1906	3050	2287
Ընդամենը		3177	2669	3812	3202

Ծանոթագրություն՝

- անհրաժեշտ ծավալով ապաստարանների ընդհանուր մակերեսը հաշվարկվել է գործող նորմերի համաձայն: Նախատեսվող մակերեսների չափերում, հաշվի են առնվել նաև սանհիդրարական, պահեստային և այլնի համար նախատեսվող անհրաժեշտ օժանդակ մակերեսները:

4.8. Բնակչության տարահանումը

Համայնքում տարահանում կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

ա) ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից,

բ) Տարերային, տեխնաձին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում:

4.8.1. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները

Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով, երկաթուղային շարժակազմերով և ջրային տրանսպորտով:

Առանձին դեպքերում տարահանման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների հատկացումն ու վառելիքաքսուքային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տարերային, տեխնաձին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարահանման մասին որոշում ընդունում են հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները՝ իրենց համակարգի աշխատողների համար, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար և կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար: Նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք: Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

Տարահանման հանձնաժողովները նախապես որոշում և տարահանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարահանումն իրականացնող մարմինների, տարահանման և ընդունման հավաքակայանների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակության կետերի գտնվելու վայրի մասին:

Տարահանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարահանման պլաններով, որոնք ներառում են՝

1) բնակչության տարահանման անցկացման կարգն ու ժամկետները, տարահանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարահանման երթուղին.

2) տարահանման և ընդունման հավաքակայաններում աշխատանքների կազմակերպումը.

3) տարահանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարահանման երթուղիների.

4) ընդունող բնակավայրերում տարահանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը.

5) նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բնակչության տարահանման պլանները մշակում են տարահանման համապատասխան հանձնաժողովները՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ:

Տարահանման հավաքակայաններն ստեղծվում են հանրակրթական և հասարակական կազմակերպությունների տարածքներում, ապահովվում կապի միջոցներով, բուժապասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով: Տարահանման երթուղիները ճշգրտվում են տարահանման հավաքակայաններում:

Բնակչության տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակայաններից, որտեղ տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարահանվողները:

4.8.2. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը

Համայնքի բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով (ԱՊՄ) ապահովման գործում առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

ա) համայնքի դպրոցի բազայի վրա ստեղծել ամբողջ բնակչությանն կայուն յոդի պատրաստուկի և ԱՊՄ բաշխման կետ,

բ) կազմակերպել պաշտպանության հասարակ միջոցների, բամբակյա-թանգիֆային (մարլյա) շնչադիմակների պատրաստում՝ 3-5 վիրակապեր մեկ մարդու հաշվարկով:

4.8.3. Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկ ծանուցում

Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) բաշխումն իրականացվում է ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի թիվ 679 որոշման համաձայն՝ երկրորդ հերթին: ԱՊՄ բաշխումը իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

Պատերազմի ժամանակ ԱՊՄ բաշխումն իրականացվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլաններին համապատասխան:

4.8.4. Արտակարգ իրավիճակների դեպքում համայնքի կառավարման կազմակերպումը

Աղետի սպառնալիքի կամ առաջացման վտանգի դեպքում կառավարումն իրականացվում է քաղաքի կառավարման կետից (քաղաքապետի աշխատասենյակ) և Տավուշի մարզային փրկարարական վարչությունից:

Օպերատիվ խումբը ժ+45 րոպեի ընթացքում զբաղեցնում է հիմնական կառավարման կետը և ժ+60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն:

Մարզային փրկարարական վարչության անձնակազմը Ժ+45 րոպեի ընթացքում ժամանում է և Ժ+60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն և անահրաժեշտ փրկարարական աշխատանքներ:

Աղետի սպառնալիքի կամ առաջացման դեպքում քաղաքի կառավարումը կազմակերպվում է Արագածոտնի մարզպետի կողմից և իրականացվում է կառավարման հիմնական կետից: Անհրաժեշտության դեպքում կառավարումն իրականացվում է պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

4.9. Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

Իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջարման ռիսկը նվազագույնի հասցնելուն, իսկ դրա առաջարման պարագայում՝ մարդկանց առողջության պահպանմանը, շրջական բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական ըորուստների չափերի նվազեցմանը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

- ա) բնակավայրերի, գործառական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտևորման նախագծերում վտանգավոր կազմակերպությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից.
- ա) կենսապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը,
- բ) արտակարգ իրավիճակների կանխումն ու հնարավոր հետևանքների նվազեցումը,
- գ) հրդեհային անվտանգության բարձրացումը:

4.10. Հրդեհային անվտանգություն

Բնակավայրը պետք է ապահովված լինի հրդեհային պահպանությամբ, հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին շինություններին հերող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների:
Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի՝ պետության պարտավորակաժ լիազորություններն են՝

1. հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

2. հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելն ու օգնելը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են՝

1. հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում,

2. հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը,

3. հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը,

4. հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Համայնքին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներն են.

ա) Կազմակերպությունների, շենքերի, շինությունների, բաց պահեստների, ինչպես նաև շենքերին կից հակահրդեհային միջտարածությունները պետք է ժամանակին մաքրվեն հրդեհավտանգ թափոններից,

բ) Շենքերի, շինությունների միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկային կայանման, շենքերի, շինությունների կառուցման համար,

գ) Շենքերի, շինությունների, բաց պահեստների հարդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների, անշարժ հրդեհային սանդուղքների, հրդեհային գույքի մոտեցման ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն: Վերակառուցման նպատակով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

դ) Ժամանակավոր շինությունները, կրպակները, տաղավարները պետք է տեղադրվեն շենքերից և շինություններից 15 մետրից ոչ պակաս հեռավորության վրա կամ հակահրդեհային պատի մոտ (բացառությամբ իրավական ակտերով սահմանված պահանջվող՝ ավելի մեծ հակահրդեհային միջտարածության): Առանձին բլոկոնտեյներային շենքերը թույլատրվում է տեղադրել խմբերով, յուրաքանչյուր բլոկում 10-ից ոչ ավելի կոնտեյներ, որոնց գումարային մակերեսը չպետք է գերազանցի 800 մ²: Այդ շենքերի խմբերից մինչև շինությունները, առևտրական տաղավարները և օբյեկտները հեռավորությունը չպետք է լինի 15 մ-ից պակաս:

ե) Հակահրդեհային միջտարածություններում արգելվում է կրակ վառելու միջոցով թափոններ ոչնչացնել: Թափոնների ոչնչացումը կատարվում է հատուկ հարմարեցված վայրում:

զ) Հակահրդեհային ջրաղբյուրները, շենքերի և շինությունների մուտքերը արագ ի հայտ բերելու նպատակով, օբյեկտների այդ տարածքները պետք է ապահովված լինեն լուսավորությամբ:

է) Բնակելի տների, ամառանոցային ավանների, հասարակական շենքերի տարածքի չհսկվող հրապարակներում, բակերում չի թույլատրվում պահել դյուրավառ հեղուկներ և գազեր:

ը) Ամառային ամիսների կայուն չոր, շոգ և քամոտ եղանակի պայմաններում բնակավայրում, կազմակերպությունում, ամառանոցային ավաններում խարույկների վառումը, հրդեհավտանգ աշխատանքների իրականացումը կարող է ժամանակավորապես դադարեցվել:

թ) Հրդեհի դեպքում հրշեջ պահպանությանը հաղորդելու համար համայնքը և առանձին տեղաբաշխված օբյեկտները պետք է ունենան սարքին հեռախոսային, ռադիո կամ կապի այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ 5

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ

Գոտևորման նախագիծը բնակավայրի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է բնակավայրի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտենսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

5.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը

Գոտևորման նախագիծը հիմնվում է 'ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև' սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատրության հետևյալ ձևերը՝

- թույլատրվում է
- չի թույլատրվում

Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

5.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝

- Բնակավայրի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:

- Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

- Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

5.4. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր

Սահմաններ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծում առանձնացված գոտիավորման տարածքի սահմաններին: Տարածքի ընդհանուր մակերեսը հա:

5.5. Գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները

Նախագծվող գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

Եթե գոտևորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտիավորման շրջանի սահմանը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում և կիսում է ինչ որ մի առանձին տիրույթ, ապա գոտևորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության նշումով:

5.6. Գոտևորման նախագծի կազմը

Գոտևորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը:

Նախագիծը ներառում է

Գործառական գոտևորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները:

Ծավալարարածական գոտևորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառմամբ:

Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները

Հողերը գոտևորված են ըստ հիմնական և օժանդակ գոտիների

Հիմնական գոտիներ*

Հիմնական է համարվում հողերի գոտևորումը ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներակառուցական և այլ բնույթի սահմանափակումների:

Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ հիմնական գոտի:

Տարածաշրջանի գոտևորման տարածքում ըստ նպատակային նշանակության առանձնացված են հետևյալ հիմնական գոտիները.

Բնակավայրերի հողեր,

Գյուղատնտեսական հողեր,

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր,

Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,

Հատուկ պահպանվող տարածքների հողեր,

Հատուկ նշանակության հողեր:

Օժանդակ գոտիներ¹⁶

Օժանդակ է համարվում հողամասերի գոտիավորումը՝ ըստ գործառական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների:

5.7. Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ

Ստորև տրված են հողերի օժանդակ գոտիավորումը և թույլատրելի օգտագործման ձևերը¹⁷

16 Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05.05.98 թ., վավերացված ՀՀ նախագահի կողմից 26.05.98 թ., Գլուխ VI, հոդված 14 :

17 **Օսանդություն.** *Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեցող գոտիների (համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, հասարակական կենտրոնի, քաղաքային մուտքի ազդեցության տարածման) առաջադրած պահանջների, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման (բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների և այլն), տարբեր տիպի կառուցապատումների, հաղորդակցության ուղիների, դրանց կառուցվածքների և ինժեներական ենթակառուցվածքների ազդեցության, սանապահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ (ծածկող գոտիներ):*

Գործառնական գոտու անվանումը	Թույլատրելի օգտագործման ձևերը
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ	
Գյուղատնտեսական գոտի	
Վարելահողեր Բազմամյա տնկարկներ (Խաղողի այգի, Պտղատու այգի) Խոտհարքներ Արոտավայրեր	Հիմնական օգտագործման ձևեր՝ Գյուղատնտեսական գործունեություն Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ՀՀ բոլոր համայնքներում՝ կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N498 որոշման 2-րդ կետի ա ենթակետում նշված համայնքներում՝ մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի և մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, ընդ որում, միայն այն հողամասերի վրա, որոնց մակերեսը առնվազն մեկ հեկտար է:
Այլ հողատեսքեր	Չի սահմանվում
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	

Բնակելի կառուցապատման գոտի	
Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) ԲՆԿԳ-1/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, քոթեջներ.
Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի) ԲՆԿԳ-1/2	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ ² ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մինչև 200 մ ² ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, մինչև 30 տեղ ունեցող հյուրանոցներ և հյուրատներ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, փոքր հզորության անհատական կաթսայատներ մինչև 5ՀԿ(ժամ), մսուր- մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով): սեփական օգտագործման և անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանմամբ, տնամերձ հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների բուծման համար շինություններ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի, բլոկացված տների դեպքում՝ ոչ ավելին քան 1 մեքենայի համար),

<p>Ամառանոցային (այգեգործական) կառուցապատման գոտի ԲՆԿԳ-2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, ամառանոցներ, քոթեջներ,</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 30 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ:</p> <p>Մեփական հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելի քան 2 մեքենայի,</p>
<p>Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-3</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ Բազմաբնակարան բնակելի շենքեր</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝</p>
<p>Բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-4</p>	<p>Նախադպրոցական հաստատություններ, Մանրածախ առևտրի կետեր, խանութներ, Սրճարաններ, ռեստորաններ, Գրասենյակային տարածքներ, Ատամնաբուժական կենտրոններ, Ավտոտնակներ, ավտոկայանատեղեր, Կանաչ տարածքներ, պուրակներ, Մանկական խաղահրապարակներ, Սպորտային հարթակներ</p>
<p>Հասարակական կառուցապատման գոտի</p>	
<p>Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ վարչական, ֆինանսական, փոստի,</p>

<p>Վարչական օբյեկտների գոտի ՀԿԳ-1/1 Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/2 Կրթական գոտի ՀԿԳ-1/3 Բուժական հաստատությունների գոտի ՀԿԳ-1/4 Սպորտային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/5</p>	<p>կապի, կրթական, գիտահետազոտական. նախադպրոցական, բուժական, սպորտային, մշակութային և կրոնական հաստատություններ, ուստիկանության տեղամասեր, հրշեջ ծառայություններ, գրասենյակային տարածքներ</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ, բառեր, պանդոկներ, խորտկարաններ: մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ:</p>
<p>Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի ՀԿԳ-2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, հյուրատներ, հյուրանոցատիպ քոթեջային համալիրներ, գյուղական տներ հասարակական սննդի օբյեկտներ, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ, հանրային բաղնիքներ, սաունաներ, զուգարաններ, աղբարկղների տեղադրման հարթակներ</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ</p>
<p>Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի ՀԿԳ-3</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ բենզալցակայաններ, գազալիցքավորման կետեր, ավտոտեխսպասարկման կետեր,</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, զուգարաններ</p>
<p>Խառը կառուցապատման գոտի</p>	

<p>Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, արտադրական) ԽԿԳ-1</p> <p>Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.) ԽԿԳ-2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ Բնակելի, գրասենյակային, առևտրի և սպասարկման, մասնավոր ուսումնական և նախադպրոցական մակերեսներով բազմաֆունկցիոնալ շենքեր, կիրականօրյա դպրոցներ, բուժական կաբինետներ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, spa- ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ, հանրային սննդի օբյեկտներ:</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ, տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, փոքր ճարտարապետական ձևեր, փակ լողավազաններ, տաղավարներ, կրպակներ:</p>
<p>Ընդհանուր օգտագործման գոտի</p>	
<p>Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ ԸՕԳ-1</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ Ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր:</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի ստորգետնյա գծեր, Ստորգետնյա ավտոկայանատեղեր</p>

<p>Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ ԸՕԳ-2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ այգեպուրակային կանաչ տարածքներ, վերջիններիս բնորոշ խաղաձևերի սրահներ, ջրավազաններ, խաղահրապարակներ, բացօթյա սպորտի- և բեմա- հարթակներ, բացօթյա սրճարաններ, հրաձգարաններ, տաղավարներ, զրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր:</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, զուգարաններ.</p>
<p>Այլ հողեր</p>	
<p>Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր</p>	<p>Չի սահմանվում</p>
<p>ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</p>	
<p>Արդյունաբերական օբյեկտների գոտի</p>	
<p>Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի ԱԳ-1/2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ արդյունաբերական համալիրներ, գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քրթեջային տիպի բնակելի տներ, մանրածախ առևտրի կետեր, տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, հանրային սննդի կետեր</p>
<p>Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի</p>	
<p>Անասնապահական օբյեկտներ Ա-2/1</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ,</p>
<p>Սպանդանոցներ Ա-2/2</p>	<p>թռչնաբուծարաններ,</p>
<p>Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր Ա-2/3</p>	<p>ձկնաբուծական ֆերմաներ անասնագոմեր, սպանդանոցներ ջերմոցներ</p>
<p>Ջերմոցներ Ա-2/4</p>	

<p>Չկնարուծարաններ Ա-2/5</p>	<p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ, ցանկապատներ, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:</p>
<p>Պահեստարանների գոտի Ա-3</p>	
<p>Ընդերք օգտագործման գոտի Ա-4</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ ընդերք օգտագործման տարածքներ, հումքի վերամշակման արտադրամասեր, արտադրական այլ շենքեր և շինություններ պահեստային տարածքներ</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, պահակակետեր, անցակետեր:</p>
<p>ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ</p>	

<p>Էներգետիկայի օբյեկտների գոտի Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի ԷՆԲԳ- 1/1</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային, հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր տրանսֆորմատորային ենթակայաններ օդային և մալուխային գծեր</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական շենքեր, ավտոկայանատեղեր, պահեստային տարածքներ, պահակակետեր և անցակետեր, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ,</p> <p>(*): Բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծերի համար էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի չի առանձնացվում, դրանք կարող են անցկացվել մի շարք գործառնական գոտիներով (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր օգտագործման, ռեզերվային, պահուստային և այլ՝ պահպանելով նորմատիվային հեռավորությունները բնակելի թաղամասերից, կրթական օբյեկտներից, պատմության և մշակույթի հուշարձաններից և այլն)</p>
<p>Գազամատակարարման օբյեկտների գոտի ԷՆԲԳ- 1/2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), բարձր ճնշման գազատար խողովակաշար գազի ստորգետնյա պահեստարաններ</p>
<p>Կապի օբյեկտների գոտի ԷՆԹԳ-2</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, բջիջային կապի աշտարակներ</p>
<p>Տրանսպորտի օբյեկտների գոտի ԷՆԹԳ- 3</p>	<p>Հիմնական օգտագործման ձևեր՝ պետական ավտոմայրուղիներ ճանապարհը սպասարկող օբյեկտներ, ավտոկայանատեղեր, կամուրջներ, թունելներ, երկաթգիծ և երկաթգծի կայարաններ քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ, այլ ենթակառուցվածք,</p> <p>Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ազատ տնտեսական գոտիներ, օդանավակայաններին, կայարաններին կից հյուրանոցներ, Գրասենյակային և պահեստային տարածքներ</p>
<p>Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի</p>	

